ԳՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան 2022

Այս աշխատությունը հրատարակության են երաշխավորել Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհուրդները:

ՀՏԴ 316:63
ԳՄԴ 60.5+4
Գ 680

Հրատարակիչ՝
Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ
Երևան 0002, Մոսկովյան փող. 31.76/1
Հրատարակչի ներկայացուցիչներ՝
Ֆելիքս Հեթ, ՖԷՀ
Լիանա Բաղալյան, ՖԷՀ

Հեղինակներ՝
Հարություն Վերմիշյան
Արամ Վարտիկյան
Էմիլ Գևորգյան
Սրբուհի Միչիկյան
Անժելա Ղալամդարյան

Խմբագիր՝ Ալա Խառատյան
Ձևավորում և էջադրում՝ Ampop Media
Կազմի նկար՝ Organization by Arshile Gorky, 1933-36. Oil on canvas. 50 x 59 13/16 in. (127 x 152 cm). National Gallery of Art, Washington, D.C., Ailsa Mellon Bruce Fund (1979.13.3)

Գ 680 ԳՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ / Հ. Վերմիշյան, Ա. Վարտիկյան, Է. Գևորգյան, Ս. Միչիկյան, Ա. Ղալամդարյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2022. -155 էջ:

Այս հրատարակության մեջ ներկայացված տեսակետները, կարծիքներն ու եզրակացությունները կարող են չարտացոլել Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի տեսակետները: Գրքում տեղ գտած տվյալների ճշգրտության համար պատասխանատու են հեղինակները:

ՀՏԴ 316:63
ԳՄԴ 60.5+4

ISBN 978-9939-1-1480- 4
© Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2022
© Հեղինակների խումբ, 2022

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Այս հետազոտությունը իրականացվել է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ և համագործակցությամբ, Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի ու Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոնոմիական ֆակուլտետի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում:

Հետազոտական թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում ուսումնասիրության նախագծման գործընթացում փորձագիտական խորհրդատվություն տրամադրած մասնագետներ Գառնիկ Պետրոսյանին, Իռա Փանոսյանին, Մարինե Մարկոսյանին, Վարդան Ալեքսանյանին, Նարինե Սոլոմոնյանին և Հրաչյա Ծպնեցյանին: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Տաթևիկ Սողոմոնյանին դաշտային աշխատանքները համակարգելու և ՀԱԱՀ ուսանողներ Մերի Գյուլումյանին, Ռայա Խոջոյանին, Արմեն Սոլոմոնյանին, Նոնա Հակոբյանին, Լուիզա Գևորգյանին և Անի Ալավերդյանին՝ դաշտային աշխատանքներն իրականացնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 13

Հիմնախնդրի սահմանումը 14

Հետազոտության տեսական շրջանակը 17

Հետազոտության մեթոդաբանությունը 19

ՄԱՍ 1. ԳՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ 25

Տնտեսական համատեքստը 27

Էկոլոգիական համատեքստը 35

Սոցիալ-իրավական համատեքստը 39

Համայնքների խոշորացման համատեքստը 48

ՄԱՍ 2. ԳՅՈՒՂՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ ԱՅՍՕՐ 50

Կենսական պայմանները և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքները 51

Սոցիալական ներառումն ու մասնակցությունը 67

Տեղի հետ կապվածությունն ու միգրացիան 81

Գյուղի հեռանկար/ները 94

ՄԱՍ 3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 106

Գյուղատնտեսական ներգրավվածության ձևերն ու պրակտիկաները 107

Գյուղատնտեսական գործունեության խոչընդոտներն ու սահմանափակումները 121

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 134

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 146

ՀԱՎԵԼՎԱԾ 152

Ստանդարտացված հարցազրույցի հարցաթերթ

Որակական հարցազրույցի հարցաշար

Փորձագիտական հարցազրույցի հարցաշար

Տեղեկատվական թերթիկ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ներկայում Հայաստանի բնակչության ավելի քան 1/3-ը բնակվում է գյուղական բնակավայրերում, սակայն վերջին տարիներին այս ցուցանիշը նվազման միտում ունի: Չնայած գյուղի լուրջ խնդիրներին՝ այսօր հասարակական-քաղաքական բանավեճերում բացակայում է գյուղական կյանքի, դրա առանձնահատկությունների, խնդիրների ու հնարավորությունների վերհանման անհրաժեշտությունը և կարևորությունը:

Դրա վկայությունն է որոշակի տերմինաբանական խառնաշփոթը, անորոշությունը հետխորհրդային շրջանի օրենսդրական կարգավորումներում, պետական վիճակագրությունում, ինչպես նաև տեղական ու միջազգային կազմակերպությունների տեքստերում, որոնցում միաժամանակ կիրառական են *գյուղացիներ, ֆերմերներ, ագարակատերեր, գյուղացիական տնտեսություններ, տնտեսվարողներ* և նմանօրինակ մի շարք այլ փոխադարձ վերադրվող ձևակերպումներ:

Հարկ է նկատել, որ գյուղատնտեսության ոլորտում ներգրավված անհատները և գյուղական համայնքներում բնակվող ընտանիքները մեծամասամբ ինքնազբաղ են, ձևական իրավահարաբերությունների և կարգավորումների, քաղաքականությունների սուբյեկտ չեն և չեն օգտվում նույնիսկ աշխատանքային օրենսգրքով սահմանվող պետական սոցիալական երաշխիքներից:

Ռիսկերը մեծ են նաև գյուղաբնակների սոցիալական ապահովության ոլորտում.

2020թ. ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԿԱ Է

10.000
բնակչի հաշվով

100.000
բնակչի հաշվով

48.6 Բժիշկ
խոցելի մարզերը՝
Արմավիր (14,9) և Սյունիք (18)

43.4 Հիվանդանոցային մահճակալ

6.5 Շտապ օգնության մեքենա

Համայնքների խոշորացման համատեքստում նախատեսվում է, որ 5,000-ից ավել բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայրի բաժին կընկնի ընդամենը մեկ սոցիալական աշխատող:

Հայաստանում գյուղականության արդի ճգնաժամը հատկապես պայմանավորված է գյուղատնտեսական գործունեության գրավչության պակասով, ցածր եկամտաբերությամբ, բարձր ռիսկայնությամբ, գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների բացակայությամբ, ՏԻՄ մարմինների նկատմամբ անվստահությամբ և փոխհամագործակցային թույլ կապերով:

Գյուղականությունը դիտարկելով համայնական կապերի ու դրանց պատմական պայմանավորվածության, տնտեսվարման և կեցության ձևերի, աշխարհագրական և սիմվոլիկ կառուցվածքների մակարդակներում՝ սույն հետազոտության նպատակն է ախտորոշել Հայաստանում գյուղականության ճգնաժամն ու ուրվագծել առկա խնդիրների լուծումները:

Առաջադրված հետազոտական խնդիրները լուծելու նպատակով կիրառվել են հետազոտական նախագծին համապատասխանող *երկրորդային տվյալների և փաստաթղթերի վերլուծության, ստանդարտացված, նարատիվ ու փորձագիտական հարցազրույցների մեթոդները*: Հետազոտությունն իրականացվել է 2021 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում:

Հայաստանյան գյուղատնտեսական ոլորտին առնչվող հետազոտություններն ու փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսությունն առանցքային դերակատարություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: Այդուհանդերձ,

- Փոքր և մասնատված հողակտորների, տեղեկատվության, գիտելիքի ու ռեսուրսների պակասի, ժամանակակից տեխնոլոգիաների, տեխնիկայի ու անհրաժեշտ ենթակառուցվածքի բացակայության, գյուղմթերք վերամշակող կազմակերպությունների սակավաթիվ լինելու, ինչպես նաև գյուղմթերքի ցածր ու անկանոն մատակարարումների ու ոչ ֆորմալ տնտեսվարողների առկայությամբ պայմանավորված Հայաստանում գյուղատնտեսության արտադրության ծավալները մնում են փոքր, իսկ պարենամթերքի ինքնաբավության մակարդակը՝ ցածր:
- Հայաստանի գյուղատնտեսությունը բնորոշվում է հողային և ջրային ռեսուրսների սակավությամբ ու անարդյունավետ օգտագործմամբ: Էկոլոգիական

հիմնախնդիրների պատճառը բուսաբուծության և անասնաբուծության ոլորտում տիրող ոչ կայուն գործելակերպն է: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ավելի խոցելի է դառնում Հայաստանյան գյուղատնտեսությունը:

• Գյուղատնտեսության բնագավառին բնորոշ է գիտության, քաղաքականության և գյուղատնտեսական պրակտիկ գործունեության կապի խզումը, ինչպես նաև ագրարային խորհրդատվական համակարգի բացակայությունը:

• Պետական ներդրումների հիմնական մասը բանկերի ու մասնավոր ընկերությունների միջոցով ուղղվում է հատկապես մի քանի տասնյակ միջին և խոշոր հողատերերի ձևավորմանը և արդի գյուղատնտեսական տեխնոլոգիաներով դրանց (վերա)զինմանը:

• Սակավ կարողություններ և ռեսուրսներ ունեցող գյուղատնտեսությամբ զբաղվողները և նրանց ընտանիքները հիմնականում դուրս են մնում աջակցության ծրագրերից: Չնայած գյուղական վայրերում պետական և միջազգային ծրագրերի միջոցով տարեկան մի քանի հարյուր միլիարդ դրամի հասնող ներդրումներ են իրականացվում, սակայն դրանք չեն նպաստում աղքատության ցուցանիշների նվազմանն ու պարենային անվտանգության խնդիրների լուծմանը:

• Դեռևս բացակայում է «Գյուղատնտեսության մասին օրենքը», որը միտված կլիներ գյուղատնտեսությամբ զբաղվողին կամ գյուղական տնտեսությանը վերաբերող իրավական կարգավորումների ու սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների ստեղծմանը, ինչպես նաև ագրոպարենային համակարգի տարբեր դերակատարների միջև փոխհարաբերությունների համապարփակ կարգավորմանն ու գյուղական բնակավայրերում կայուն և ներառական քաղաքականության իրականացմանը:

Ինստիտուցիոնալ խնդիրների կողքին կենտրոնական են նաև գյուղի սոցիալ-տնտեսական և մշակութային խնդիրները: Գյուղաբնակների շրջանում իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայաստանյան գյուղաբնակների մոտ կեսն է գյուղատնտեսական նշանակության հողերն օգտագործում հողագործական նպատակներով, ընդ որում՝ որքան ավելի բարեկեցիկ է գյուղացին, այնքան ավելի շատ է հողատարածքներն օգտագործում հողագործական նպատակներով:

Եթե գյուղաբնակները հիմնականում կարողանում են հոգալ այգիների և տնամերձ հողերին առնչվող անհրաժեշտ ծախսերը, ապա առավել դժվարանում են ապահովել բաց հողատարածքներին ու ջերմոցներին առնվչող ծախսերը:

Գյուղատնտեսական արտադրության ծավալների հետ կապված պատկերը ևս լավ չէ: Եթե բնակիչների գրեթե կեսի մոտ բուսաբուծությունից ստացվող գյուղատնտեսական

արտադրանքի ծավալը վերջին 1-2 տարիների ընթացքում չի փոխվել, ապա յուրաքանչյուր 3-րդ տնտեսություն նվազեցրել է ծավալը: Միևնույն ժամանակ անասնապահական արտադրանքի իրացման խնդիրներ ունեն անասնապահների համարյա կեսը:

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնական ուղին տեղում և մոտակա շուկայում վաճառքն է անմիջական գնորդներին և/կամ վերավաճառողներին: Ինչ վերաբերում է արտադրանքի պահեստավորման հնարավորություններին, ապա դրանից զուրկ է գյուղատնտեսների մեծամասնությունը: Նման իրավիճակը սպառնում է անկանխատեսելի կորուստներով, երբ իրացման ուշացման և այլ խնդիրների դեպքում արտադրանքը կարժեզրկվի:

Անասնապահությամբ զբաղվող հարցվածների կեսից ավելին կենդանիների մորթ է իրականացնում, իսկ նրանց ճնշող մեծամասնությունը կենդանիների մորթը հիմնականում իրականացնում է սեփական տարածքում՝ առանց լրացուցիչ ծախս ենթադրող հատուկ սանիտարահիգիենիկ պայմանների: Չնայած մորթի պայմանների ռիսկայնությանն ու հնարավոր բացասական հետևանքների վտանգին՝ հարցվողների մեծամասնությունը բավարարված է կենդանիների մորթի հարմարություններով:

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման պայմանագիր ունեն գյուղաբնակների ընդամենը 1/10-ը, որը այլ հավասար պայմաններում մեծացնում է համապատասխան տնտեսվարման անորոշությունն ու ռիսկայնությունը: Գյուղացին իր գործունեության համար գրեթե կայուն, իրավական երաշխիքներ չունի:

Հարկ է նկատել, որ բացասական գնահատականների ֆոնին գյուղատնտեսությամբ բավարարվածության պատկերը դրական է. գյուղաբնակների մեծ մասը բավարարված է գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալներից:

Ընդհանուր առմամբ այսօրվա գյուղացին մինչ այժմ չգիտի՝ ինչ անել հողի և այլ գյուղատնտեսական հնարավոր ակտիվների հետ: Պարտվելով պսևդոլիբերալ մրցակցությանը՝ գյուղացին պահանջում է ազգայնացնել գյուղատնտեսական ռեսուրսները: Գյուղաբնակները մեծամասամբ կողմ են գյուղատնտեսության մեջ պետական սեփականության ավելացմանը: Ակնհայտ է հզոր, անպայման պետական իշխանավորի կարծես անցյալում մնացած հայր-պետության հասարակական պատվերը, որն առաջին հերթին կլուծի հենց սոցիալական արդարության խնդիրը: Ինչպես և սպասելի է, որքան աղքատ և/ կամ տարեց է գյուղացին, այնքան հակված է ուժեղ գյուղապետեր պահանջելու, որոնք ինքնուրուրույն որոշումներ կայացնելու

հնարավորություններ կունենան: Որքան աղքատ և/ կամ քիչ կրթված է գյուղացին, այնքան հակված է պահանջելու, որ գյուղատնտեսության մեջ ավելացվի պետական սեփականությունը:

Կենսական պայմանների առումով կարելի է արձանագրել, որ այսօր Հայաստանում միջին վիճակագրական գյուղաբնակը ցածր եկամուտ ունի: Գրեթե յուրաքանչյուր տասներորդը սուբյեկտիվ ընկալմամբ ծայրահեղ աղքատ է, իսկ կեսի դեպքում գումարը բավականացնում է միայն սնունդ գնելու և կոմունալ վճարումներ կատարելու համար: Տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտն է ու նպաստը/թոշակը:

Գյուղական բնակավայրերի բնակարանային ֆոնդը հին է և մաշված, գյուղաբնակների գրեթե կեսը տունը հրատապ նորոգելու խնդիր ունի: Հայաստանի գյուղական բնակավայրերում ջրամատակարարումը արդիականացված չէ, ջեռուցումը նույնպես խնդրահարույց է: Գյուղաբնակների գրեթե կեսը տունը ջեռուցում է փայտի վառարանով, որը անպայման ենթադրում է առանց այն էլ սուղ անտառային տարածքների ոչնչացում՝ կարճաժամկետ և երկարաժամկետ բազմազան խնդիրների հետևանքներով:

Գյուղաբնակները ընդհանուր առմամբ առավել վստահում են տեղական, քան պետական իշխանություններին: Գյուղում դեռևս պահպանվում են սոցիալական բարձր վստահությունն ու սոցիալական փոխշահավետ հարաբերությունները: Թեև սոցիալական կապերը լավագույնս բնութագրում են փոխադարձ օգնությունն ու աջակցությունը առօրյա գործունեության մեջ, ինչպիսին են շինարարությունն ու նորոգումը, հողագործությունն ու անասնապահությունը, անհրաժեշտության դեպքում հաճախը օգնության են հասնում հարազատներն ու բարեկամները, սակայն բավական ցածր է ընկերների աջակցության մակարդակը:

Գյուղաբնակներն իրենց սոցիալապես առավել մոտ են համարում սեփական գյուղի բնակիչներին, իսկ ավելի հեռու՝ երևանաբնակներին: Հետաքրքրական է գյուղացիների դասակարգային հարաբերական դիրքավորումը. աղքատ գյուղացին զարմանալիորեն սոցիալապես ավելի մոտ է հարուստին, քան կարծես «իր նմանին»՝ աղքատին: Վերջիններիս կեսից ավելին հարուստին (այլ ոչ աղքատին) տեսնում է իր ամուսնու/ կնոջ կարգավիճակում:

Հայաստանյան գյուղին բնորոշ է քաղաքացիական պասիվությունը: Գյուղաբնակների ճնշող մեծամասնությունը վերջին մեկ տարվա ընթացքում երբեք չի մասնակցել

բողոքի ակցիաներին և/ կամ ցույցերին, քաղաքական գործիչների հետ հանդիպումներին և իրենց համայնքապետի հետ տեղի ունեցող հանդիպումներին և/ կամ քննարկումներին:

Հետաքրքրական է, որ համայնքների խոշորացման գործընթացն ու այդ համատեքստում տեղի ունեցող նշանակալի փոփոխությունները գյուղաբնակները դիտարկում են որպես իրենցից անկախ վարչաքաղաքական գործընթացներ, որի մեջ գլխավոր դերակատարը գյուղացուց հեռու քաղաքական կարող իշխանությունն է: Տեղական մակարդակի ոչ ֆորմալ միջոցառումների դեպքում պատկերը լրիվ այլ է: Գյուղաբնակների մեծ մասը մասնակցում է հարազատների կամ բարեկամների, ինչպես նաև հարևանների կազմակերպած խնջույքներին ու ուրախ միջոցառումներին: Նրանց կեսից ավելին կարող է առանց առիթի հյուր գնալ հարևաններին կամ համագյուղացիներին: Ընդ որում՝ որքան բարձր է տնային տնտեսության միջին ամսական եկամուտը, այնքան հաճախ են գյուղաբնակները մասնակցում խնջույքների կամ ուրախ միջոցառումների, որը վկայում է այսպես կոչված սոցիալական աղքատության (թույլ սոցիալական ներառում) և նյութական, մոնետար աղքատության կապի մասին:

Գյուղը այսօր նույնպես վերարտադրում է տոհմատիրական, ընտանիքակենտրոն հարաբերությունները, որի մեջ անգամ գյուղական ընկերները ծայրահեղ սահմանափակ մուտք ունեն: Ըստ այդմ՝ արտաքին մակրոգործոնների ազդեցության տակ ուժգնացող անհատականացման պայմաններում գյուղացին խնդիրների առջև միայնակ է, լավագույն դեպքում հնարավոր է սեփական ընտանիքով:

Առավել ուժեղ է գյուղաբնակների էմոցիոնալ և մասամբ կոգնիտիվ կապվածությունը գյուղին, երկրորդական է այսպես ասած պրագմատիկ կապվածությունը, ընդ որում՝ պրագմատիկ կապվածությունն առավել բարձր է հողագործների և տղամարդկանց պարագայում:

Չնայած բացասական ցուցանիշներին՝ գյուղաբնակների մեծամասնությունը մտադիր չէ հեռանալ իր բնակավայրից մշտական բնակության գյուղի ապագայի, սեփական ընտանիքի տնտեսական բարեկեցության շուրջ գյուղաբնակները լավատեսական պատկերացումներ ունեն: Թե՛ մշտական, թե՛ ժամանակավոր/աշխատանքային նպատակով գյուղից հեռանալու մտադրություն ունեն հիմնականում երիտասարդ տղամարդիկ: Մշտական բնակության մեկնելու հիմնական դրդապատճառներից են սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, գյուղում աշխատանքի ու ապագայի բացակայությունը:

Հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ ուրվագծում են գյուղականության ճգնաժամային ախտանիշերը՝ արձանագրելով արտադրատնտեսական կառուցվածքների, գործընթացների, հարաբերությունների խորքային խեղումները, արդյունավետ իրացման անհնարինությունը, գյուղացիության հասարակական կառուցվածքի հեռանկարում խիստ խնդրահարույց վերարտադրման օրինաչափությունները, ծավալուն սոցիալական բևեռացումը, սեփական ուժերով նյութական, մոնետար աղքատության հաղթահարման անհնարինությունն ու գյուղական հանրույթին ըստ էության ներհատուկ լինելիության նորմատիվային ճգնաժամը: Այսօր հայաստանյան միջին գյուղացին միաժամանակ կրողը, վերարտադրողն ու սպառողն է սոցիալական գոյության հաճախ հակադիր, բևեռային աշխարհայացքային, գաղափարաբանական, նորմատիվային հենքերի, արժեքային, վարքային, իմացական իրարամերժ ատրիբուտների:

Ճգնաժամային է արդի գյուղացու բազմաչափ ինքնությունը՝ ***գյուղականություն*** հասկացության անկյունաքարային բաղադրիչը: Գյուղականության ճգնաժամի հաղթահարման համատեքստում չափազանց կարևոր են հստակ ախտորոշմամբ նախագծվող օժանդակող սոցիալական քաղաքականությունները: Սույն հետազոտությունը նման քաղաքականությունների մշակման հենքերից մեկն է:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հետխորհրդային շրջանում Հայաստանը հասարակական, քաղաքական և տնտեսական լուրջ ցնցումների միջով է անցել, որոնց ազդեցությունը շոշափելի է կենսագործունեության բոլոր ոլորտներում: Այսօր խնդիրները հատկապես սուր են դրսևորվում գյուղական համայնքներում. գյուղը և գյուղական կենսակերպը գրավիչ չեն՝ նպաստելով տեղի հետ գյուղաբնակի կապերի թուլացմանը (Hague & Jenkins, 2005; Kay et al., 2012), գյուղի սոցիալական կառուցվածքի վերափոխմանն ու գյուղական ինքնության ճգնաժամին (Вермишян, 2013; Ա.Ե. Մկրտիչյան et al., 2014; Գաբրիելյան, 2001; Մկրտչյան, 2016):

Ներկայում ՀՀ բնակչության ավելի քան 36,0%-ը (1,07 մլն մարդ) բնակվում է գյուղական բնակավայրերում, սակայն վերջին տարիներին այս ցուցանիշը նվազման միտում ունի, մասնավորապես՝ 2014-2019 թթ գյուղերում բնակչության թիվը նվազել է 3,0%-ով (30,8 հազարով) (ՀՀ *Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության զարգացման 2020-2030 թթ. ռազմավարության նախագիծ*, 2019):

Չնայած գյուղի լուրջ խնդիրներին՝ այսօր հասարակական-քաղաքական բանավեճերում բացակայում է գյուղական կյանքի, վերջինիս առանձնահատկությունների, խնդիրների ու հնարավորությունների վերհանման անհրաժեշտությունը և կարևորությունը, որի վկայությունն է որոշակի տերմինաբանական խառնաշփոթը, հետխորհրդային շրջանի օրենսդրական կարգավորումներում, պետական վիճակագրությունում, ինչպես նաև տեղական ու միջազգային կազմակերպությունների տեքստերի անորոշությունը, որոնցում միաժամանակ կիրառական են գյուղացիներ, ֆերմերներ, ագարակատերեր, գյուղացիական տնտեսություններ, տնտեսվարողներ և նմանօրինակ մի շարք այլ փոխադարձ վերադրվող ձևակերպումներ*: Մինչդեռ ըստ Գաբրիելյանի (2012)՝ պետական քաղաքականության փաստաթղթերում, դրանք, որպես կանոն, անհատական գյուղացիական տնտեսություններ են կամ տնտեսվարող սուբյեկտներ: Նման դրվածքը հաստատ անարդյունավետ է, չի արտացոլում գյուղական բնակչության սոցիալ-ժողովրդագրական, մշակութային, գործառնական և, որքան էլ զարմանալի չէ, անգամ տնտեսվարական ողջ որակական բազմազանությունը:

* Օրինակ, համաձայն պաշտոնական տվյալների, գյուղատնտեսության համախառն արտադրանքի 97,0%-ը ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսությունները, որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում 1,48 հա հողատարածք: Հանրապետության զբաղվածների 31.3%-ը ընդգրկված է գյուղատնտեսության ոլորտում (Ագրարային քաղաքականություն, 2014):

Պետական քաղաքականության տկարության հիմնական գրավականն է գյուղատնտեսավարման սուբյեկտների, գյուղատնտեսությամբ զբաղվողների, գյուղական կենսագործունեության և համապատասխան հարաբերությունների կրողների հիմնավորված դիվերսիֆիկացիան: Որպես հիմնական թիրախներ, ի միջի այլոց, առաջին հերթին պետք է առանձնացնել երիտասարդությանը, երիտասարդ ընտանիքներին, որոնք էլ կդառնան հեռանկարային փոփոխությունների ու գյուղական միջավայրի առողջացման հիմքը (Գաբրիելյան, 2012):

Գյուղական համայնքներում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին թիրախավորում են պետական և ոչ պետական ծրագրերը՝ տարաբնույթ չափանիշներ ու չափորոշիչներ կիրառելով միևնույն խմբերի գործունեությունը բնութագրելու համար: Մինչդեռ գյուղատնտեսության ոլորտում ներգրավված անհատները և գյուղական համայնքներում բնակվող ընտանիքները մեծամասամբ ինքնազբաղ են, նշված ձևական իրավահարաբերությունների և կարգավորումների, քաղաքականությունների սուբյեկտ չեն և չեն օգտվում նույնիսկ աշխատանքային օրենսգրքով սահմանվող պետական սոցիալական երաշխիքներից: Շատ դեպքերում, անգամ համայնքների խոշորացումից հետո, գյուղական համայնքներում առկա սոցիալական ենթակառուցվածքները նրանց հասանելի չեն:

Հայաստանյան հասարակական և քաղաքական օրակարգում գյուղատնտեսության ոլորտում ներառվածներին արժանապատիվ աշխատանքով ապահովելու փաստի ամրագրումը և նրանց կենսապայմանների բարելավմանն ուղղված հայեցակարգերի ու ռազմավարությունների ուսումնասիրության կարևորումը դարձել է ժամանակի հրամայական:

Գյուղականության արդի ճգնաժամը պայմանավորված է հատկապես գյուղատնտեսական գործունեության գրավչության պակասով, ցածր եկամտաբերությամբ, բարձր ռիսկայնությամբ, գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների բացակայությամբ, ՏԻՄ մարմինների նկատմամբ անվստահությամբ և փոխհամագործակցային թույլ կապերով: Ասվածը ավելի ռիսկային է դառնում գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթացում, որտեղ լիարժեք հաշվի չի առնվում գյուղաբնակների կարծիքը, ինչպես նաև գյուղական ինքնության կարևորագույն հիմնահարցերը:

Միաժամանակ գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթացում ռիսկային է նաև այն, որ համայնքային իշխանությունը հեռանում է գյուղաբնակներից՝ սոցիալ-մշակութային դժվարություններ առաջացնելով խոշորացված գյուղերի բնակիչների

փոխհարաբերություններում: Մյուս կողմից՝ գյուղականության վերարտադրության համատեքստում գյուղի ամենանշանակալի և շոշափելի կապիտալը հողն է: Անխոս, առաջնային է հողի տնտեսական նշանակությունը, սակայն ոչ պակաս կարևոր է դրա սոցիալական և հատկապես մշակութային արժեքը, իմաստաստեղծ ներուժը: Հողի հետ հարաբերակցության մեջ է բացահայտվում գյուղական ընտանիքի, համայնական կենսակերպի, առօրյա մշակույթի ու դերաստատուսային կառույցների բնույթն ու բովանդակությունը: Գյուղացի (գյուղական ընտանիք) - գյուղ (համայնք) փոխհարաբերությունների ըմբռնումը այլ հավասար պայմաններում հնարավոր է «գյուղացի-հող» օբյեկտիվ և սիմվոլիկ փոխհարաբերության բացահայտման ճանապարհով (Վերմիշյան, 2012, 8):

2018 թ.-ին
Հայաստանում վարելահողի
45.5%-ը
չի օգտագործվել



Սա բավական ցածր ցուցանիշ է այսպիսի սակավահող երկրի համար:

Գյուղատնտեսական հողերը չեն մշակվում բազմաթիվ պատճառներով՝ ոռոգման ջրի անհասանելիություն կամ անբավարար մատակարարում, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիություն, հողի բերրիության ցածր մակարդակ, հողօգտագործողի կամ հողի սեփականատիրոջ բացակայություն, ցածր եկամտաբերություն, անհրաժեշտ շրջանառու միջոցների անբավարարություն և այլն (ՀՀ *էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության զարգացման 2020-2030 թթ. ռազմավարության նախագիծ*, 2019):

Նշված խնդիրները տեղին են նաև խոշորացված համայնքներում՝ ռեսուրսների անհամաչափ բաշխման պայմաններում, երբ դրանց մեծ մասը զետեղված է համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրում: Ուստի և խախտվում է ծառայությունների հասանելիության և մատչելիության կայուն հարաբերությունները համայնքի բոլոր բնակավայրերի համար:

Խոշորացման գործընթացում պակաս անհանգստացնող չէ նաև գյուղերը խոշոր

քաղաքների հետ միավորելու գաղափարը: Արդյունքում քաղաքային իշխանության անտեղյակությունը գյուղականության խնդիրներից կարող է բերել գյուղի սոցիալական, մշակութային և տնտեսական գործունեության բարդությունների, կառավարման արդյունավետության կորստի, իրավիճակի ավելի վատթարացման:

Այսպիսով՝ սույն հետազոտության նպատակն է ախտորոշել Հայաստանում գյուղականության ճգնաժամն ու ուրվագծել առկա խնդիրների լուծումները: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է գյուղականության ներկայիս վիճակը բնութագրող տնտեսական, էկոլոգիական, սոցիալ-իրավական և վարչաքաղաքական համատեքստերի նկարագրություն՝

- սոցիալ-տնտեսական փոխակերպումների համատեքստում բացահայտել գյուղի սոցիալական տարածության կառուցվածքները,
- լուսաբանել գյուղական առօրյայում սոցիալական ցանցերի ու սոցիալական վստահության դերը,
- կախված գյուղատնտեսության ոլորտում ներգրավվածության աստիճանից՝ բացահայտել գյուղաբնակների՝ տեղի հետ կապվածության ու սոցիալական ներառվածության ձևերը,
- ուսումնասիրել գյուղատնտեսական գործունեության համատեքստում ձևավորված սոցիալ-տնտեսական պրակտիկաները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հետազոտությունը նախագծելու և առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել «գյուղականություն» եզրույթն ու չափելի դարձնել գյուղականության ճգնաժամը: Գյուղականությունն առաջին հերթին գյուղի, գյուղական բնակավայրի բնութագիրն է: Գրականության մեջ կարելի է հանդիպել գյուղականության և՛ քանակական, և՛ որակական բնութագրիչներ (Cox, 1995, 1): Հաճախ այն սահմանվում է ըստ բնակավայրի քաղաքային կենտրոն/ներից հեռավորության (Haynes & Bentham, 1982; Williams & Lloyd, 1990), ըստ բնակչության չափի և/կամ խտության (Carstairs & Morris, 1990), ըստ սոցիալական որակների (Phillimore & Reading, 1992), ըստ սուբյեկտիվ ինքնա/գնահատման (Ritchie et al., 1981) և այլն:

Ամենապարզ և միաժամանակ ըմբռնելի սահմանման համաձայն՝ գյուղականությունը վարչական և մշակութային առումով գյուղական ճանաչված բնակավայրում ապրող

ընդհանուր պատմական ծագում և/կամ ժառանգություն ունեցող մարդկանց՝ ***տեղով*** պայմանավորված առօրեական կեցությունն է (Chigbu, 2013, 815):

Ըստ այս մոտեցման՝ կարելի է առանձնացնել գյուղականության երեք չափումներ՝ *ա) գյուղում ձևավորված համայնական կապերն ու դրանց պատմական պայմանավորվածությունը, բ) մարդկանց տնտեսվարման և կեցության ձևերն ու գ) լոկալ տեղը՝ աշխարհագրական և սիմվոլիկ հատույթներով:* Սա բխում է գյուղի սոցիոլոգիական սահմանումից, համաձայն որի՝ այս երևույթն ըմբռնելի է ***հող-համայնք-ընտանիք*** հարաբերակցության համատեքստում (Վերմիշյան, 2012, 8): Մի կողմից՝ հողը նշանակալի կապիտալ է և բնակչի՝ հողի հետ հարաբերակցության ձևերի մեջ է առանձնանում ու որակվում որպես գյուղական կամ գյուղատնտեսական, մյուս կողմից՝ ընտանեկան և համայնական հարաբերությունները կառուցվում են ավանդական հասարակությանը բնորոշ սերտ անձնավորված հարաբերությունների, փոխըմբռնման և պաշտպանության նորմերի, ազգակցականության և ընդհանուր տեղանքի վրա հիմնված սոցիալական կապերի համակցմամբ՝ ի տարբերություն հակադիր բևեռը՝ քաղաքը, բնութագրող անդեմ հարաբերությունների, ապրանքաիրային արժեքների, աշխատանքի և սպառման նորմերի, ինչպես նաև դասակարգային կապերի (Tönnies & Harris, 2001):

Վերը նշվածը գյուղի՝ որպես բնակավայրի և գյուղականության՝ որպես կեցության որակի տեսական սահմանումն է: Չնայած սոցիոլոգիական, մարդաբանական առումով դա է գյուղի էությունը, սակայն էմպիրիկ մոտեցումները պետք է կառուցել՝ գյուղը դիտարկելով սոցիալական փոփոխությունների անմիջական ազդեցության համատեքստում: Վերջին երկու հարյուր տարիների ընթացքում հասարակություններն իրենց բնույթով արդյունաբերական և/կամ քաղաքային են, բարեկեցության խորհրդանիշը քաղաքն է, և քաղաքային կյանքի ստանդարտները էտալոնային են (Delanty & Isin, 2003, 313): Վերջին դարերի ընթացքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և մշակութային փոխակերպումները «աղավաղել» են գյուղի և/կամ գյուղականության ավանդական մոդելը՝ այն «համալրելով» քաղաքային և/կամ արդյունաբերական տարրերով: Ուրբանիզացիան և/կամ գյուղից-քաղաք միգրացիոն հոսքերի և արժեքանորմատիվ փոփոխությունների համապատկերում առավել տեսանելի են դառնում գյուղականության մշտական հիմնախնդիրները, որոնք սկսում են կրել ճգնաժամային բնույթ, երբ գյուղական՝ շարունակաբար սպասելի կեցությունն ու արդի մրցակցային կառուցվածքները հակասում են իրար, իսկ գյուղաբնակն էլ իր հերթին կորցնում է գյուղական արդյունավետ կեցության համար անհրաժեշտ մի շարք բնութագրեր. այն է՝ գյուղական տնտեսվարում, համայնական հարաբերություններ, ավանդական դերային կառուցվածքներ: Միևնույն ժամանակ

այլևս չի իմաստավորվում հողը՝ որպես գյուղական լինելիության անկյունաքարային հենք: Այս համատեքստում գյուղականության ճգնաժամերը և/կամ գյուղական ձևերի վերափոխումները ախտորոշելի են գյուղական կյանքի որակի, գյուղատնտեսական պրակտիկաների, գյուղում սոցիալական ներառման ու բացառման, միգրացիայի ու տեղի հետ կապվածության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերոնշյալ հետազոտական խնդիրները լուծելու համար համակցվել են քանակական և որակական հետազոտության հետևյալ մեթոդները. նախ՝ Հայաստանում գյուղականության ներկայիս վիճակը գնահատելու, տնտեսական, էկոլոգիական, սոցիալ-իրավական և վարչաքաղաքական համատեքստերը հասկանալու նպատակով իրականացվել են՝

• ***գրասենյակային հետազոտություն*** – այն է՝ ՀՀ գյուղական բնակավայրերի և գյուղատնտեսական գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալների, ոլորտին վերաբերվող հետազոտությունների երկրորդային վերլուծություն,

• ***փորձագիտական հարցազրույցներ*** - պետական/ոչ պետական, պրակտիկ/ակադեմիական բնագավառի ներկայացուցիչների հետ (թվով 7 հարցազրույց):

Գյուղաբնակների սոցիալ-տնտեսական պայմանների, գյուղական միջավայրի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականների, գյուղաբնակների սոցիալական ներառվածության, սոցիալական և գյուղատնտեսական ակտիվության և/կամ ներգրավվածության հիմնախնդիրների վերհանման նպատակով իրականացվել են ստանդարտացված և նարատիվ հարցազրույցներ:

• ***Ստանդարտացված հարցազրույցներ***

Ներկայացուցչական քանակական հետազոտություն է իրականացվել ըստ Հայաստանի գյուղական բնակչության (դիտարկումների թիվը 400 է, վստահության աստիճանը՝ 95%, վստահության միջակայքը՝ 5%)՝ ձևայնացված հարցազրույցի մեթոդի կիրառությամբ:

Ստանդարտացված հարցաթերթով քանակական զանգվածային հարցումն իրականացնելու համար կիրառվել է ընտրանքի ձևավորման կլաստերային մեթոդը: Ներքին անհամասեռ, հավասարաչափավալ կլաստերները պատահականության սկզբունքով ընտրվել են Հայաստանի Հանրապետության

գյուղական բնակավայրերի բնակչության կուտակային բաշխումից, որը հնարավորություն է տվել արդյունարար ընտրանքում առանձնացնել գյուղական բնակավայրի բնակչությանը համամասնական կլաստերների թվաքանակը:

Գյուղական բնակավայրում հարցմանը մասնակից վերջնական հետազոտական միավորը՝ տնային տնտեսությունը, ընտրվել է պատահական քայլի մեթոդով: Երթուղու սկզբնակետն էր տեղական ընտրատեղամասը:

Իր հերթին առանձին տնային տնտեսությունում հարցազրույցի մասնակցի ընտրությունը կատարվել է տվյալ ընտանիքում՝ մեկ հարկի տակ, մշտապես բնակվող չափահաս անդամների ցանկից՝ առաջիկա ծննդյան օրվա ընտրության մեթոդով: Իր հերթին առանձին տնային տնտեսությունում որպես հարցազրույցի մասնակից է ընտրվել տնային տնտեսության վերաբերյալ առավել բազմակողմանի տեղեկացված անկյունային տեղեկատուն:

Համաձայն հարցման արդյունքների.

- Հարցվածներից 30,2%–ը արական, 69,8%-ն իգական սեռի ներկայացուցիչներ են:
- Տարիքային կտրվածքով հարցվածների բաշխումը հետևյալն է. մինչև 35 տարեկաններ՝ 27,8%, 36-55 տարեկաններ՝ 36,9%, 56 տարեկան և բարձր՝ 35,3%:
- Ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեն հարցվածների 7,3%-ը, միջնակարգ՝ 48,5%-ը, միջին մասնագիտական՝ 25,3%-ը և բարձրագույն՝ 18,9%-ը:
- Աշխատանք չունեն հարցվածների 58,8%-ը, վարձու գրանցված աշխատող են 15,6%-ը, չգրանցված աշխատող՝ 4,6%-ը, ինքնազբաղված՝ 19,7%-ն ու ձեռնարկատեր/սեփականատեր՝ 1,3%-ը:
- Ըստ տնային տնտեսության ֆինանսական վիճակի՝ հարցվածների 9,6%-ը նշել է, որ գումարը բավականացնում է միայն սնունդ գնելուն, 43,8%-ին բավականացնում է սնունդ գնելու և կոմունալ վճարումներ կատարելու, 34,5%-ին՝ սնունդ գնելու, կոմունալ վճարումներ կատարելու և հագուստ գնելու, 8,5%-ին՝ ոչ առաջին անհրաժեշտության իրեր գնելու և 3,6%-ին՝ թանկարժեք իրեր գնելու, մեքենա գնելու, նույնիսկ ամառային հանգստի գնալու համար:
- Տնամերձից զատ այլ հողատարածք/ները հողագործական նպատակներով օգտագործում են հարցված սեփականատերերի 47,8%-ը:
- Անասնապահությամբ զբաղվում են հարցված գյուղաբնակների 46,0%-ը (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.
Հարցված գյուղաբնակների սոցիալ- ժողովրդագրական բնութագրիչները

Հարցվածների բաշխումը	(%)
Ըստ սեռի N=371	
Արական	30,2
Իգական	69,8
Ըստ տարիքի N=371	
Մինչև 35 տարեկաններ	27,8
36-55 տարեկաններ	36,9
56 և ավելի տարեկաններ	35,3
Ըստ կրթական մակարդակի N=371	
Ոչ լրիվ միջնակարգ	7,3
Միջնակարգ	48,5
Միջին մասնագիտական	25,3
Բարձրագույն	18,9
Ըստ զբաղվածության N=371	
Աշխատանք չունեն	58,8
Վարձու գրանցված աշխատող (աշխատում է հարցման պահին նախորդած առնվազն 7 օրվա ընթացքում)	15,6

Վարձու չգրանցված աշխատող (աշխատում է հարցման պահին նախորդած առնվազն 7 օրվա ընթացքում)	4,6
Ինքնազբաղված (աշխատում է ինքն իր համար)	19,7
Ձեռնարկատեր/սեփականատեր (աշխատողների ներգրավվածությամբ)	1,3
Ըստ տնային տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակի N=371	
Գումարը բավականացնում է միայն սնունդ գնելու համար	9,6
Գումարը բավականացնում է սնունդ գնելու և կոմունալ վճարումներ կատարելու համար	43,8
Գումարը բավականացնում է սնունդ գնելու, կոմունալ վճարումներ կատարելու և հագուստ գնելու համար	34,5
Գումարը բավականացնում է ոչ առաջին անհրաժեշտության իրեր գնելու համար	8,5
Գումարը բավականացնում է թանկարժեք իրեր և մեքենա գնելու համար	1,4
Գումարը բավականացնում է թանկարժեք իրեր և մեքենա գնելուն, ամառային հանգստի գնալու համար	2.2
Ըստ հողագործական ակտիվության N=371	
Ակտիվ	47,8
Պասիվ	52,2
Ըստ անասնապահական ակտիվության N=371	
Ակտիվ	46,0
Պասիվ	54,0

• ***Նարատիվ հարցազրույցներ***

Որպես տվյալ հետազոտության նպատակից բխող յուրահատուկ դեպքեր դիտարկվել են՝

1. հողագործությամբ և/կամ անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունները,
2. գյուղատնտեսական գործունեությունը դադարեցրած տնային տնտեսությունները,
3. գյուղատնտեսական/ֆերմերային գործունեության բնագավառում տնտեսապես հաջողված դեպքերը:

Առաջին երկու դեպքերի համար ընտրվել են 12 տնային տնտեսություններ, որոնց գլխավորի հետ իրականացվել է նարատիվ հարցազրույց՝ վերհանելով տվյալ տնտեսության կենսափորձը և մանրամասն նկարագրելով Հայաստանում գյուղատնտեսական գործունեության և/կամ դադարեցման գաղափարախոսական ու մշակութային պրակտիկաները:

Երկրորդ դեպքում ընտրվել են 4 ֆերմերային տնտեսությունների հիմնադիր-ղեկավարներ, որոնց փորձի հիման վրա վերհանվել են Հայաստանում գյուղատնտեսական հաջողված գործունեության սոցիալ-տնտեսական պրակտիկաները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

• Հաշվի առնելով անվտանգային խնդիրները՝ որոշ սահմանամերձ գյուղական բնակավայրեր դուրս են մնացել ընտրանքից:

• Քովիդ-19 համավարակի ժամանակ դեմառդեմ հաղորդակցման սահմանափակումները հաշվի առնելով՝ որոշ նարատիվ հարցազրույցներ իրականացվել են առցանց տարբերակով՝ օգտագործելով տեսակապի հնարավորությունները:

• Հարկ է արձանագրել, որ փաստացի հարցվածների ժողովրդագրական ցուցանիշները շեղված են պաշտոնական վիճակագրությունից: Մասնավորապես՝ ըստ սեռի համամասնությունը շեղված է ավելի քան 10%-ով, երիտասարդներն առավել քիչ են ներկայացված, քան ավագ սերնդի ներկայացուցիչները: Արական

սեռի ներկայացուցիչների ներառվածության պակասը դիտարկումների ընդհանուր թվաքանակում կարելի է մեկնաբանել ստորև ներկայացված մի քանի գործոններով.

° Ներսահմանային և անդրսահմանային արտագնա աշխատանքային գործունեության պատճառով արական բնակչությունը փաստացի բացակայում է հատկապես գյուղական բնակավայրերից: Ենթադրում ենք, որ տնային տնտեսությունների ամբողջական ժողովրդագրական կառուցվածքը կկրկներ ՀՀ գյուղական բնակավայրերի ժողովրդագրական համապատկերը: Հետազոտությունը նման նպատակ չուներ և սահմանափակվել է անկյունային տեղեկատուի ժողովրդագրական տվյալների հավաքագրմամբ:

° Առավել հաճախ հարցազրույցներին մասնակցում և որպես անկյունային տեղեկատուներ էին ընտանիքի միջին տարիքի կանայք: Կարելի է ենթադրել, որ վերջիններս ավելի տեղեկացված էին այն խնդիրներից, որոնք հետազոտության համար կարևոր էին: Բացի դրանից՝ տղամարդիկ պակաս պատրաստակամությամբ էին շփվում՝ համարելով, որ իրենց առօրյայից այս պակաս կարևորությամբ ընդմիջվելը կանացի գործ է, հարիր չէ զբաղված տղամարդուն:

° Գյուղական համայնքներում հարցում իրականացնողները երբեմն տնային տնտեսություններ էին այցելում այն ժամանակ, երբ տանը հիմնականում կանայք էին: Հատկապես հեռավոր բնակավայրերում կրկնայցի կազմակերպումը բարդ էր, հաճախ անհնար, այդ իսկ պատճառով առաջնահերթությունը տրվում էր տեղեկատվության բովանդակությանը:

Չնայած նշված սահմանափակումներին՝ հետազոտության արդյունքները լավագույնս են նկարագրում հայաստանյան գյուղական բնակավայրերին բնորոշ արդի խնդիրներն ու ախտորոշում գյուղականության ճգնաժամը:

ՄԱՍ 1.

ԳՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Տարբեր հաշվարկներով ՀՀ-ում առկա է շուրջ 340,000 (Ավետիսյան և ուրիշներ, 2017) գյուղական տնտեսություն կամ հողատեր, որոնք հիմնականում, որպես մանր արտադրող, ներգրավված են գյուղատնտեսական գործունեության մեջ: Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերն ունեն միջինը 1.0-1.3 հա հողակտորներ: Այդպիսի փոքր և տարածական առումով միմյանցից առանձնացված հողակտորներ ունեցող գյուղական տնտեսությունները շուկայում թույլ բանակցային դիրք ունեն, հատկապես որ դրանք առավելապես գործում են ոչ ֆորմալ դաշտում:

Տեղեկատվության, գիտելիքի ու ռեսուրսների բացակայության պատճառով որպես գյուղմթերքի արտադրողներ՝ այդ տնտեսությունները չեն կարողանում նպատակահարմար գին ստանալ իրենց արտադրանքի համար: Բացի դրանից՝ փոքր գյուղական տնտեսությունների համար գյուղմթերք վերամշակող կազմակերպությունների սակավությունն ու շուկաների բացակայությունը մարտահրավեր են: Շատ դեպքերում գյուղմթերք վերամշակող կազմակերպությունները զբաղվում են նաև առաջնային արտադրությամբ, օրինակ՝ կաթնամթերք վերամշակողները: Մեծ են նաև գյուղատնտեսական արտադրության կորուստները արժեշղթայի լոգիստիկ/փոխադրման սեգմենտում՝ ժամանակակից տեխնիկայի, սարքավորումների, պահեստների և սառնարանների բացակայության պատճառով:

Միևնույն ժամանակ մանրածախ վաճառքով զբաղվողներն ու վերամշակողներն արտադրողից չեն ստանում լավ որակի արտադրանքի կանոնավոր մատակարարում: Առաջնային գյուղմթերքի ցածր ու անկանոն մատակարարումն իր հերթին խոչընդոտում է սննդի վերամշակման արդյունաբերության և արտահանման շուկայի զարգացումը: Գյուղատնտեսական արժեշղթաների երկայնքով ոչ ֆորմալ տնտեսվարողների առկայությամբ և ենթակառուցվածքի (օրինակ՝ պահեստների) անբավարարությամբ պայմանավորված տեղի շուկաները նպաստավոր չեն արտադրողականության և որակի մեջ ներդրումներ կատարելու համար: Արդյունքում տեղական արտադրության ծավալները մնում են փոքր, իսկ պարենամթերքի ինքնաբավության մակարդակը՝ ցածր:

2020-ից Արցախյան 44-օրյա պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցությամբ պայմանավորված ավելի է սրվել գյուղական տնտեսությունների, գյուղատնտեսական աժեշղթաների, շուկայի ու գների վիճակը: Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2019-ին Արցախից Հայաստան է ներմուծվել շուրջ 40,0 հազար տոննա հացահատիկ

և հատիկաընդեղեն*: 44-օրյա պատերազմի հետևանքով 2020-2021թթ. հնարավոր չի եղել ապահովել ներմուծման այդ ծավալները: Միաժամանակ արոտավայրերի կորստի պատճառով ստեղծվել է անասնակերի ապահովման խնդիր: Հատկապես Գեղարքունիքի ու Սյունիքի սահմանային դարձած բնակավայրերում մարդիկ զրկվել են արոտավայրերը, խոտհարքներն ու այգիներն օգտագործելու հնարավորությունից (Մարդու իրավունքների պաշտպան, 2021): Այս իրավիճակում գյուղի ու գյուղատնտեսության դերը երկրի պարենային անվտանգության համատեքստում ավելի է կարևորվում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Հայաստանի բնակչության շուրջ 36,0%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում: Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2020-ին զբաղվածների 21,8%-ը ներգրավված է եղել գյուղատնտեսությունում: Ընդհանուր աշխատուժի տեսանկյունից այս ցուցանիշը գերազանցում է 30,0%-ը, քանի որ այն արտացոլում է միայն գրանցված զբաղվածներին: Չնայած գյուղատնտեսության մեջ ընդգրկված աշխատուժը ներառում է գրեթե նույն թվով կանանց և տղամարդկանց (2018-ին 48,0% կին և 52,0% տղամարդ) (Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019), սակայն կանայք առավելապես ներգրավված են ոչ ֆորմալ գյուղատնտեսական գործունեության մեջ և ապահովության առումով ավելի խոցելի են:

Հայաստանյան աշխատաշուկայում առհասարակ գոյություն ունի ուղղահայաց և հորիզոնական սեգրեգացիա, որը հանգեցնում է սեռով պայմանավորված անհավասար վարձատրության: 2018-ին Հայաստանում կանանց վարձատրության միջին չափը կազմել է տղամարդկանց վարձատրության մոտ 64,7%-ը կամ վարձատրության սեռային խզվածքը կազմել է 35,3%: Գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների շրջանում կանանց մասնաբաժինը կազմում է 82,1%՝ ի հակադրություն ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող տղամարդկանց, որոնք կազմում են 60,8% (Գենդերը, գյուղատնտեսությունը և գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում, 2017): Կանայք զբաղվում են հատկապես քաղհանի, բերքահավաքի, բերքի տեսակավորման և փաթեթավորման աշխատանքներով, որոնք հատուկ հմտություններ չեն պահանջում: Ըստ ՄԱԿ-ի ՊԳԿ 2017-ի ուսումնասիրության

* Պաշտոնական տվյալների համաձայն (Հաստատել Հայաստանի Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին, 2021) 2019-ին Արցախում հացահատիկի և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 74.4 հազար հա: Պատերազմի հետևանքով վարելահողերի մակերեսը կտրուկ նվազել է:

(Գենդերը, գյուղատնտեսությունը և գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում, 2017)՝ Հայաստանում շատ դժվարություններ կան կանանց՝ գյուղատնտեսության վերաբերյալ տեխնիկական գիտելիքների ու տեղեկությունների հասու լինելու, ինչպես նաև օժանդակ ծառայություններից ու վերապատրաստման դասընթացներից օգտվելու համար: Տեխնոլոգիաների և արտադրամիջոցների ցածր հասանելիությամբ, կարծրատիպերով ու հողի հանդեպ իրավունքի հարցերով պայմանավորված՝ կանայք հազվադեպ են ղեկավարում գյուղական տնտեսությունը կամ գյուղատնտեսական արտադրությանն առնչվող առանցքային որոշումներ կայացնում: Թեպետ գյուղական տնտեսությունների կամ հողի սեփականատիրության վերաբերյալ ըստ սեռի տարբաժանված տվյալներ չկան, գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 33% դեպքերում գլխավորը կանայք են (Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019), որը շատ դեպքերում կապված է տղամարդկանց արտագաղթի հետ: Բացի դրանից՝ գյուղական տնտեսությունում ոչ պաշտոնապես աշխատող գյուղաբնակ կանայք Աշխատանքային օրենսգրքով սահմանված որևէ փոխհատուցում չեն ստանում, օրինակ՝ հիվանդության պատճառով արձակուրդ և երեխայի խնամքի նպաստ, քանի որ այդ կանայք համարվում են կա՛մ ինքնազբաղված, կա՛մ ոչ ակտիվ: Գյուղական համայնքներում զբաղվածություն ունեցող կանանց երկու երրորդը դրամային եկամուտ չի ստանում, երբ ինքնազբաղված է («Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտության արդյունքների ամփոփում, 2015): Միաժամանակ հատկանշական է, որ Հայաստանում 2020 թվականին երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում (0-5 տարեկան բնակիչների թվաքանակից) կազմել է ընդամենը 24,3%, որից քաղաքներում՝ 28,6% իսկ գյուղերում՝ 16,2% (Նախադպրոցական հաստատությունների գործունեություն, 2020):

Հայաստանում դեռևս թույլ զարգացած է նաև սոցիալական աշխատողի ինստիտուտը: Համայնքների խոշորացման համատեքստում նախատեսվում է, որ 5,000-ից ավել բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքին բաժին է ընկնում մեկ սոցիալական աշխատող (*Core Diagnostic of the Social Protection System in Armenia, 2020*):

Ինչ վերաբերում է նպաստներին, ապա Հայաստանում 2020թ-ին մեկ ընտանիքի ամսական նպաստի միջին չափը կազմել է 31,350 դրամ, ընդ որում՝ ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի միջին չափը կազմել է 26,634.4 դրամ (Նպաստառուների թվաքանակ և նպաստների միջին չափեր, 2020):

Մտահոգիչ են նաև առողջապահական ծառայությունների ու ենթակառուցվածքների հասանելիությունը հատկապես գյուղաբնակների համար: Այսպես՝ Հայաստանում

10,000 բնակչի հաշվով բժիշկների թվաքանակը 2020 թվականին եղել է 48,6 բժիշկ, ընդ որում՝ Արմավիրի և Սյունիքի մարզերում 10,000 բնակչի հաշվով բժիշկների թվաքանակը ամենացածրն է՝ համապատասխանաբար 14,9 և 18 բժիշկ: Հիվանդանոցային մահճակալների քանակը 10,000 բնակչի հաշվով եղել է 43,4: Իսկ շտապ բժշկական օգնության կայանների քանակը 2020թ-ին եղել է 69 միավոր, ընդ որում՝ շտապ օգնության բժիշկների թվաքանակը 100,000 բնակչի հաշվով՝ 6,5 (Առողջապահական համակարգ, հիվանդացություն և բուժսպասարկում, 2020):

Գյուղատնտեսությունն առանցքային դերակատարություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: 2020 թվականին ՀՆԱ-ի շուրջ 13,5%-ը բաժին է ընկել գյուղատնտեսական արտադրանքին: Արտաքին առևտրի հաշվեկշռում գյուղատնտեսության ներդրումը ընդհանուր ներմուծման մոտ 18 և արտահանման՝ 28%-ն է (*Հայաստանը թվերով. հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, 2021*):

2020 թվականին գյուղատնտեսության համախառն արդյունքը կազմել է 833,3 մլրդ. դրամ, որից 52,1%-ը բաժին է ընկել անասնաբուծությանը, 47,9%-ը՝ բուսաբուծությանը կամ մշակաբույսերի արտադրությանը: 2018 թվականից սկսած թե՛ անասնաբուծության, թե՛ բուսաբուծության ոլորտներում նկատվում է համախառն արտադրանքի ծավալների նվազում (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. («Գյուղատնտեսություն», 2021)

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ տարիների (մլրդ. ՀՀ դրամ)



Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքում կարևոր տեղ են զբաղեցնում մսի, կաթի և ձվի, ինչպես նաև հացահատիկի և հատիկաընդեղենի, մրգի, հատապտղի և խաղողի արտադրությունը (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. **(«Գյուղատնտեսություն», 2021)**

Գյուղատնտեսական մի քանի արտադրատեսակի կառուցվածքը 2016-2020 թվականներին

(1000 տոննա)	2016	2017	2018	2019	2020
Հացահատիկ և հատիկաընդեղեն (քաշը զտումից հետո)	604.2	302.5	337.7	198.7	246.1
Պտուղ և հատապտուղ	242.6	361.6	343.4	290.6	274.3
Խաղող	178.8	210	179.7	217.5	283.2
Միս (սպանդային քաշով)	106.1	109	108.2	107.3	107.7
Կաթ	754.2	758.2	697.7	667.9	654.3
Ձու, մլն. հատ	694.6	683	726.8	720.6	754.6
Բուրդ (ֆիզիկական քաշով), տ	1 641	1 385	1 032	981	1 048

Հայաստանում արտադրվող անասնաբուծական հիմնական մթերքներն են՝ տավարի և խոզի միս, թռչնամիս, կաթնամթերք, հավկիթ և ձուկ (տե՛ս Գծապատկեր 3): Տավարի մսի շուրջ 60,0%-ը և կաթի արտադրության 95,0%-ը ստացվում է տավարաբուծությունից: Հայաստանում տավարաբուծությամբ զբաղվում է շուրջ 170,000 գյուղական տնային տնտեսություն: Ընդ որում՝ անասնապահությունը զարգացած է հատկապես Գեղարքունիքի, Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերում: 2021-ի հունվարի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 613,413 գլուխ: Ըստ պաշտոնական տվյալների (Պարենային ապահովություն և աղքատություն, 2021)՝ 2020-ի համեմատ այս ցուցանիշը աճել է 34,157-ով, քանի որ Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով մի շարք անասնապահներ իրենց կենդանիներին տեղափոխել են Գեղարքունիքի, և ապա հանրապետության այլ մարզեր: Ընդհանուր առմամբ Հայաստանում 2021 թվականին 2020 թվականի համեմատ շուրջ 8,3%-ով աճել է նաև ոչխարների ու այծերի գլխաքանակը: Ոչխարաբուծությունը հատկապես զարգացած է Արմավիրի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում: 2021-ի հունվարի 1-ի դրությամբ այս մարզերում են բուծվել ոչխարների ու այծերի ընդհանուր թվի շուրջ 48%-ը (Պարենային ապահովություն և աղքատություն, 2021): Ի տարբերություն տավարաբուծության և ոչխարաբուծության՝

2021-ին նախորդ տարվա համեմատ խոզերի գլխաքանակը նվազել է ավելի քան 23.000-ով՝ հավանաբար անասնակերի ծավալների կրճատման պատճառով:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և մեքենայացման շնորհիվ Հայաստանում անասնաբուծության ճյուղերից լավ զարգացած է թռչնաբուծությունը: Տարեկան արտադրվում է շուրջ 8,000 տոննա թռչնամիս և 700 մլն-ից ավելի ձու: Ընդ որում՝ արտադրվող ձվի շուրջ 40%-ն արտադրում են խոշոր թռչնաբուծարանները, ինչպիսիք են «Արաքս թռչնաֆաբրիկա» ԲԲԸ-ն, «Լուսակերտի տոհմային թռչնաֆաբրիկա» ԲԲԸ-ն և «Արզնիի տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն: Թռչնաբուծությանը զուգահեռ Հայաստանում զարգանում է նաև ձկնաբուծությունը:

2020թ.

ՁՈՒԿ

արտադրվել է

19.100

ՁԿՆԱՄԹԵՐՔ

արտահանվել է

11.000

Ռուսաստան

ԵՄ երկրներ

Ձկնաբուծարանները հատկապես կենտրոնացած են Արարատի ու Արմավիրի մարզերում: Կայուն տեխնոլոգիաների և ջրի խնայողության մեխանիզմների բացակայության պատճառով դրանք բնապահպանական տարբեր խնդիրներ են ստեղծում, քանի որ արտադրության համար օգտագործվում է ստորգետնյա քաղցրահամ ջուրը՝ մեկ անցման համակարգով: Հայաստանում արտադրվող բուսաբուծական հիմնական մթերքներն են՝ հացահատիկ, հատիկաընդեղեն, միրգ, հատապտուղ, խաղող (գինու և սեղանի խաղող), բանջարեղեն, կարտոֆիլ և ծխախոտ (տե՛ս Աղյուսակ 2):

Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերից Հայաստանում արտադրվում է ցորեն, եգիպտացորեն, գարի, վարսակ, ոլոռ, լոբի, ոսպ, սիսեռ և այլն: Ամենաշատ արտադրվող հացահատիկը ցորենն է, որի արտադրությունը 2020 թվականին կազմել է 132,0 հազար տոննա:

2020 թ.-ին Հայաստանում ցորենի ինքնաբավության աստիճանը կազմել է

24.4%



Ցորենի ինքնաբավության աստիճանը պարենի անվտանգության տեսանկյունից մտահոգիչ է:

Դեռևս 2002 թվականին ընդունված «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով (ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին, 2002) սահմանվում է պետական պահուստում պարենային պաշարների, այդ թվում՝ ցորենի կուտակումը և այդ պաշարների արդյունավետ օգտագործումը: Սննդամթերքի արտադրության անհրաժեշտ և փաստացի մակարդակների հաշվեկշռի հիման վրա պարենային շուկայի պետական հսկողությունն իրականացնում է Կառավարությունը: Միաժամանակ 2020-ին նյութական պահուստի համակարգի զարգացմանն ուղղված իրավական դաշտի բարեփոխման համատեքստում ընդունվել է ՀՀ «Նյութական պահուստի մասին» օրենքը (2020), որը կարգավորում է նյութական պահուստի ձևավորման, տեղաբաշխման, պահպանման, օգտագործման, համալրման և թարմացման հետ կապված հարաբերությունները: Ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկը մի շարք ապրանքների թվում ներառում է նաև ներմուծվող պարենային ցորենի և դրա արտադրության համար անհրաժեշտ ներմուծվող հումքի չնվազող պաշարները, որոնց կուտակման ժամանակացույցը և հաշվառման կարգը սահմանում է Կառավարությունը: Ըստ այդ կարգի՝ ցորենի նախորդ տարվա ներմուծված նվազագույն ծավալը, որից սկսած գործում է ռազմավարական պաշարների պահուստի ձևավորման պահանջը, սահմանվել է 4000 տոննա/տարի (ՀՀ կառավարության որոշում, 2020): Այդուհանդերձ, ցորենի ռազմավարական պաշարների արտադրությունը երկրի ներսում խթանելու օրենսդրական շրջանակն ու գործնական քայլերն առաջնահերթություններ չեն: Միչդեռ ներմուծման միջոցով ցորենի պահուստների համալրման համար ծախսվող միջոցների ներդրումը երկրի ներսում կարող է գյուղատնտեսության զարգացման և արտադրողականության բարձրացման կարևոր խթան լինել:

Ընդհանուր առմամբ թե՛ հացահատիկային, թե՛ հատիկաընդեղեն մշակաբույսերի արտադրության ծավալները և բերքատվության ցուցանիշները 2016 թվականից շարունակաբար նվազել են: Օրինակ, եթե 2016 թվականին արտադրվել է 21,000 տոննա եգիպտացորեն (հատիկի համար), ապա 2020 թվականին այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 6,500 տոննա: Հաճարի դեպքում նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 19,300 և 7,000 տոննա (այսինքն՝ նվազել է շուրջ 12,300 տոննայով): Նվազման դինամիկա է գրանցվել նաև կերի արտադրության ցուցանիշների դեպքում, այսպես՝ 2020 թվականին 2016 թվականի համեմատ գրեթե կրկնակի նվազել է թե՛ խոտի ու կանաչ կերի, թե՛ կերային մշակաբույսերի (օրինակ՝ անասնակերի համար արտադրվող շաքարի ճակնդեղի) արտադրության ծավալները: Այս անկումն իր ուղղակի ազդեցությունն ունի Հայաստանում անասնապահության ոլորտի զարգացման վրա:

Ի տարբերություն հացահատիկի՝ բազմամյա մշակաբույսերի (միրգ և հատապտուղ) արտադրությունը կազմակերպվում է առավելապես ոռոգելի պայմաններում (ավելի քան 80%-ը): Պտղատու այգիների և հատապտղանոցների մեծ մասը տեղակայված է Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Արագածոտնի մարզերում: Պտղաբուծությամբ են զբաղվում շուրջ 70.000 գյուղական տնտեսություն, որոնց հիմնական մասը (90%) արտադրությունը կազմակերպում են մեկ հեկտարից փոքր հողատարածքի վրա: Հայաստանում արտադրվող հիմնական պտղատեսակներից են ծիրանը, դեղձը, սալորը, բալը, խնձորը, տանձը, նուռը, ընկույզը և այլն: Վերջին տարիներին Հայաստանում ընդհանուր առմամբ աճել է պտղատու այգիների և հատապտղանոցների տարածքը և ստացվող բերքի ծավալը: 2016-ի համեմատ 2020-ին պտղահատապտղային տնկարկների տարածքը ավելացել է 3.300 հեկտարով, իսկ արտադրված բերքի ծավալը՝ 31,7 հազար տոննայով (տե՛ս Աղյուսակ 2): Այդուհանդերձ մրգի և հատապտղի արտահանման ծավալները վերջին երեք տարիների ընթացքում նվազել են՝ 2020-ին 2018-ի համեմատ արտահանվել է 7.400 տոննա ավելի քիչ: Ի տարբերություն մրգի և հատապտղի՝ խաղողի արտահանման ծավալները նույն թվականներին աճել է շուրջ 66,6%-ով՝ 2020-ին կազմելով 25,500 տոննա: Խաղողի այգիների հիմնական մասը (շուրջ 75%) զբաղեցված է խաղողի տեխնիկական տեսակներով՝ գինու և կոնյակի արտադրության համար:

Գինին և կոնյակը կարևոր տեղ են զբաղեցնում Հայաստանից արտահանվող պարենամթերքի ընդհանուր ծավալում: Գծապատկեր 2-ի տվյալները վկայում են, որ թե՛ գինու և թե՛ կոնյակի արտահանման ծավալների վրա 2019-2020-ին բացասական ազդեցություն է թողել Covid-19 համավարակը:

Գծապատկեր 2.

Կոնյակի արտահանման ծավալները 2016-2020 թթ.



Գինու արտահանման ծավալները 2016-2020 թթ.



(Պարենային ապահովություն և աղքատություն, 2021)

Հայաստանում արտադրվող բուսաբուծական հիմնական մթերքներից են նաև բանջարեղենը (լոլիկ, վարունգ, գազար, սոխ, սխտոր, կաղամբ և այլն), բոստանային մշակաբույսերը (ձմերուկ, սեխ) և կարտոֆիլը:

Աղյուսակ 3. Բանջարբոստանային մշակաբույսերի և կարտոֆիլի ցանքատարածությունը, բերքատվությունը և համախառն բերքը 2016-2020
(Պարենային ապահովություն և աղքատություն, 2021)

	Ցանքատարածությունը (հազ. հա)					Բերքատվությունը (հազ. հա)					Համախառն բերքը (հազ. հա)				
	2016	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2016**	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2016**	**2017**	**2018**	**2019**	**2020**
Բանջարաբոստանային	30,2	28,3	21,7	20,6	21,3	301,8	286,3	258,6	265,0	280,8	968,6	861,0	628,2	621,6	692,8
Բոստանային	7,3	6,8	4,6	4,3	4,0	325,1	316,8	276,3	300,6	317,1	236,1	215,8	126,8	128,0	126,6
Կարտոֆիլ	28,9	25,3	22,1	20,5	20,5	209,8	214,9	187,3	199,2	212,8	606,3	547,4	415,1	404,1	437,2

Աղյուսակ 3-ի տվյալները վկայում են, որ ընդհանուր առմամբ 2016-2019թթ. նվազել են բանջարանոցային մշակաբույսերի թե՛ ցանքատարածությունները և թե՛ համախառն բերքը, իսկ 2020-ին այդ ցուցանիշների և բերքատվության որոշակի դրական դինամիկա է գրանցվել: Բոստանային մշակաբույսերի դեպքում ցանքատարածությունների և համախառն բերքի ծավալի նվազման միտումն ավելի կտրուկ է՝ 2016-ի համեմատ 2020-ին երկու ցուցանիշներն էլ կրճատվել են ավելի քան 1,8 անգամ: Դա պայմանավորված է հատկապես ոռոգման ջրի և շուկայի հասանելիության խնդրով:

Ընդհանուր առմամբ նույն թվականներին նվազել են նաև կարտոֆիլի ցանքատարածության և համախառն բերքի ծավալի ցուցանիշները: Բացի դրանից՝ տարբեր տարիներին անկանոն են կարտոֆիլի բերքատվության ցուցանիշները (միջինը 205 g/հա)՝ հատկապես պայմանավորված որակյալ տնկանյութի, ինչպես նաև բույսերի պաշտպանության և պարարտանյութերի հասանելիությամբ: 2020-ին կարտոֆիլի ցանքատարածությունների շուրջ 73%-ը տեղակայված են եղել Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում:

Հայաստանում մշակվող տեխնիկական մշակաբույսերից է ծխախոտը, որի արտադրության ծավալները վերջին հինգ տարիներին նվազել է՝ 2016-ի 1.100 տոննայի

համեմատ՝ 2020-ին հասնելով 700 տոննայի: Տեխնիկական մշակաբույսերից փոքր քանակներով մշակվում է նաև արևածաղիկ և շաքարի ճակնդեղ:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Հայաստանի գյուղատնտեսությունը բնորոշվում է հողային և ջրային ռեսուրսների սակավությամբ և անարդյունավետ օգտագործմամբ: Գյուղատնտեսությունն ավելի խոցելի է դառնում հատկապես կլիմայի փոփոխության պայմաններում (Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում իրավական և ինստիտուցիոնալ դաշտ, 2020): Բացի սրանից՝ էկոլոգիական հիմնախնդիրները պայմանավորված են բուսաբուծության և անասնաբուծության ոլորտում կիրառվող ոչ կայուն գործելակերպի հետ: Ցանքաշրջանառության, բույսերի պաշտպանության, պարարտացման և ոռոգման սխեմաների ոչ պատշաճ կիրառումը, արոտավայրերի ու խոտհարքների չկարգավորված շրջանառությունը, անտառահատումները հանգեցնում են հողի քայքայմանը, աղտոտմանն ու անապատացմանը: Արդյունքում հողի քիմիական և ֆիզիկական հատկությունները փոփոխվում են, որն էլ իր հերթին քայքայում է հողը, նվազեցնում է օրգանական նյութերի ու սննդանյութերի քանակը և մեծացնում հողի էրոզիան: Հատկապես հողը աղտոտող ցածրորակ թունաքիմիկատների և պարարտանյութերի չափից շատ կիրառումը բացասաբար է անդրադառնում հողի որակի վրա: Հողի քայքայման և անապատացման են հանգեցնում նաև արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումն ու գյուղատնտեսական կենդանիների գերարածեցումը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020-ին Հայաստանում... եղել է բարելավման ենթական ավելի քան 160 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հող *(Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին, 2021)*:

Ընդ որում՝ Գծապատկեր 2.1-ից երևում է, որ հողերի վիճակի վատթարացման վրա կարող են ազդել շրջակա միջավայրի տարաբնույթ գործոններ, օրինակ՝ քայքայում ջրից և քամուց, աղակալում, գերհիդրատացում, անապատացում, քարերով ու թափոններով աղտոտում և այլն: Ենթադրվում է, որ ներկայում Հայաստանի տարածքի շուրջ 50.9%-ը գտնվում է անապատացման գործընթացում, իսկ մոտ 25.4%-ը՝ անապատացման վտանգի տակ (Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր, 2015): Ակնկալվում է նաև, որ կլիմայի փոփոխության ազդեցության տակ անապատացման գործընթացը կարող է ավելի արագ ընթանալ (Հայաստանում

կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում իրավական և ինստիտուցիոնալ դաշտ, 2020):

Գծապատկեր 2.1

Բարելավման կարիք ունեցող հողերն ըստ որակական բնութագրիչների (2020 թ.)



(Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին, 2021)

Ոչ պատշաճ ոռոգման և թերի ջրահեռացման պատճառով հատկապես Արարատյան դաշտավայրում մեծ խնդիր է հողի աղակալումը: Այստեղ ոռոգվող ընդհանուր 81,000 հա հողերից աղակալած հողի մակերեսը կազմում է շուրջ 24,000 հա: Այս հողերը գյուղատնտեսական նպատակներով կարող են օգտագործվել միայն քիմիական մշակմամբ հողը բարելավելուց հետո:

Խոտհարքների ու արոտավայրերի սխալ կառավարումը, գյուղատնտեսական տեխնիկայի պատճառով առանձին դաշտերի գերբեռնվածությունը, վարի և ցանքսի գործընթացների խախտումը, ոռոգման համակարգի անբավարար վիճակը, ցանքաշրջանառության բացակայությունը, միակողմանի պարարտացումը, ծառահատումները և մի շարք այլ գործոններ հանգեցնում են հողի էրոզիայի: Նման հողի վրա գյուղատնտեսական բույսերի մշակությունը բերում է բերքատվության նվազման և բերքի որակական հատկանիշների վատացման:

Հողի և ջրի աղտոտման պատճառ են նաև ենթակառուցվածքների ու հանքարդյունաբերական գործունեության ընդլայնումն ու քիմիական թափոնների

արտանետումը: Դրան գումարվում է հանրության շրջանում հողի և ջրի պահպանման կարևորության գիտակցության պակասը:

Ենթակառուցվածքների մաշվածության և ոռոգման ջրի անարդյունավետ կառավարման պատճառով ոռոգման ջրի կեսից ավելին կորչում է ոռոգման համակարգում և չի հասնում դաշտ, իսկ մյուս կեսը գյուղական տնտեսությունների կողմից անարդյունավետ է օգտագործվում: Ըստ ԱՎԾ տվյալների («Ջրօգտագործում և ջրհեռացում», 2021)՝ 2020-ին ջրի տրանզիտային կորուստները կազմել են ջրառի 23.1%-ը: Ընդհանուր առմամբ 2020-ին գյուղատնտեսական նպատակով ջրառը (ներառյալ ձկնաբուծությունը և անտառտնտեսությունը) կազմում է հանրապետության ընդհանուր ջրառի ավելի քան 83.6%-ը, մինչդեռ խմելու ջուրը և արդյունաբերական նպատակով ջրօգտագործումը համապատասխանաբար կազմել են 7.6% և 8.8%: Ջրի օգտագործման արդյունավետության վրա ազդում է նաև ձկնաբուծությունը, որը մեծ քանակությամբ ստորերկրյա քաղցրահամ ջրային ռեսուրսներ է պահանջում: Միաժամանակ Արարատյան դաշտավայրում, որտեղ կենտրոնացած են ձկնաբուծարանների զգալի մասը, ջուրը չի վերամշակվում և օգտագործվում է միայն մեկ անգամ՝ սպառելով թարմ ստորգետնյա ջրի մեծ պաշարներ:

Ակնկալվում է, որ կլիմայի փոփոխության համատեքստում ջրի մատչելիության անկումը և ջերմաստիճանի բարձրացումը, ինչպես նաև հիվանդությունների և վնասատուների բռնկումները կհանգեցնեն մշակաբույսերի բերքատվության նվազման: Դրա հետ մեկտեղ կլիմայի փոփոխությունն արդեն իսկ բազում մարտահրավերներ է ստեղծում կենդանիների առողջության, գյուղական համայնքների տնտեսական կենսունակության ապահովման տեսանկյունից ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում (Fourth National Climate Assessment, 2017):

Ընդհանուր առմամբ Հայաստանի գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքները կհանգեցնեն արտադրողականության զգալի անկման, վնասատուների և հիվանդությունների կողմից բացասական ազդեցության ուժգնացման, անապատացման, հողի էրոզիայի և դեգրադացիայի հետևանքով գյուղատնտեսական ռեսուրսների կորստի, սննդի անվտանգության մարտահրավերների (Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում՝ իրավական և ինստիտուցիոնալ դաշտ, 2020, 8-9): Հայաստանի մարզերում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիությունը ներկայացված է քարտեզով:

Հայաստանի մարզերի խոցելիությունը բնական աղետների նկատմամբ*



* Աղբյուրը՝ ՀՀ ԱԻՆ Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն, (*տե՛ս Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում իրավական և ինստիտուցիոնալ դաշտ, 2020, 9)*

Մասնավորապես կանխատեսվում է, որ Հայաստանի գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխությունը կհանգեցնի՝

- ոռոգվող հողերի արտադրողականության կրճատման մոտ 24%-ով,
- արոտավայրերի ընդհանուր տարածքի և դրանց արտադրողականության կրճատման 4-10%-ով մինչ 2030 թվականը,
- խոտի բերքատվության նվազման 7-10%-ով, որն էլ իր հերթին կհանգեցնի անասնակերի արտադրության ծավալների նվազմանը,
- գյուղատնտեսական նշանակության հողերի վատթարացման (դեգրադացում), բնական արոտավայրերի վատթարացման ուժգնացման,
- անկայուն եղանակի՝ զուգորդված ուժգին փոթորիկների, սաստիկ քամիների և հորդառատ անձրևների հետ, որոնք վնաս կհասցնեն մշակաբույսերին ու բերքատվությանը՝ մինչ 2030թ-ը նվազեցնելով 8-14%-ով,
- ոռոգման ջրի լրացուցիչ պահանջի, որը կկազմի մոտ 202 միլիոն մ3,
- բույսերի և կենդանիների հիվանդությունների և վնասատուների բացասական ազդեցության ավելացման,
- պարենային անվտանգության խնդիրների (Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում իրավական և ինստիտուցիոնալ դաշտ, 2020, 8-9):

ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Ըստ 2021թ. տվյալների՝ Հայաստանի հողային ֆոնդի 68,8%-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, ընդ որում՝ դրանցից ոռոգելի են միայն 7,6%-ը (Հողային հաշվեկշիռ, 2021): Վարելահողերը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի 21,7%-ը: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների՝ առկա վարելահողերի շուրջ 50%-ը չի օգտագործվում (*Գյուղացիների 10 տոկոսը պետք է զբաղվի գյուղատնտեսությամբ. նախարարը կարևորեց ոչ գյուղատնտեսական աշխատանքների ատեղծումը գյուղում, 2021)*:

Հողերի անմշակ կամ անարդյունավետ լինելու պատճառներից մեկը համարվում է դրանց մասնատված լինելը: Այս խնդիրը լուծելու համար ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրում *(ՀՀ կառավարության ծրագիր, 2019)* նշվում է. «Կառավարությունն անթույլատրելի է համարում, որ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 1/3-ը մնացել է անմշակ: Կառավարությունը գործուն քայլեր է ձեռնարկելու չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը

նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ: Այս նպատակին հասնելու համար մշակվելու են խթաններ ու մեխանիզմներ»: Միաժամանակ ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների շրջանակում խնդիր է դրվում հողերի կոնսոլիդացման և մասնատված հողերը միավորման ու խոշորացման արդյունքում հասնել վարելահողերի շուրջ 80% նպատակային օգտագործման:

Գյուղատնտեսական արտադրությամբ հիմնականում զբաղվում են գյուղական ընտանիքներն ու տնտեսությունները: Գյուղականության ներկա վիճակը պայմանավորված է տնտեսական, սոցիալական, իրավական և էկոլոգիական մի շարք գործոններով: Հողատարածքների մասնատվածությունը, ոռոգման համակարգի և ենթակառուցվածքների հնացած լինելը կամ բացակայությունը, մոնոկուլտուրաները և ցանքատարածքների ու արոտավայրերի անարդյունավետ կառավարումը, հողերի դեգրադացիան և մի շարք այլ խնդիրներ հանգեցնում են գյուղական վայրերում բնակվող մարդկանց կենսապայմանների վատթարացման ու ստիպում նրանց հեռանալ գյուղից ու գյուղատնտեսությունից: Գյուղական բնակավայրերից միգրացիայի և հետևաբար հողի սեփականատերերի բացակայության պատճառով այսօր գյուղատնտեսական մի շարք հողատարածքներ լքված են: Բազմաթիվ տարիներ անմշակ մնալու պատճառով այդ հողատարածքների մի մասը կորցրել է առաջնային նշանակությունը, օրինակ՝ վարելահող հողատեսքերը արդենարոտավայր են դարձել: Այսպիսի հողերի միավորման ու խոշորացման գործընթացը բազմաթիվ մարտահրավերներով է պայմանավորված՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հողի սեփականատերերը շարունակաբար չեն վճարել հողի հարկը և պարտքեր են կուտակել:

Արտադրողականության անկման պատճառներից է գյուղատնտեսությամբ զբաղվողի համապատասխան գիտելիքի և հմտությունների բացակայությունը: Գիտություն, քաղաքականություն և գյուղատնտեսական պրակտիկ գործունեություն կապի խզումը, ինչպես նաև ագրարային խորհրդատվական համակարգի բացակայությունը ուղիղ ազդեցություն ունեն մրցունակ և կայուն գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու և արդյունավետ կառավարելու վրա: Գյուղատնտեսական արժեշղթաների բոլոր սեգմենտներում ներգրավված դերակատարների շրջանում տեղեկատվության և գիտելիքի, արդի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ու մեթոդների պակաս կա: Այս իրավիճակում գյուղատնտեսության ոլորտը համակարգող ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը թվային խորհրդատվական համակարգի անցնելու կոնցեպտներ մշակելու փուլում է և շարունակաբար կրճատում է մարզպետարանների գյուղատնտեսական խորհրդատվական, նորարարության և մոնիթորինգի վարչության գյուղատնտես-խորհրդատուների

հաստիքները: Օրինակ՝ օպտիմալացման արդյունքում Տավուշի մարզում այս վարչության մեկ գյուղատնտես-խորհրդատուն սպասարկում է գյուղական վայրերում բնակվող շուրջ 2337 քաղաքացու: Խորհրդատվական ծառայությունների այդպիսի կարողությունները և գյուղատնտես-խորհրդատուի ոչ պարբերաբար թարմացվող գիտելիքը բավարար չեն գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար: Գյուղատնտեսության ոլորտը համակարգողները նախատեսում են օպտիմալացման շրջանակում խորհրդատվության գործառույթները փոխանցել բանկերին կամ այն ընկերություններին, որոնց միջոցով ֆինանսական միջոցներ են մղվում գյուղատնտեսություն: Այստեղ հնարավոր է շահերի բախման ռիսկ, քանի որ այդպիսի ընկերություններն արտադրանքի ծավալն ավելացնելու նպատակով կարող են գյուղական տնտեսություններին մարդու առողջության և բնապահպանական տեսանկյունից ոչ կայուն մեթոդներ և տեխնոլոգիաներ առաջարկել (օրինակ՝ բերքն ավելացնելու նպատակով նորմայից շատ պարարտանյութեր ու թունաքիմիկատներ օգտագործել):

ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի N1886-Լ որոշմամբ ընդունված ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը սահմանում է. «Առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն, բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսվարողներ»: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ 2020-ին գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ներդրումների ծավալը կազմել է 101,0 մլրդ դրամ (Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր. տարեկան հաշվետվություն, 2020): Այդ միջոցները ծախսվել են գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, տավարաբուծության զարգացման, փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, ոռոգման և կարկտապաշտպան ցանցերի ներդրման, ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման և նմանատիպ մի շարք այլ պետական աջակցության ծրագրերի իրագործման համար: Կառավարության ծրագրի 2020թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը (2021) ամփոփում է գյուղատնտեսության ոլորտում կատարված ներդրումների արդյունավետությունը (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. 2020 թվականին գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կատարված ներդրումների արդյունքները

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2020-ին տրամադրվել է մոտավորապես 37 հազ. միավոր վարկ՝ շուրջ 63 մլրդ դրամի չափով
Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2020-ին հաստատվել է 131 շահառուի 186 լիզինգի հայտ 5.9 մլրդ դրամի չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 377 միավոր սարքավորում
Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2020-ին հաստատվել է 91 շահառուի 181 հայտ՝ շուրջ 22.3 մլրդ դրամի չափով, ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 16 000-ից ավելի բերքի գնման պայմանագրեր
Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 2300 հա հողատարածքի 1500-ից ավելի ապահովագրական պայմանագիր, 2020-ին ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 300 ապահովագրական հատուցում՝ շուրջ 150 մլն դրամի չափով

Պետական ներդրումները բանկերի ու մասնավոր ընկերությունների միջոցով ուղղվում են հատկապես մի քանի տասնյակ միջին և խոշոր հողատերերի ձևավորմանը և դրանց արդի գյուղատնտեսական տեխնոլոգիաներով (վերա)զինմանը: Արդյունքում սակավ կարողություններ և ռեսուրսներ ունեցող գյուղատնտեսությամբ զբաղվողները և նրանց ընտանիքները հիմնականում դուրս են մնում աջակցության այս ծրագրերից:

Գյուղական վայրերի և գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն են ուղղված նաև գործընկեր երկրների, միությունների և կազմակերպությունների մի շարք ծրագրեր: Դրանցից է 2020-ին մեկնարկած «Եվրոմիության Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագիրը *(The European Union Green Agriculture Initiative in Armenia Project Officially Launched, 2020)*, որն ուղղված է հատկապես Հայաստանի հյուսիսային մարզերում հավասարակշռված ներառական զարգացման աջակցությանը: Ծրագրի ընդհանուր 11,7 մլն եվրո բյուջեից 9,7 մլն-ն տրամադրում է ԵՄ-ն և 2 մլն-ն՝ ծրագիրն իրագործող Ավստրիական զարգացման գործակալությունը: Ծրագրի հայաստանյան գործընկերը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, իսկ դրա ներդրմանն աջակցում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP).

Հայաստանի հարավային մարզերի, հատկապես Սյունիքի գյուղական վայրերի զարգացմանն է ուղղվելու 2021-ին ԵՄ-ի հատկացրած շուրջ 2,6 մլրդ եվրոն *(Armenia: Remarks by Commissioner Oliv r V rhelyi at the Press Point with Acting Deputy Prime Minister Mher Grigoryan, 2021)*: Հաջորդ հինգ տարիներին այս ֆինանսական աջակցությունը նպատակ ունի խթանելու ներդրումները և նպաստելու տնտեսության, այդ թվում՝ գյուղատնտեսության զարգացմանը:

Չնայած գյուղական վայրերում պետական և միջազգային ծրագրերի միջոցով տարեկան մի քանի հարյուր միլիարդ դրամի հասնող ներդրումներ են իրականացվում, սակայն դրանք չեն նպաստում աղքատության ցուցանիշների նվազմանը և պարենային անվտանգության խնդիրների լուծմանը: 2020-ին ՀՀ-ում աղքատության մակարդակը գնահատվել է 27%, որը 0.6% տոկոսային կետով բարձր է 2019-ի ցուցանիշից (26.4%) *(Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020 թթ., 2021)*: Ընդ որում՝ գյուղական բնակավայրերում աղքատության ցուցանիշը 34,8% է, որից ծայրահեղ աղքատ է 1,2%-ը (քաղաքային վայրերում ծայրահեղ աղքատության ցուցանիշը 0,4% է, իսկ Երևանում՝ 0,2%): Շիրակի և Արագածոտնի մարզերում 2020-ին աղքատ է եղել բնակչության համապատասխանաբար 48,4% և 51,4%-ը: Ըստ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի 2021թ. դեկտեմբերի գնահատման՝ ՀՀ-ում տնային տնտեսությունների կեսից ավելին (56,4%) պարենով ապահովության խնդիր ունեն, իսկ դրանց 21,4%-ը համարվում են պարենի առումով անապահով (ՀՀ օրենքը գյուղատնտեսական կոոպերատիվների մասին, 2015):

Թույլ զարգացած են նաև գյուղական տնտեսությունների միջև համագործակցության և փորձի փոխանակման մեխանիզմները: 2015-ին ընդունված ՀՀ գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքը (ՀՀ օրենքը գյուղատնտեսական կոոպերատիվների մասին, 2015) սահմանում է, որ «կոոպերատիվի նպատակներն են համագործակցությամբ հասնել առկա ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, անդամների նյութական և այլ կարիքների բավարարմանը, նոր նախաձեռնությունների իրագործմանն ու գործունեության արդյունավետության բարձրացմանը» (Հոդված 4): ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրում (ՀՀ Կառավարության ծրագիր, 2019) խնդիր է դրել օժանդակել կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացմանը և սահմանել կոոպերատիվների կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ: Բայց Կառավարության ծրագրի գործունեության միջոցառումների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, բացի արտոնությունների գործիքակազմից, կոոպերատիվների ֆինանսական աջակցության կոնկրետ մեխանիզմներ չեն սահմանվում:

Ընդհանուր առմամբ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով և իրավական ակտերով (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը

Օրենսգրքեր և օրենքներ
Հողային օրենսգիրք
Հարկային օրենսգիրք
Ջրային օրենսգիրք
Ջրի ազգային ծրագրի մասին օրենք
Սերմերի մասին օրենք
Բուսական աշխարհի մասին օրենք
Տեղական ինքնակառավարման մասին օրենք
Օրգանական գյուղատնտեսության մասին օրենք
Մեղվաբուծության մասին օրենք
Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման մասին օրենք
Բուսասանիտարիայի մասին օրենք
Պարենային անվտանգության ապահովման մասին օրենք
Սննդամթերքի անվտանգության մասին օրենք
Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին օրենք
Անասնաբուժության մասին օրենք
ՀՀ-ում գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին օրենք
Անասնաբուժական դեղերի մասին օրենք
Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենք
Հիդրոօդերևութաբանական (ՀՕ) գործունեության մասին օրենք
Ռազմավարություններ և ծրագրեր
Գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը 2020-2030 թթ
ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր 2014-2025թթ.
Կառավարության ծրագիր 2019-2023թթ
Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր
COVID-19-ի բացասական հետևանքների չեզոքացման ծրագիր (ենթածրագրերով)
Կառավարության որոշումներ
N 685, 8 մայիսի, 2003թ., Ջրային համակարգերը ոռոգման, արոտավայրերի ջրարբիացման, հողերի լվացման ու աղազերծման և գյուղատնտեսական այլ նպատակներով օգտագործելու կարգը հաստատելու մասին

N 1692-N, 18 նոյեմբերի, 2004թ., Հանքային պարարտանյութերի
N 92-Ն, 25 հունվարի, 2005թ., Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին
N 276-Ն, 19 փետրվարի, 2009թ., Հողերի մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին
N 1477, 28 հոկտեմբերի, 2010թ., Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու կարգը
N 389-N, 14 ապրիլի, 2011թ., Արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու կանոնների մասին
N 1582-N, 10 նոյեմբերի, 2011թ., Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համակարգի վերաբերյալ
N 15, 13 ապրիլի, 2017թ., Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգին հավանություն տալու մասին
N 6, 16 մայիսի, 2019թ., 2019-2023 թվականների գործողությունների ծրագրի իրականացման գործողությունների վերաբերյալ
Հայեցակարգեր, ձեռնարկներ և այլն
Գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզի դեմ պայքարի հայեցակարգ
Արոտավայրերի մոնիտորինգի ձեռնարկ
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագիր (ԳԿՊԾ)
Արտակարգ իրավիճակներում մեթոդական ուղեցույց և միջգերատեսչական համագործակցության ընթացակարգեր

Բացի ներկայացված օրենսդրությունից՝ Հայաստանն անդամակցում է մի շարք միջազգային կառույցների և վավերացրել է մի շարք կոնվենցիաներ ու համաձայնագրեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են գյուղատնտեսության ոլորտի հետ (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6.

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտին առնչվող միջազգային պայմանավորվածություններն ու հաստատությունները:

Կոնվենցիաներ և համաձայնագրեր	Անդամության կամ վավերացման տարեթիվը
Բույսերի միջազգային պատշպանության մասին կոնվենցիա (IPPC)	2006
ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» հենքային կոնվենցիա	1993
Կիոտոյի՝ ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու կամ կայունացնելու մասին արձանագրություն	2002
Մոնրեալի՝ օզոնային շերտը քայքայող նյութերի մասին արձանագրություն	1999
Բազելի՝ վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին կոնվենցիա	1999
Ստոկհոլմի՝ կայուն օրգանական աղտոտիչների մասին կոնվենցիա	2003
Փարիզի՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի մասին համաձայնագիր	2017
Միջազգային կառույցներ	
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	1992
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ)	1993
Առևտրի համաշխարհային կազմակերպություն	2003
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)	2015
ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA)	2021

Չնայած Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ու կոնվենցիաներով, այդուհանդերձ օրենսդրությունում դեռևս բացակայում է «Գյուղատնտեսության մասին օրենքը», որը միտված կլինի ագրոպարենային համակարգի տարբեր դերակատարների միջև փոխհարաբերությունների համապարփակ կարգավորմանը և գյուղական բնակավայրերում կայուն ու ներառական քաղաքականության մշակմանը: Բացի դրանից՝ թվարկած տարբեր օրենքներում և իրավական ակտերում գյուղատնտեսությամբ զբաղվողին կամ գյուղական տնտեսությանը տրվում են միմյանցից տարբերվող մի շարք բնորոշումներ (օրինակ՝ ագարակատեր, ֆերմեր, գյուղացի, առաջնային արտադրող, գյուղացիական տնտեսություն և այլն)՝ այդպիսով չհստակեցնելով նրանց իրավական (և սոցիալական) կարգավիճակը: Գյուղատնտեսության մասին օրենքը և համապատասխան օրենսգիրքը պետք է հստակ սահմանեն գյուղատնտեսությամբ զբաղվողին կամ գյուղական տնտեսությանը վերաբերող իրավական կարգավորումները: Այդ կարգավորումները կարևոր հիմք կդառնան նաև գյուղատնտեսությամբ զբաղվողի սոցիալական պաշտպանվածության մեխանիզմների ստեղծման համար, որոնք ներկա օրենսդրությունում չկան:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Համայնքների խոշորացման գործընթացն, ըստ էության, ՀՀ վարչատարածքային բարեփոխումների կարևորագույն մասն է: Վարչատարածքային բարեփոխումները ՀՀ-ում իրականացվում են, քանի որ այդ ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ տարածքային և վարչական մասնատվածություն, տեղական ինքնակառավարման մարմինների ցածր կատարողական, սահմանափակ ռեսուրսներ (մարդկային, ֆինանսական և այլ), տեղական մակարդակում ծառայությունների մատչելիության ցածր մակարդակ և որակ, սահմանափակ հնարավորություններ տարածքային զարգացման համար, սահմանափակ հնարավորություններ ապակենտրոնացման համար:

Համայնքների խոշորացման գործընթացն ավարտվել է 2021թ -ին, որի արդյունքում նախկին 915 համայնքներից այժմ ձևավորվել են 79 (որից 72-ը՝ միավորված): Միավորված համայնքային փնջում ներառված համայնքների միջին թիվը 12.4 է: 01.11.2021թ. դրությամբ համայնքների միջին բնակչության թիվը 6979 է (առանց Երևանի՝ 4678), միավորված համայնքի միջին բնակչության թիվը՝ 12.184 (Վարչատարածքային բարեփոխումներ. խոշորացված համայնքներ, 2022):

Համայնքների խոշորացման հիմնական նպատակներն են՝

- համայնքային կարողությունների հզորացում, սեփական խնդիրները սեփական ուժերով լուծելու լայն հնարավորություն,
- համայնքներում հանրային ծառայությունների որակի բարելավում և քանակի ավելացում,
- համայնքների մրցակցային առավելությունների վերհանում և դրանց իրացմանը նպաստող ծրագրերի իրականացում,
- համայնքների տնտեսական զարգացման և կյանքի որակի բարելավման իրական նախադրյալների ստեղծում (Հաճախ տրվող հարցեր. Հայաստանի համայնքներում վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ, 2022, 1-3):

Այս ամենին զուգահեռ պետք է նշել, որ համայքների խոշորացման գործընթացը պարունակում է որոշակի ռիսկեր, մասնավորապես հետևյալները.

- Համայնքի ղեկավարները մեծամասամբ ընտրվում են կենտրոնից (Վարչատարածքային բարեփոխումներ. խոշորացված համայնքներ, 2022):
- Ապակենտրոնացման բարեփոխումներն իրականացվում են վատթարացող սոցիալ-տնտեսական իրավիճակի, աղքատության ցուցանիշների պայմաններում (Household's integrated living conditions survey anonymised microdata database (by Households), 2005):
- Համայնքների խոշորացման արդյունավետության վրա ազդում են ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ և մասնագիտական թույլ կարողությունները (Տեղական ինքնակառավարումը Հայաստանում, 2018, 120):

Մյուս կողմից՝ խոշորացված համայնքի բնակավայրերի միջև հեռավորության սահմանումը, որը չնայած ունի որոշակի փաստաթղթային կարգավորում, բայց բացթողումներով: Օրինակ՝ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորների ձևավորման» հայեցակարգում համայնքների միավորման չափորոշիչներից մեկն այն է, որ նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից չպետք է գերազանցի 20 կմ-ը (Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, 2011), բայց մշակված սցենարներից տարբեր շեղումներ են եղել (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, 2022): Սրան գումարվում է փնջային և շրջանային մոդելների համատեղ կիրառությունը՝ առանց կառավարման համակարգի փոփոխության:

Խոշորացված համայնքում բնակավայրերի թիվը ևս կարող է որոշակի խնդիրներ բերել, քանի որ միանգամից մեծ թվով համայնքներ միավորելը դառնում է

հետագայում բաժանելու խոչընդոտ, և այդ դեպքում ֆինանսական շատ ռեսուրսներ են անհրաժեշտ բնակչությանը փոփոխություններ ցույց տալու համար: Մյուս կողմից, ըստ փորձագիտական դիտարկումների, ծառայություններ մատուցելու տեսանկյունից փոքր բնակավայրերը մեծ բնակավայրերի համար բեռ են:

Կարևոր է նշել, որ խոշորացման արդյունքում ձևավորվում են երկու տեսակի համայնքներ՝ «գյուղ և քաղաք» և «գյուղ և գյուղ» միավորմամբ: Առաջին տարբերակում ռիսկայինն այն է, որ քաղաքային իշխանությունը կարող է տեղյակ չլինել գյուղացիների խնդիրներից, հատկապես այն համայնքներում, որտեղ միավորված բնակավայրերի թիվը մեծ է: Իսկ երկրորդ տարբերակով միավորելու դեպքում, օրինակ, ռիսկեր են առաջանում հողերի, արոտավայրերի միավորման հարցի վերաբերյալ:

Այսքանով հանդերձ պետք է նշել, որ համայնքների խոշորացումը ենթադրում է լիազորությունների ապակենտրոնացում, որի արդյունքում ՏԻՄ-երին կփոխանցվեն նոր լիազորություններ, որոնք կբարձրացնեն տեղական ինքնակառավարման արդյունավետությունը և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակն ու մատչելիությունը: Միևնույն ժամանակ անցում է կատարվում ՏԻՄ-երի ընտրության համամասնական ընտրակարգի: Համայնքներում նախատեսվում են նորարարական լուծումներ՝ միտված արդյունավետ կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցությանը:

ՄԱՍ 2.

ԳՅՈՒՂՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ ԱՅՍՕՐ

ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Հիմնական բացահայտումները

Գյուղականության ճգնաժամի հետազոտություններում մակրոցուցանիշներին զուգահեռ առաջնային խնդիրներից է գյուղաբնակների կենսական պայմանների, ապրելակերպի և բարեկեցության սուբյեկտիվ ընկալումների պարզաբանումը: Գյուղաբնակների շրջանում իրականացված ստանդարտացված հարցազրույցների արդյունքում ստացվել է հետևյալ ընդհանրական պատկերը: Ընտրանքային համակազմում ընդգրկված տնային տնտեսությունների միջին ամսական եկամուտը 91,3% դեպքերում մինչև 300,000 ՀՀ դրամ է, որից 45% դեպքերում՝ մինչև 100,000 ՀՀ դրամ, 33% դեպքերում՝ 101,000 - 200,000 ՀՀ դրամ և 14% դեպքերում՝ 201,000 - 300,000 ՀՀ դրամ (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3.

Տնային տնտեսության միջին ամսական եկամուտը (ներառյալ եկամտի բոլոր աղբյուրները)



Ընդ որում՝ հարցված գյուղաբնակների տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրների մեջ գերակշռող է գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը (33,4%), նպաստը և/կամ թոշակը (25,7%) և աշխատավարձը կամ վարձու աշխատանքը (21,3%): Ավելի քան յուրաքանչյուր 10-րդ ընտանիքի հիմնական եկամուտը արտասահմանյան դրամական փոխանցումներն են: Գյուղաբնակ ընտանիքների գրեթե 7%-ի եկամուտը ձեռնարկատիրությունն է և առևտուրը: Խոսքն ամենայն հավանականությամբ այն իրավիճակի մասին է, երբ գյուղացին տվյալ գործունեությունը հաստատ տարբերում է, ինչ-ինչ պատճառներով չի նույնացնում գյուղատնտեսության հետ, մինչդեռ ենթադրում ենք, որ վերջինս

անպայման ինքնանպատակ չէ, ակնհայտ ուղղակի առնչություն ունի առևտրի հետ, հաճախ ներառում է ձեռնարկատիրական (գուցե ոչ ֆորմալ) տարրեր՝ կազմակերպման ռացիոնալություն, պլանավորում, վարկավորում, ներդրումներ, ինովացիաներ և այլն (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4.

Որո՞նք են Ձեր տնային տնտեսության եկամտի հիմնական աղբյուր/ները



Հետաքրքիր է, որ հարցվողների 26,9%-ը նշել է, որ բարեկեցիկ ապրելու համար տնային տնտեսության միջին ամսական եկամուտը պետք է կազմի 401,000-500,000 ՀՀ դրամ, իսկ 22,8%-ը՝ 501,000 ՀՀ դրամ և ավելի: Գյուղական բնակչության 50.3%-ին բարեկեցիկ ապրելու համար բավարար է մինչև 400,000 ՀՀ դրամ ընտանեկան եկամուտը: Յուրաքանչյուր հինգերորդը ակնկալում է 201,000-300,000 ՀՀ դրամ եկամուտ: Մոտավորապես յուրաքանչյուր յոթերորդ ընտանիքին բավարար է 101,000 -200,000 ՀՀ դրամ ամսական եկամուտը: Միևնույն ժամանակ հարցվողների ընդամենը 5,3%-ն է նշել, որ բարեկեցիկ ապրելու համար անհրաժեշտ է ամսական միջինում մինչև 100,000 ՀՀ դրամ (տե՛ս Գծապատկեր 5):

Գծապատկեր 5.

Ձեր կարծիքով որքա՞ն պետք է լինի Ձեր տնային տնտեսության միջին ամսական եկամուտը բարեկեցիկ կյանքով ապրելու համար (N=360)



Հարկ է նկատել, որ տնային տնտեսությունների ակնկալվող եկամտի և փաստացի եկամտի տարբերությունը միջինում կազմում է 270,000 ՀՀ դրամ: Ակնկալվող եկամուտը տարբեր չէ փաստացի եկամտից մինչև 100,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող տնային տնտեսությունների 13,4% դեպքերում, 101,000 – 200,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող տնային տնտեսությունների 9,1% դեպքերում և 201,000 ՀՀ դրամ և ավելի եկամուտ ունեցող տնային տնտեսությունների 19,0% դեպքերում: Ընդ որում՝ փաստացի եկամտի աճին զուգահեռ մեծանում է նաև ակնկալվող և փաստացի եկամտի միջև տարբերությունը (X^2=20.226, p<0.05, Cramer's V= 0.235, CI=95%) (տե՛ս Գծապատկեր 6): Վիճակագրական նման կապն ամենայն հավանականությամբ պայմանավորված է բարեկեցիկ, ապահովված ընտանիքների սպառողական առանձնահատկություններով, առավել ծավալուն սպասումներով, սոցիալական կենսագործունեության ընդարձակությամբ: Այլ կերպ ասած՝ բարեկեցության որոշ մակարդակում դեպրիվացիան ավելի ցայտուն է դրսևորվում, քան սոցիալական ստորին շերտերում: Սրա մասին է վկայում նաև հասարակական այն օրինաչափությունը, ըստ որի՝ հասարակական ստորին շերտերի ներկայացուցիչները գրեթե չեն մասնակցում աշխատանքային միգրացիային: Բարեկեցությունը բալանսավորված է կիսաքաղցած գոյատևման օպտիմալ մակարդակում:

Գծապատկեր 6.

Ակնկալվող եկամտի և փաստացի եկամտի տարբերությունն ըստ տնային տնտեսությունների



Հարցված գյուղաբնակ տնային տնտեսությունների գրեթե յուրաքանչյուր տասներորդը սուբյեկտիվ ընկալմամբ ծայրահեղ աղքատ է: 9,6%-ի դեպքում գումարը բավականացնում է միայն սննդին: Իհարկե պետք է հաշվի առնել քաղաքային և գյուղական աղքատության որակական տարբերությունը, երբ գյուղացին որոշակիորեն սեփական սննդի գոնե որոշ մթերքների արտադրողն է, փոխանակային հարաբերությունների է մասնակցում: Նրան հասանելի են նաև գոյատևման համար

անհրաժեշտ նվազագույն միջոցները՝ էժանագին աշխատանք, աթար, ցախ: Գրեթե կեսի դեպքում (43,8%) գումարը բավականացնում է միայն սնունդ գնելու և կոմունալ վճարումներ կատարելու համար, 34,5% դեպքերում կարող են նաև հագուստ գնել: Ընդամենը 3,6% դեպքերում է, որ տնային տնտեսությունների եկամուտը բավականացնում է նաև թանկարժեք գնումներին (տե՛ս Գծապատկեր 7):

Գծապատկեր 7.
Տնային տնտեսությունների ֆինանսական վիճակը (N=365)



Այստեղ նույնպես որոշակիորեն ակնհայտ է տնային տնտեսության բարեկեցության սուբյեկտիվ գնահատականի և ակնկալվող եկամտի չափի միջև կապը: Ըստ Կրուսկալ-Ուոլիս վիճակագրական թեստի՝ այն նշանակալի է (H=19,595, p<0.001, CI=99%). որքան բարձր է գնահատվում տնային տնտեսության բարեկեցության մակարդակը, այնքան ավելի շատ գումար է անհրաժեշտ բարեկեցիկ ապրելու համար: Հետաքրքիր է, որ հարցվողների գրեթե յուրաքանչյուր չորրորդը (23,5%), որի եկամուտը բավարարում է միայն սնունդ գնելուն, համարում է, որ բարեկեցիկ կյանքով ապրելու համար բավարար է մինչև 200,000 ՀՀ դրամ տնային տնտեսության ամսական եկամուտ:

Գյուղական բնակավայրերի բնակարանային ֆոնդը հին է և մաշված: Գյուղաբնակների 40,2%-ն ունի տան/բնակարանի հրատապ նորոգման խնդիր: Համարյա յուրաքանչյուր հինգերորդը (20,3%) ունի տան/բնակարանի ջեռուցման խնդիր, 14,6%- դեպքում հրատապ է գույքի և/կամ տեխնիկայի ձեռքբերումը, իսկ 13,0% դեպքերում՝ վարկերի մարումը: Կոմունալ վճարումները, ծախսերը խիստ խնդրահարույց են 5,5%-ի համար (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 8):

Գծապատկեր 8.
Որո՞նք են բնակարանի հետ կապված կարևորագույն, հրատապ լուծում պահանջող խնդիրները



Հայաստանի գյուղական բնակավայրերում ջրամատակարարումը շարունակաբար մոդեռնիզացված չէ: Հարցված տնային տնտեսությունների մեծամասնության (65,7%) խմելու ջրի հիմնական աղբյուրը տնային կենտրոնացված համակարգի հոսող ջուրն է, իսկ 11,6%-ի համար՝ բակում կենտրոնացված համակարգի հոսող ջրի ծորակը (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 9):

Գծապատկեր 9.
Ո՞րն է Ձեր տնային տնտեսության խմելու ջրի հիմնական աղբյուրը N=361



Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տրված Գծապատկեր 11-ում, հարցվողների 38,4%-ը օգտվում է բակում կամ տնամերձ տարածքում տեղադրված առանց զուգարանակոնքի զուգարանից: Հարցվողների 30%-ը տանը առանձին հորին միացված զուգարան ունի, իսկ 26%-ը զուգարան ունի տանը կամ բնակարանում՝ միացված կենտրոնական կոյուղուն (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 10):

Գծապատկեր 10.
Տան զուգարանի նկարագրությունը



Կարևոր է փաստել՝ հարցվողների 8,6%-ը նշել է, որ իրենց տանը կամ բնակարանում լոգարան չունեն, իսկ 78,4%-ն ունի ցնցուղով լոգարան (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 11):

Գծապատկեր 11.
Տան լոգարանի նկարագրությունը



Հայաստանյան գյուղական բնակավայրերում խնդրահարույց է նաև ջեռուցումը: Հարցված տնային տնտեսությունների 41,1%-ը տունը կամ բնակարանը ջեռուցում է փայտի վառարանով, որը անպայմանորեն ենթադրում է առանց այն էլ սուղ անտառային տարածքների ոչնչացում՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներով: Գյուղաբնակների ընդամենը 18,1%-ն է բնակարանը/տունը ջեռուցում գազով: Գյուղաբնակների նյութական անապահովության, աղքատության մասին է խոսում այն հանգամանքը, որ վերջիններիս 14,1%-ը տունը կամ բնակարանը ջեռուցում է ընդամենը աթարով կամ հավաքվող ցախով: Գյուղաբնակների 13,1%-ը ջեռուցման համար օգտագործում է գազի անշարժ վառարան, որը ևս վկայում է բնակարանի ընդհանուր, թանկարժեք գազիֆիկացման բացակայության մասին (մանրամասն տե՛ս Գծապատկեր 12):

Գծապատկեր 12.

Ինչպե՞ս է հիմնականում ջեռուցվում տունը/բնակարանը



Բերված տվյալները ուղղակիորեն խոսում են աղքատության, բարեկեցության բացակայության մասին: Առավել ցածր բարեկացություն ունեցող տնային տնտեսությունները տունը ջեռուցում են գլխավորապես փայտի վառարանի (X^2=11,152, p<0.05, Cramer's V=0.175, CI=95%) և աթարի կամ հավաքված ցախի միջոցով (X^2=13,690, p<0.05, Cramer's V=0.194, CI=95%) (տե՛ս Գծապատկեր 13 և 14):

Գծապատկեր 13.

Տունը փայտով ջեռուցող տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ բարեկեցության սուբյեկտիվ գնահատումների



Գծապատկեր 14.

Տունը աթարով կամ ցախով ջեռուցող տնային տնտեսությունների բաշխվածությունը ըստ բարեկեցության սուբյեկտիվ գնահատումների



Գյուղական բնակավայրերի գոյության, գրավչության և գյուղաբնակների կյանքի կազմակերպման, սոցիալ-տնտեսական ինտեգրման, տեղի հետ կապվածության համատեքստում կարևոր է հասկանալ գյուղական ենթակառուցվածքների և ծառայությունների հանդեպ գյուղաբնակների վերաբերմունքը:

Գյուղաբնակներն ընդհանուր առմամբ բարձր են գնահատում գյուղի ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակը: Գազամատակարարման որակը շատ բարձր և բարձր են գնահատում հարցվողների համապատասխանաբար 67,0% և 22,5%: Գազամատակարարման վերաբերյալ բացասական վերաբերմունք ունեն գյուղաբնակների ընդամենը 10%-ը:

Գյուղական բնակավայրերի էլեկտրամատակարարման որակը բարձր են գնահատում հարցվողների 81,3%-ը: Իսկապես մեծ նվաճումներ կարելի արձանագրել գյուղերի լուսավորության հարցում, որից գոհ են բնակիչների համարյա 80%-ը, այնուամենայնիվ, կա նաև դժգոհություն (10,7%): Ընդհանուր առմամբ դրական արձագանքի է արժանացել գյուղի աղբահանությունը, որից գոհ են բնակիչների 72,2%-ը, սակայն միաժամանակ աղբահանությունը խնդրահարույց է հարցվողների գրեթե 15%-ի համար:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները վկայում են Հայաստանում, մասնավորապես գյուղական բնակավայրերում ինտերնետի տարածվածության,

հասանելիության և որակի մասին: Այսպես՝ ինտերնետից ընդհանուր առմամբ գոհ են բնակիչների բացարձակ մեծամասնությունը (77,6%), ինտերնետի որակին միջին գնահատական են տալիս հարցվածների 18,1%-ը:

Ցավոք, նման նվաճումների մասին հնարավոր չէ խոսել գյուղի ջրամատակարարման հարցում: Այստեղ, իհարկե, նույնպես մեծամասնությունն է գոհ, բայց համեմատության մեջ քիչ չափով՝ 64,8%: Միևնույն ժամանակ քիչ թե շատ ջրամատակարարումը խնդրահարույց է բնակիչների 35,2%-ի համար: Հակակարկտային կայանները նույնպես դժգոհություն են առաջացնում՝ 38,5%:

Նկատենք, որ եթե Երևան և մարզկենտրոն ուղևորվող տրանսպորտը ընդհանուր առմամբ դրական է գնահատվել՝ համապատասխանաբար 69,7% և 54,7%, ապա առավել ցածր է գնահատվել միջհամայնքային տրանսպորտը, որը չի գոհացնում հնարավոր ուղևորների 51,9%-ին: Տեղական նշանակության ճանապարհային որակը ևս, ըստ գյուղաբնակների, զիջում է պետական և/կամ մարզային նշանակության ճանապարհների որակին (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 15):

Գծապատկեր 15.

Գյուղի ենթակառուցվածքների և/կամ մատուցվող ծառայությունների որակի գնահատականն ըստ գյուղաբնակների



Ներգյուղական ճանապարհները խնդրահարույց են հարցվողների մեծամասնության համար՝ գրեթե 70%, որից համարյա 20%-ը ծայրահեղ վատ է գնահատել (տե՛ս Գծապատկեր 16): Որոշ չափով նման պատկեր է նաև այլ ներհամայնքային ճանապարհների դեպքում: Զարմանալիորեն վիճակագրորեն թույլ կապ գոյություն ունի ներգյուղական ճանապարհների որակի և անասնապահությամբ զբաղվողների մասնաբաժնի միջև, ըստ որի՝ որքան ճանապարհներն անորակ են, այդքան անասնապահները քիչ են՝ $X^2=12.061$, $p<0.05$, Cramer's V=0.182, CI=95%:

Գծապատկեր 16.

Ներգյուղական ճանապարհների որակն ըստ գյուղաբնակների ($X^2=12.061$, $p=0.017$, Cramer's V=0.182)



Նույն կերպ ներգյուղական ճանապարհները առավել բացասական են գնահատում գյուղաբնակները, որոնք տնամերձից բացի այլ հողատարածք չունեն՝ $X^2=9.298$, $p<0.05$, Cramer's V=0.159, CI=95% (տե՛ս Գծապատկեր 17):

Գծապատկեր 17.

Ներգյուղական ճանապարհների որակն ըստ գյուղաբնակների ($X^2=9.298$, $p=0.054$, Cramer's V=0.159)



Մյուս կողմից՝ անասնապահության մեջ ներգրավված տնային տնտեսության ներկայացուցիչներն ընդհանուր առմամբ հակված են առավել բարձր գնահատելու գյուղի հիմնական ենթակառուցվածքները, որոնցից են էլեկտրամատակարարումը ($X^2=14.229$, $p<0.05$, Cramer's V=0.197, CI=95%), գազամատակարարումը ($X^2=12.990$, $p=<0.05$, Cramer's V=0.198, CI=95%) և ինտերնետը ($X^2=12.034$, $p<0.05$, Cramer's V=0.186) (տե՛ս Գծապատկեր 18):

Գծապատկեր 18.

Գյուղի հիմնական ենթակառուցվածքների որակի գնահատումը կախված գյուղաբնակների անասնապահական պրակտիկաներում ներգրավվածությունից



Քննարկում

Հետազոտության արդյունքներն ուրվագծում են այժմյան հայաստանյան գյուղական բնակավայրերին բնորոշ, արժանապատիվ կյանքի ստանդարտներին հաճախ չհամապատասխանող կենսական պայմանները: Ակնհայտ համայնապատկերը զգալի աղքատությունն է, աղքատության մշակույթի տարածումը և հաստատումը, երբ կենսապայմանների հիրավի նվազագույն բարելավում է ընկալվում որպես հիմնարար խնդիրների ամփոփ լուծում: Ավելին՝ բարեկեցության բացակայության, աղքատության ուղղակի և անուղղակի դրսևորումները վկայում են դրանց պահպանման, անգամ խորացման ներուժի մասին (օրինակ՝ վերարտադրվող, արդյունավետ, պակաս վնասատու ջեռուցման անհասանելիություն):

Միևնույն ժամանակ աղքատությունը, պակաս բարեկեցությունը, արդյունավետ հեռանկարների բացակայությունն ունեն կառուցվածքաբանական հենքեր: Կենսական անհրաժեշտության ենթակառուցվածքները տկար են, անարդյունավետ: Ակնհայտ է, որ առանձին գյուղացին դրանց բարելավմամբ չի զբաղվի:

Ընդհակառակը՝ դրանք սեփական անհաջողության, հասարակական հրաժարման, գյուղից հեռացման մասնավոր պատճառ են: Աղքատության կայունությունը անուղղակի դրսևորվում է գյուղացիների սուբյեկտիվ ցածր ինքնագնահատականում: Արդի քաղաքի ու քաղաքային կյանքի հետ համեմատելիս հաճախ են հարաբերական զրկման դրսևորումները: Գյուղի բացասականը դրսևորվում է գյուղում ապրելու հերոսացմամբ գյուղում ապրելը անձնական սխրանք է պահանջում: Համեմատվում են ոչ միայն քաղաքն ու գյուղը, այլ նաև սերունդները:

Կուզեի, որ մեր գյուղացիներին հերոսացնեին, քանի որ էդ մարդիկ ամեն օր շփվում են էդ խնդիրների հետ՝ վատ ճանապարհները, գազի բացակայությունը, ջրի բացակայությունը, նոր աշխատատեղերի բացակայությունը: Շատ դժվար ա, մանավանդ երիտասարդների համար:

40 տ., արական, Լոռի

Գյուղի համար երևի միակ տեսանելի բանը, որ անում եմ, էդ էն ա, որ գյուղում եմ ապրում:... Ինչքան էլ, որ գյուղը սիրես, գյուղը լավն ա, բայց գյուղում ապրելն ավելի դժվար ա, քան քաղաքում: Ես՝ որպես եղբայր, կուզենամ, որ իմ քույրերը ավելի հեշտ կյանքով ապրեն:

40 տ., արական, Տավուշ

Ջահելները գիտեն արդեն, թե ինչ պիտի լինի՝ էդ կեղտոտ գործը թողնեն, իրանք հանգիստ, իրանց համար թեթև գործ գտնեն քաղաքում, գնան աշխատեն էդ ավելի ձեռնտու ա իրանց, քանց թե կեղտի ու թրիքի մեջ լինեն, բոլորն էլ ձգտում են, որ քաղաք գնան: Ջահելներն ասում են ... գյուղացու աշխատանքը կեղտոտ գործ ա:

65 տ., իգական, Լոռի

Հարկ է նկատել, որ քաղաքի համեմատությամբ գյուղական կյանքի դրական ներկայացումը հիմնականում էկոլոգիական՝ շրջակա անպիղծ բնության համատեքստում է:

... քաղաքի նման չի, բնական ա, մաքուր ա: Սարերի հոտը, ասենք առուների մոտով անցնում ես: Քաղաքում տրանսպորտը շատ ա, գյուղը մաքուր ա ...

60տ., իգական, Սյունիք

Կարող ենք ենթադրել, որ բնական, միջավայրային մաքրության առասպելաբանությունում թաքնված է նաև բարոյական համեմատական անպղծությունը, հերոսական մաքառման գլխավոր փոխհատուցումը, պայքարի

վերջնական իմաստավորումը: Չնայած անցանկալի սոցիալ-տնտեսական պայմաններին՝ վերը բերված համեմատական տվյալները դրական փոփոխություններ են մատնանշում հատկապես ենթակառուցվածքների զարգացման առումով: Հիմք ընդունելով 2011 թվականին ՀՀ գյուղական համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հետազոտության* արդյունքները՝ որոշակի սահմանափակությամբ** կարող ենք համեմատել գյուղի ենթակառուցվածքների որակի փոփոխությունը վերջին տասնամյակի ընթացքում: Ինչպես կարելի է տեսնել, առավելագույն բարելավումը տեղին է ինտերնետի պարագայում: Զեռքբերումներ կան նաև աղբահանության, գազամատակարարման, ապա նաև ջրամատակարարման ոլորտներում: Զարմանալիորեն նույն մակարդակին է հասնում էլէկտրամատակարարումից գոհունակությունը (տե՛ս Գծապատկեր 19):

* 2011 թվականին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիան ստանդարտացված հարցազրույց է իրականացրել ՀՀ գյուղական համայնքների ղեկավարների շրջանում (N=49): Համայնքների ղեկավարները ընտրվել են ՀՀ բոլոր մարզերից (Արարատ (N=4), Արմավիր (N=4), Շիրակ (N=4), Լոռի (N=5), Տավուշ (N=7), Գեղարքունիք (N=4), Արագածոտն (N=4), Կոտայք (N=8), Վայոց Ձոր (N=3), Սյունիք (N=6)) (այդ թվում, 12-ը սահմանամերձ և 37-ը ոչ սահմանամերձ համայնքների ներկայացուցիչներ, 9-ը ՀՀ աղքատ համայնքների ցուցակում ներառված և 40-ը չներառված համայնքների ներկայացուցիչներ):

** Մի դեպքում հետազոտության արդյունքները արտահայտում են գյուղաբնակների, մյուս դեպքում գյուղական համայնքների ղեկավարների՝ որպես գյուղաբնակների հավաքական կերպարի գնահատականները: Սակայն երկու դեպքում էլ մենք գործ ունենք ներկայացուցչական սուբյեկտիվ գնահատումների հետ, ուր 1-5 բալանոց սանդղակով գնահատվել է ենթակառուցվածքի որակը, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 5-ը՝ ամենաբարձր:

Գծապատկեր 19.

Գյուղի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների գնահատականների միջինը՝ ըստ 2011 և 2021 թվականների հետազոտությունների արդյունքների



Գյուղաբնակները ևս որակական հարցազրույցների ընթացքում անդրադառնում են այս փոփոխություններին:

> *Կարամ ասեմ մի բան՝ մեր ճանապարհն ա վերանորոգվել, ու ոնց որ կենդանություն ա տվել գյուղին: Էն ժամանակ խուսափում էին մեր գյուղ գան, ստեղով մեքենա չէր անցնում, որովհետևտև ահավոր էր ճանապարհը: Էս 4-5 տարի են վերանորոգել:*
>
> **65 տ., արական, Կոտայք**

Փաստորեն ենթակառուցվածքների, առավելապես ճանապարհի ընկալումը կրկնում է վերջինիս վերաբերյալ ավանդական, կիրառական առասպելաբանությունը: Այն սոսկ կապի ու հաղորդակցման տեխնիկական հնար չէ: Ճանապարհը արդեն 21-րդ դարում հերթական անգամ կյանք է տվել մեռածին: Այստեղ, ի միջի այլոց, գործ ունենք տարողորտ, մեծածավալ հետևանքներ ենթադրող սոցիալական լավատեսության գրավականի հետ: Գյուղաբնակների բարեկեցիկ կյանքի շուրջ պատկերացումներում՝ որպես վերջինիս աղբյուր, աշխատանքի և/կամ

զբաղվածության հենց գյուղատնտեսական ձևերը պարտվում և ստորադասվում են այլ արտադրա-արդյունաբերական ձեռնարկատիրությանը: Գյուղատնտեսությունը զարմանալիորեն արդյունավետ առևտրատնտեսական ձեռնարկ լինելուց հեռու է՝ կենսակերպ է, աննախապայման հրամայական, նույնիսկ անխուսափելի խոչընդոտ մարդավայել ապրելու համար: Մասնավորապես՝ գյուղում բարեկեցության մակարդակը բարձրացնելու համար գյուղաբնակները հատկապես կարևորում են ոչ գյուղատնտեսական ձեռնարկատիրության, արտադրամասերի հիմնումը և/կամ գործարկումը գյուղերում:

Գյուղատնտեսության մեջ ապագա չկա, *գյուղատնտեսության մեջ, եթե կողքից դու եկամուտ չունեցար, հողով սուտ ա, որ կարենաս ապրես:*

50 տ., իգական, Արարատ

Զգտելի, համեմատելի ապակողմնորոշող փարոսը շարունակաբար քաղաքն է, անգամ քաղաքից հեռու՝ գյուղում: Գյուղացին պահանջում է գյուղի արդյունաբերականացում: Անգամ երազանքը մարմնավորվում է դեռևս առաջին արդյունաբերական հեղափոխության արխայիկ տերմինաբանությունում:

Ախ գյուղիդ համար ի՞նչ անեն: ***Պըտի ինչ-որ ցեխեր դնեն, որ զարգանա՝ գյուղացիներդ աշխատեն,*** *որ աշխատանքի տեղ ըլնի: Ինչի՞ց պտի զարգանա գյուղը թե չէ...*

50 տ., իգական, Արարատ

Պայմանականորեն ասած՝ ականատեսն ենք գյուղացու պարադոքսի: Հաղթող գյուղացին հաղթում է գյուղը, շահում քաղաք, պարտվողը մնում է իր էության հենքի՝ հողի գերին:

Մարդու չարչարանքի ու աշխատածի դիմաց էտ եկամուտը չի ծածկում իրան: Ես ասեմ, որ գյուղացին հեռացավ հողից, դարձավ քաղաքացի՝նոր մի քիչ հասկացավ, որ ինքը կարողանում ա ապրի:

65 տ., արական, Արմավիր

Քաղաքի հետ հարաբերություններում գյուղացին վերարտադրում է իր հարաբերական դիրքի դասական, արդյունաբերական դրվածքները: Նա արդյունաբերական արտադրության, քաղաքի, քաղաքաբնակի գոյության գրավականն է: Պահանջում է իր կարևորագույն դերի վերականգնում, ապա նոր գյուղատնտեսության կայունություն:

Երազանքս այն է, որ մեր գյուղում պահածոների գործարան ըլնի:

35տ., արական, Արմավիր

Գյուղացին իր կայուն, հեռանկարային գոյությունը ենթադրում է միայն «քաղաքի հետ», «քաղաքի համար», «քաղաքի մեջ» և վերջապես «քաղաքի նման»: Դրա մասին է խոսում այն, որ բացի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքներից, գյուղաբնակները կարևորում են նաև ժամանակին քաղաքից եկած, գյուղացուն զարգացած մարդ-քաղաքացի դարձնող վաղեմի մշակութային ենթակառուցվածքների վերականգնումը, զարգացումը: Վերը ներկայացված պարադոքսը պահանջում է անգամ ոչ սովորական մանկական խմբակ կամ գյուղական ակումբ, այլ ամբողջ կինոթատրոններ և թատրոններ, որոնց առկայությունը, ըստ էության, վկայում է մշակութային մակարդակի մասին, թուլացնում է հողագործի սիմվոլիկ բեռը և վերջապես կապում նրան արդեն զարգացած գյուղին: Ոչ միայն առօրյայի արդյունավետ կազմակերպման նպատակով է գյուղացին պահանջում տեղական կրթություն՝ մանկապարտեզներ, դպրոցներ, մշակութային տներ, այլ նաև դրանով իսկ պայմանավորված տեղական մշակութային մրցակից վերնախավ, որը կփարատեր իր անցանկալի նսեմ դիրքը: Զարմանալիորեն լուսավորականությունը դարեր շարունակ անգամ 21-րդ դարում փրկողակ է գյուղացու համար:

Մեր գյուղի մտածելակերպի վրա ի՞նչը ազդեց նաև... քաղաքում տիկնիկային թատրոն ունեինք, որի տնօրենը գյուղացի էր: Ինքը որոշեց, որ տիկնիկային թատրոնը տեղափոխում ա մեր գյուղ: Ու ինքը մեզ որպես լուսավորիչ էր: Անընդհատ շփվում էր գյուղի երիտասարդների հետ ու բացատրում էր՝ ինչ ա էտ երիտասարդից կախված:

40տ., արական, Լոռի

Գյուղում հիմա կան լավ շենքեր, երաժշտական դպրոցներ-բան, վերանորոգված ա, առաջ քանդված էր, չկար, մանկապարտեզ կա, մի-քիչ վերանորոգված ա, էտ էլ նորոգին:

65 տ., իգական, Լոռի

Էսօր գյուղում ո՛չ մշակույթի օջախ կա, ո՛չ մանկապարտեզ կա: Նոր էտ ա ուզում են կարգավորեն ստեղ մանկապարտեզ ունեինք մի ժամանակ: Երեխա չհավաքվեց, փակեցին:

70տ., արական, Գեղարքունիք

Ընդ որում՝ 1990-ական թվականներին թափ հավաքած «La revanche de Dieux»-ն (Huntington, 1993) աստիճանաբար զիջում է իր նվաճողական դիրքերը: Նույն 21-րդ դարում փաստորեն դեռ իրեն չսպառած դասական լուսավորականությունը պայքարում է արդի եկեղեցականության հետ:

Էս քյասիբ երկրում՝ սոված ա ժողովուրդը, եկեղեցին ինչի՞ համար ա կառուցվում՝ կառուցողի համար, որ իրա անունը հիշվի: Ավելի լավ ա մշակութային ակումբը սարքի, մեր էրեխեքն էլ լավ զգան, կինո, թատրոն...

35տ., արական, Արմավիր

Գյուղացին աշխարհիկ մշակույթով հակադրվում է ոչ միայն կղերական իշխանությանը, համապատասխան սիմվոլիզմներին, այլ նաև քաղաքական իշխանությանը:

Մշակույթին քիչ ուշադրություն տրվեց, հիմա էդ մշակութային ակումբում, որտեղ նաև սպորտով էին մի ժամանակ զբաղվում, գյուղապետարանն ա: Ես կարոտով եմ հիշում՝ շատ հետաքրքիր էր այն ժամանակ՝ կինոխցիկ կար, միշտ կինո էին բերում, համերգներ էին բերում, թատրոններ: 90-ականներին փլվեց ամեն ինչ:

65տ., արական, Կոտայք

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄՆ ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական բացահայտումները

Գյուղին անդամակցելը, դրա մաս լինելը ենթադրում է սոցիալական ներառման՝ սոցիալական վստահության և համայնքային մասնակցության բարձր մակարդակ: Այսպես՝ գյուղաբնակներն ավելի շատ վստահում են տեղական իշխանություններին (75,3%-ը լիովին կամ մասամբ վստահում է), մասնավորապես համայնքապետին, քան պետական իշխանություններին: Երկրորդ տեղում ՀՀ վարչապետն է, որին այս կամ այն չափով վստահում են գյուղացիների 60,4%-ը. համոզված կարող ենք ասել, որ խոսքն այստեղ անպայման ոչ թե պաշտոնի, այլ անձի մասին է: Միևնույն ժամանակ գյուղացիության շրջանում նվազագույն վստահություն են վայելում իշխանական ինստիտուտներից ՀՀ կառավարությունը (40,6%) և ՀՀ նախագահը (43,1%), որի երկրորդական դերն ու պայմանական բնույթը անհասկանալի է գյուղացիների համար: Մեծագույն անվստահությունը տեղին է Ազգային ժողովի դեպքում (59.1%) (տե՛ս Գծապատկեր 20):

Գծապատկեր 20.
Ինչքա՞ն եք վստահում ...



Նշված հարաբերական դիրքավորման մասին են վկայում առօրեական հարաբերությունները: Գյուղաբնակների գրեթե կեսը (49%) գյուղական մակարդակի խնդիրների դեպքում կդիմի գյուղապետին կամ վարչական ղեկավարին (խոշորացված համայնքների դեպքում), իսկ մեկ քառորդը (25,5%)՝ մարզպետին: Միևնույն ժամանակ 12,3%-ը նույն խնդրով պատրաստ է դիմել խոշորացված համայնքի ղեկավարին (տե՛ս Գծապատկեր 21):

Գծապատկեր 21.
Գյուղական մակարդակի խնդիրների դեպքում ու՞մ կդիմեք (N=204)



Սոցիալական բարձր վստահության և սոցիալական փոխշահավետ հարաբերությունների մասին է խոսում այն, որ գյուղաբնակների կեսից ավելին (51,8%) անհրաժեշտության դեպքում պարտքով գումար վերցնելու խնդրանքով կդիմի իր համագյուղացուն (տե՛ս Գծապատկեր 22): Իհարկե, ցավոք, հետազոտության մեթոդաբանությունը թույլ չի տալիս բացահայտել այդ քայլին դիմելու լեգիտիմությունը, նախապատմությունը, պայմանները:

Գծապատկեր 22.

Անհրաժեշտության դեպքում կդիմե՞ք Ձեր համագյուղացուն պարտքով գումար վերցնելու խնդրանքով N=369

Գյուղում փոխներառման, գյուղական համայնքին, հարաբերություններին անդամակցելու կարևորագույն ցուցանիշ է գյուղաբնակների սոցիալական հեռավորությունը տեղական և ոչ միայն, կոնկրետ և վերացական սոցիալական կատեգորիաների ներկայացուցիչներից: Գծապատկեր 23-ում ներկայացված է ՀՀ գյուղաբնակների սոցիալական հեռավորությունը սեփական գյուղի և ՀՀ այլ բնակավայրերի բնակիչներից, երևանցիներից, սփյուռքահայերից, հարուստներից ու աղքատներից:

Գյուղաբնակներն իրենց առավել մոտ են համարում սեփական գյուղի բնակիչներին՝ 61,0% դեպքերում նրանց դիտարկելով ընտանիքի ամենամոտ անդամի՝ ամուսնու/կնոջ կարգավիճակում: Նկատենք, որ գյուղաբնակների միայն 35,7%-ն է երևանցիներին դիտարկում նույն կարգավիճակում: Հետաքրքրական է գյուղացիների դասակարգային հարաբերական դիրքավորումը. աղքատ գյուղացին զարմանալիորեն սոցիալապես ավելի մոտ է հարուստին, քան կարծես «իր նմանին»: Վերջիններիս 52.5%-ը տեսնում է հարուստին իր հարազատ ամուսնու/ կնոջ կարգավիճակում՝ ի տարբերություն աղքատների, որոնց այս կարգավիճակում հայտնվելու հավանականությունը ընդամենը 38,0% է: Իհարկե, պարզաբանումները պահանջում են լրացուցիչ նպատակաուղղված հետազոտություններ: Կարելի է ընդամենը ենթադրել, որ բարեկամությունը հարուստի հետ սոցիալական վերընթաց շարժունության հաստատ հնարավորություն է: Միևնույն ժամանակ գյուղաբնակների 21,0%-ը չի ցանկանում սոցիալական ոչ մի կապ ունենալ աղքատների հետ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 23):

Գծապատկեր 23.

Գյուղաբնակները առավելագույնը ի՞նչ կարգավիճակով կարող են հարաբերվել նշված կատեգորիայի ներկայացուցիչների հետ



Գյուղին բնորոշ է քաղաքացիական պասիվությունը: Մասնավորապես՝ հարցված գյուղաբնակների 82,4%-ը վերջին մեկ տարվա ընթացքում երբեք չի մասնակցել բողոքի ակցիաներին և/կամ ցույցերին, 69,1%-ը՝ քաղաքական գործիչների հետ հանդիպումներին, իսկ 61,0%-ը՝ իրենց համայնքապետի հետ տեղի ունեցող հանդիպումներին և/կամ քննարկումներին: Հանրային հաղորդակցությունների սոցիալական տիրույթը նեղ է, ավանդական, ամենայն հավանականությամբ դասակարգային, ոչ ֆորմալ: Առավել հաճախ գյուղաբնակները մասնակցում են իրենց համագյուղացիների հետ քաղաքական թեմաներով ոչ ֆորմալ զրույցներին և/կամ բանավեճերին (ավելի մանրամասն տե՛ս Գծապատկեր 24):

Գծապատկեր 24.

Վերջին 1 տարվա ընթացքում Դուք մասնակցել եք ...



Պատկերն այլ է, երբ խոսքը վերաբերում է տեղական մակարդակի ոչ ֆորմալ միջոցառումներին: Գյուղաբնակների մեծ մասը մասնակցում է հարազատների կամ բարեկամների (56,9%-ը՝ միշտ, 28,6%-ը՝ հաճախ), ապա հարևանների (34,4%-ը՝ միշտ, 30,9%-ը՝ հաճախ) կազմակերպած խնջույքներին և ուրախ միջոցառումներին: Նրանց կեսից ավելին (62.6%) կարող է առանց առիթի հյուր գնալ հարևաններին կամ համագյուղացիներին: Միևնույն ժամանակ գյուղացիները առավել պասիվ են համագյուղական տոներին և ուրախ միջոցառումներին մասնակցելու հարցում (22,3%-ը երբեք չի մասնակցում նման միջոցառումներին) (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 25):

Գծապատկեր 25.
Գյուղաբնակների սոցիալական շփումների հաճախականությունը



Վիճակագրական նշանակալի կապ է ի հայտ գալիս գյուղաբնակների տնային տնտեսության միջին ամսական եկամտի և խնջույքներին կամ ուրախ միջոցառումներին մասնակցության հաճախականության միջև. որքան բարձր է տնային տնտեսության միջին ամսական եկամուտը, այնքան առավել հաճախ են գյուղաբնակները մասնակցում խնջույքների կամ ուրախ միջոցառումների, որը վկայում է այսպես կոչված սոցիալական աղքատության (թույլ սոցիալական ներառում) և նյութական, մոնետար աղքատության կապի մասին:

Այս տանդեմն է, որ այլ հավասար պայմաններում ապահովում է աղքատության թակարդի կենսունակությունը, անելանելի աղքատության սերնդեսերունդ շարունակականությունը (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7.

		Մասնակցո՞ւմ եք հարազատների կամ բարեկամների խնջույքներին և ուրախ միջոցառումներին	Մասնակցո՞ւմ եք հարևանների կամ համագյուղացիների խնջույքներին և ուրախ միջոցառումներին
Տնային տնտեսության միջին ամսական եկամուտը	Սպիրման ρ	0.110	0.106
	p	0.037	0.046
	N	357	357

Սոցիալական կապերը լավագույնս են բնութագրում փոխադարձ օգնությունն ու աջակցությունը: Գյուղի առօրյա պրակտիկաներում, ինչպիսին են շինարարությունն ու նորոգումը, հողագործությունն ու անասնապահությունը, անհրաժեշտության դեպքում ամենահաճախը օգնության են հասնում հարազատներն ու բարեկամները: Ընդ որում, եթե ընկերները 8,8% դեպքերում օգնում են շինարարության կամ նորոգման ժամանակ, ապա գրեթե երբեք չեն օգնում հողագործության և անասնապահության հարցերում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 26):

Գյուղը այսօր նույնպես վերարտադրում է տոհմատիրական, ընտանիքակենտրոն հարաբերությունները, որի մեջ անգամ գյուղական ընկերները ծայրահեղ սահմանափակ մուտք ունեն: Ըստ այդմ՝ արտաքին մակրոգործոնների ազդեցության տակ ուժգնացող անհատականացման պայմաններում գյուղացին խնդիրների առջև միայնակ է, լավագույն դեպքում հնարավոր է ընդամենը սեփական ընտանիքով: Դիտորդի առջև է ֆրագմենտար, ընդամենը նվազ ձևական ինտերակցիաները դեռևս պահպանող, փոխադարձ օտարված գյուղը, և կարճաժամկետ հեռանկարում ավանդական համայնքի վերականգնում ենթադրող բարեփոխում հավանաբար անհնարին է: Ահա բնութագրական միկրոմակարդակում գյուղականության ճգնաժամի ակնառու օրինակ:

Գծապատկեր 26.

Ովքե՞ր են հիմնականում օգնում Ձեզ...



Քննարկում

Ինչպես տեսանք, գյուղաբնակները զգալիորեն վստահում են տեղական իշխանություններին, սակայն ցածր է վստահությունը պետական իշխանությունների նկատմամբ: Սուբյեկտիվ ընկալումներում իշխանավորի հանդեպ վստահության փոփոխությունը ներկայացվում ժամանակաբանական դինամիկայում: Համեմատվում են անցյալ խորհրդայինն ու ներկան, երբ գյուղաբնակն այլևս միամիտ չէ, չի վստահում:

> ***Առաջվա մարդիկ շատ միամիտ էին, խելոք էին, հավատում էին,*** *որ ամեն ինչը լավ ա լինելու, հարթ ա լինելու, խոսակցություն չի լինի, վիճաբանություն չլինի, ոնց մենք ենք իրանց հարսնություն արել, նույն ձևի սերունդը կշարունակվի:*
>
> **65 տ., իգական, Արագածոտն**

Գյուղականության ճգնաժամի քննարկման համատեքստում սա կարևոր դիտարկում է: Եթե դասական սահմանմամբ «գյուղացին բնության ամեն կարգի պատահարները կապում է Աստծո անվան հետ, իսկ հասարակական կյանքի անցուդարձերը՝ թագավորի», քանի որ նա «... բնության և հեղինակության գերին է ...»*, և սա էր գյուղաբնակի իդեալական տիպը, ապա գյուղաբնակների գաղափարախոսական և գյուղական կյանքի մշակութային փոխակերպումների շուրջ վերոբերյալ դիտարկման մեջ արձանագրվում է քաղաքի և քաղաքային կյանքի օրինաչափ ազդեցությունը ներկայիս գյուղի և գյուղաբնակի վրա (Վերմիշյան, 2012): Նա այլևս առաջվա միամիտը չէ:

Շարունակելով վստահության քննարկումը՝ նկատենք, որ հատկապես

* Հղում անելով Գլեբ Ուսպենսկուն՝ այսպես է գրում Դավիթ Անանունը (Անանուն, 1915, 3):

իշխանությունների, մասնավորապես տեղական իշխանությունների հանդեպ սեփական դիրքորոշումները գյուղաբնակներն անձնավորում են՝ տանելով ոչ ֆորմալ հարաբերությունների դաշտ: Այս տեսանկյունից, որպես կենտրոնական կերպար, հատկապես առանձնանում է գյուղապետը: Ընդ որում՝ գյուղապետի անձնային (ոչ պաշտոնեական, բյուրոկրատական) որակները, ուժեղ և ունակ լինելը հաճախ դիտարկվում են որպես գյուղի, ինչպես նաև գյուղացու հաջողության գրավական:

Մեր գյուղապետը շա՜տ-շատ լավ բաներ ա անում էս գյուղի համար: Ցանկացած բնակչի համար... ***մի հատ հավեսով տղա ա, ջիգյարով էլ գործերը կառավարում ա... Գյուղապետը ասում ա՝ ես իմ բնակչի կողքին եմ:*** *Ինչ-որ պետք ա, ես կարող եմ իմ բնակչին օգնել: Էլ աղբամաններ գյուղի մեջ... ամեն ինչ: Փողոցների լուսավորելը, ասֆալտը... Մարդը փորձում ա:*

65 տ., արական, Արմավիր

Համայնքի առաջվա ղեկավարն էլ ... շատ լավ գործեր ա արել համայնքի համար: *Գազատար ա անցկացրել, էսօր համայնքը լրիվ ապահովված ա ջրով, և մեր մատուռն են կառուցել էլի դրա ժամանակ: Գազատարը, որ Շորժայից քաշել ա շատ մեծ դժվարություններով: 7 կիլոմետրի ջրագիծ ա անցկացրել, էս ներքի ցանցն ա փոխել: Մեծ գործեր ա արել:* ***Իսկ կողքի գյուղերի գյուղապետները տենց ջանք չեն գործադրում, դրա համար գյուղը տուժում ա:***

70 տ., արական, Գեղարքունիք

Գյուղաբնակների սոցիալական ներառվածության, սոցիալական վստահության և վերարտադրման համատեքստում կարմիր թելով անցնում է «մենք-նրանք» սոցիոլոգիական գիտության մեջ դասական դարձած ջրբաժանը, այն է՝

- *Տարբերությունները «եկվորների» և տեղացիների կամ բնիկների միջև*

Ակնհայտ են գյուղում խմբային ներքին բաժանման հարցերը, սակայն դասակարգային՝ սոցիալ-տնտեսական տարբերությունները երկրորդական են: Գերակա են պատմական, ծագումնաբանական, «սուբէթնիկ» առանձնահատկությունները: Գյուղի բնիկի կարգավիճակ ունեն ժամանակային առումով առավել վաղ բնակիչները, մնացածը «եկվորներ» են: Խմբերի միջև լարվածությունը, հակակրանքն ու ակնհայտ կոնֆլիկտները հատկապես նկատելի էին թե՛ 20-րդ դարի առաջին կեսին, թե՛ 90-ական թկականներին՝ հայ-ադրբեջանական պատերազմի ընթացքում վերաբնակեցված գյուղերի դեպքում: Մարդիկ լուծումը տեսնում էին խտրական, հակադիր ինքնությամբ խմբերով միասնականության և արտաքինից, մյուսներից տարանջատման մեջ:

Էկանք [քաղաքի անունը] էրկու հեկտար տարածք վերցրինք: Հերս ասում ա ***մենք 4,5 տարի ապրեցինք, բայց [քաղաքի անունը] բնակիչները մեզ օր ու արև չէին տալիս, ասում էին՝ սրանք թուրք են, եռլական են, տենց եկվորներին էին ասում, որ մենք եռլական ենք, իրանք բնիկ...*** *տենց հետո տեղափոխվեցինք ստեղ, իսկ ստեղ բոլորն էլ եկվորներ են եղել, սա թուրքի գյուղ ա եղել, հետո թուրքերին քշել են հայերը, ստեղ եկել ապրել:*

75 տ., արական, Արագածոտն

Դե մենք ստեղ ***Արծվաշենից ենք եկել 88-ականներին, հետո եկել են մնացածը*** *[ի նկատի ունի Բաքվից տեղահանված հայերին]... Կռիվներ ա եղել գյուղից գյուղ բնականաբար՝* ***հիմնականում բաքվեցիների և դաշքեսանի և մեր տեղացի հայերի հետ՝ Հայաստանի հայերի հետ****: Բայց հիմի էսօր համակերպվել ենք: Իրանց ադաթներ,տարբերություններն էլ հարմարվել են մեր հետ:*

70 տ., արական, Գեղարքունիք

- *Տարբերություններ քաղաքաբնակների և տեղացիների միջև*

Հաջորդ ընդարձակ, բազմագործոն՝ տնտեսական, սոցիալական, մշակութային տարբերակումը, ինչպես և սպասելի է, գյուղի և քաղաքի մեջ է: Գյուղացիներն ասում են, որ երևանցիներն ավելի շատ ***«հնարավորություններ ունեն», «իրենց կյանքն ավելի հեշտ է, քան գյուղացունը»***: Ընդ որում՝ երևանաբնակը դիտարկվում է որպես ***«գյուղաբնակին վերևից նայող»*** և ***«պիտակավորող»***: Գյուղաբնակները, ի տարբերություն երևանաբնակների և այլ քաղաքացիների, դիտարկվում են որպես ավելի ***«ազնիվ», «մարդասեր», «աշխատասեր»*** և ***«հայրենասեր»***: Ստեղծված է գյուղացու մասին հակադիր, համալիր հերոսապատում, ըստ որի՝ երևանցին այս յուրահատուկ բախման մեջ հակառակորդն է:

Գյուղացին շատ ա տանջվում, բայց երևանցին էդքան չի տանջվում, հազարից մեկն ա տանջանքով, որ տանջվում ա, գյուղացու չափ ոչ մեկ չի տանջվում:

50տ., ագական, Արարատ

Երևանի ժողովուրդը չի տեսել, էս կռիվը չի տեսել, մեր ապրելակերպը չի տեսել, պադվալներում օրերով ապրելը, խրամատ ենք փորել: Էդ դառնությունը իրանք չեն տեսել:

60տ., իգական, Սյունիք

Ի բնե բարոյական առավելությունը, մաքրությունը հատկանշորեն լրացնում է գյուղական բնակավայրի բնական անարատությունը. «կեղտոտ Երևան», «կեղտոտ երևանցի» - «մաքուր գյուղ», «մաքուր գյուղացի»:

Մենք երևանցուց ավելի մաքուր ենք, մեր գյուղի երեխեքը, որ համեմատում եմ չէ, հազար գլուխ բարձր են՝ *իրանց վարքով, իրանց խոսելաձևով, իրանց պահվածքով…*

65 տ., արական, Կոտայք

Ինքը մտածում ա, որ ինքը մեզնից առավել ա, *ինչո՞վ, ինչո՞վ ես դու առավել, թե՞ դու, դու ավելի կրթված ես, ավելի կարդացած ես, քանց մենք, մենք գյուղացի ենք…* ***լյուբոյ քաղքացին գյուղացուն արհամարհանքով ա նայում…***

35 տ., արական, Արմավիր

Գյուղացիության ճգնաժամը վերհանող մեկ այլ պարադոքս է այն, որ գյուղացին հաստատում է իր լինելիությունը հակադիր ինքնությամբ, ապացուցում իր գոյությունը երևանցու, երևանի հետ բախման մեջ:

Ինչի՞ ա ասում գեղցի: *Բայց չէ՞ որ էտ գեղցին ա մշակում, իրանք որ ստանում են էտ ամեն ինչը, ուտում են: Չի՛ կարելի տենց արտահայտություն անել: Շատ սխալ եմ գտնում ու* ***շատ վիրավորվում եմ ինքս****: Եթե կողքից լսում եմ, միջամտում եմ:*

65 տ., իգական, Կոտայք

… ասենք թե ***գյուղացին****, ամեն ինչում, որ* ***նեղն ես ընկնում հարևան են … օգնում են,*** *բայց քաղաքում հո չե՞ն օգնի, քաղաք կօգնե՞ն, չեն օգնի,* ***քաղաքում դուռը կդնեն վրեդ,*** *բայց գյուղում իրար ճանաչո՞ւմ են չէ՞, օգնում են հարց ու փորձ են անում, ըտենց ա:*

65տ., իգական, Լոռի

«Գյուղ-Երևան» տարբերակումը պակաս է մայրաքաղաքին հարակից գյուղերում, որտեղ քաղաքաբնակների և գյուղաբնակների միջև առանձնակի տարբերություններ չեն նկատում: Աշխատում է համագործակցության, փոխադարձ ճանաչման, մշակութային ծանոթության ավելի ընդարձակ կենսագրականը:

Քաղաքացին ո՞րն ա, ***քաղաքացին էլ մեր ժողովուրդն ա նույն…*** *հեն ա հարևան ունենք, Երևանից են, ու ստեղ էլ դաչա ունեն,* ***ոչ մի բանով մեզնից չեն տարբերվում:***

70 տ., իգական, Արագածոտն

- *Տարբերություններ այլ բնակավայրերի բնակիչների միջև*

Այստեղ նույնպես բարդ է խոսել ամփոփ համասեռության և համերաշխության մասին: Գյուղական բնակավայրերի հետ (հատկապես՝ հարևան) համեմատություններում առավել ընդգծվում են «նրանց»՝ այլ գյուղերի բնակիչների նկատմամբ սեփական որակական, բարոյական առավելությունները:

Մեր գյուղում էսպիսի մի հին խոսակցություն կա, ասում ա ***մեր գյուղացիների տաբատի ծնկներն ա մաշվում էնքան աշխատում են, իսկ կողքի գյուղի ժողովուրդը, որ աշխատասեր չեն իրանց տաբատի նստատեղի հատվածն ա մաշված,*** *որովհետև շատ են նստում:*

40 տ., արական, Տավուշ

Մեր գյուղի ժողովուրդը ավելի լավ ժողովուրդ ա . բնավորությամբ լավ են, հյուրասեր ժողովուրդ են, կոպիտ չեն: ***Ավելի լավն են, մարդկային են, քան թե դրանք [նկատի ունի կողքի գյուղերի բնակիչներին]:*** *Մեր ժողովուրդը լավն են, հանգիստ են, կռվարար չեն:*

70 տ., իգական, Արագածոտն

Անդրադառնալով գյուղում սոցիալական կապերի բնույթին՝ կարելի է նկատել, որ ընդհանուր առմամբ գյուղաբնակների պատմություններում գյուղի համայնական կյանքի, սոցիալական կապերի բացասական փոփոխություն է արձանագրվում հատկապես հետխորհրդային շրջանում: Ընդգծվում է նախկինի ոչ միայն համայնքային, խմբային համերաշխությունը, այլ նաև հենց խաղի, հաճույքի՝ ոչ «հոգսի» միջոցով դրական համագործակցությունը, համագործակցության նաև ենթակառուցվածքային հնարավորությունները: Ընդհանրապես նոստալգիկ նարատիվը պարունակում է անհոգս համերաշխություն: Ինչպես նախկինում տեսանք, հոգսը, գործը, պարտքը մոբիլիզացնում են առավել նեղ, միայն ընտանեկան խմբերը:

Այն ժամանակ մարդիկ գալիս էին հետաքրքիր էր, գործից հետո, ժամը վեցից հետո բոլորով վազում էին ստադիոն, վոլեյբոլի դաշտ, բասկետբոլի դաշտ, ամբողջ գյուղի ջահելությունը սպասում էին, որ հողի գործը պրծնենք, գնանք լողանալու բոլորով:

35 տ., արական, Արմավիր

Այստեղ նույնպես զարմանալիորեն համեմատությունը տարվում է որոշակիորեն առասպելացված, հաստատ համասեռացված խորհրդային անցյալի հետ: Դուրս է մնում հետխորհրդային արդեն երեք տասնամյակից ավել տևող ահռելի ժամանակահատվածը: Չնայած վերջինիս տարասեռությանը՝ այն մինչ այժմ ընկալվում է որպես «ամփոփ ներկա»:

Կոլեկտիվ տնտեսվարումը, համապատասխան աշխատանքի բաժանումը, հնարավոր է նաև կոլեկտիվ աշխատանքային պատասխանատվությունը վերադրվում է ավանդական համայնավարական հարաբերություններին, դրսևորումներին: Ինչ խոսք, ներկայիս անհատապաշտական կենսակերպը, փաստացի վարքը զուգահեռվում է կոլեկտիվիզմի արդեն ջերմ հիշատակմամբ: Հատկապես տարեցները կոլեկտիվ սխրանք և կոլեկտիվ պարգևատրում են սպասում:

Էն ժամանակ խաղողահավաք էր ընկնում, դրա հետ կապված ինչ-որ մի միջոցառում էր ընկնում, ամեն տարի սեպտեմբերի մեկին ոնց որ մի մեծ միջոցառում ընկներ: Միջոցառումների ժամանակ ուրախանում էինք էն ժամանակ շատ՝ գաթա էինք թխում, որ տանք հարսի ձեռը, ամբողջ աղջիկները, որ գալիս էին պարելու դրանց պտի տային գաթաներ: Գաթաները պարելով գնում էին ... Ասենք հարսանիք էր ընկնում, հիշում եմ, բոլորը գնում էին հարսին բերում էին, բան, բերում ուրախանում էին միջոցառումներին, կապ չունի հարևան, բարեկամ, բոլորով: Հետո գալիս էր երեկոյան ժամ, երեկոյան ժամ արդեն դա լինում էր հարսանքատունը, ով ուզենար, գնում էր ընտեղ ուրախանալու, իսկ հիմա տենց բան ոչ մեկ չի անում:

70 տ., իգական, Արագածոտն

Հարևանից ակնկալվում է ավելին, քան պարզապես հանգամանքների բերումով մոտ ապրողը:

Շփումը, միջմարդկային շփումը էլ չկա, հիմա հարևան ենք, բայց մեր մեջ առաջվա շփումը չկա:

60 տ., իգական, Սյունիք

Գյուղականության ճգնաժամը, համապատասխանաբար գյուղական կյանքի գրավչության պակասը արտահայտվում է ակտիվ հարաբերությունների, հաճույքի, ուրախության փաստացի կորստով: Գյուղերում ի միջի այլոց չկա սովորական մարդը, մարդկայինը:

Ես կարոտով եմ հիշում երեկոյան աղմուկները, որ ամբողջ փողոցում ինչքան երեխա կար, դուրս էին գալիս, խաղում էին: Հիմա էլ կա պարի խմբեր, բայց առաջվա նման չի, առաջ միտեսակ կյանքը եռում էր գյուղում:

65 տ , արական, Գեղարքունիք

Այս պայմաններում գյուղացին հավանաբար առավել հակված է արտագաղթի: Կյանքը, դրա առանձին կենսական պրակտիկաները հնարավոր է օպտիմալացնել փոփոխականների սահմանափակ հավաքածուով, երբ անձնական (նեղ ընտանեկան) բարեկեցությունն առաջնային է: Այլևս ավելորդ է հայացքը բացակա համայնքին, անվարձահատույց համայնքին:

Քանակական տվյալներով արձանագրված գյուղաբնակների փոխօգնության ու աջակցության ցածր մակարդակը թե՛ գյուղատնտեսական, թե՛ առօրյա պրակտիկաներում լավագույնս նկարագրվում է նաև որակական տվյալներում:

Հող մշակելուց բան իրար օգնելու դեպքեր չկան, իրար չեն օգնում, եղունգ ունես, գլուխդ քորի:

Նախկին համայնքային, ներգյուղական հարաբերությունները ինտենսիվ մոնետարացվում են, ապրանքայնացվում, օպտիմալացվում են ուղղակի տնտեսական բարեկեցություն ապահովող փոփոխականներով: Համայնքը առավել, քան երբևէ ընդամենը օպտիմալ փոխանակման խիստ նեղ կոնֆլիկտային հարաբերությունների վերարտադրողն է, կրողը:

70 տ., իգական, Արագածոտն

Հիմա ամեն մեկն իրա դարդն ա քաշում: Ես օգնության համար դիմել եմ, օգնող էլ ա եղել ... պարապ մարդիկ են եղել գյուղի մեջ կայնած, խոտը բարձելուց գնում ես մոտերը, չեն էլ գալի օգնեն: Մոտենում ես ու փողն էլ տալիս ես՝ յուրաքանչյուր բարձողին 3000 դրամ մի երթի համար տալիս ես:

70 տ., արական, Գեղարքունիք

Գյուղում համերաշխային զգալի ներուժ ունեն ինչպես ծիսական զանգվածային պրակտիկաները, այնպես էլ խմբային սարսափ ու ինտենսիվ էմոցիոնալ ռեակցիա ենթադրող իրադարձությունները: Այստեղ փոխօգնության և սոցիալական աջակցության մեխանիզմները հստակ աշխատում են:

Հայաթում զոհվեց անցած տարի մեր հարևանի երեխեն, մենք գյուղով հավաքվեցինք, ներդրումներ արեցինք ու սարքեցինք այգում հիշատակ, որ հիշեն էտ երեխուն: ***Որովհետև բոլորիս համար ինքը զոհվեց:***

65 տ., իգական, Կոտայք

Մարդ ա վիրահատական կարիք ունի, գյուղը փող ա հավաքում մարդուն օգնություն ա տալիս*, կարող ա տուն-տուն մտնեն, ասեն՝ ինչքան հնարավորություն ունեք, դուք մեզ օգնեք: Փողը հավաքում են, ցուցակագրում են, տենց տալիս են գյուղացիները:*

50 տ., իգական, Արարատ

Չնայած սոցիալական կապերի թուլացմանը ու սոցիալական հեռավորության մեծացմանը, այնուամենայնիվ, սոցիալական համերաշխությունը գյուղաբնակների կողմից դիտարկվում է որպես արժեք: Գյուղաբնակները նշում են, որ գյուղում ներքին նշանակալի կոնֆլիկտներ գրեթե չեն լինում: Առավել բացահայտ կոնֆլիկտները հիմնականում սպասելիորեն տնտեսական հենք ունեն, հենց գյուղատնտեսական պրակտիկաների համատեքստում են դրսևորվում, օրինակ, գյուղատնտեսական անկանոն գործունեությունը, մշակած հողը վնասելը, ոռոգման ջրի անկանոն օգտագործումը, խոտ գողանալը, խոշոր եղջերավոր անասուններ արածեցնելը:

Գյուղացին գրավում և պաշտպանում է, պայքարում է հենց նյութական ռեսուրսների և դրանով պայմանավորված հասարակական ներուժի համար: Սովորաբար նման կոնֆլիկտները մեղմ բնույթ են կրում և հիմնականում հարթվում են միջանձնային մակարդակում:

Վեճերը լինում են ջրի, հողի վրա: Օրինակ խի՞ քո ջուրը էս առվովս անկյունով գնաց, ընչի՞ դու էկար ավտոյով մտար ստե:

50տ., իգական, Արարատ

Խոտի համար են կռվում, հողի համար են կռվում: Խոտը մեկը մյուսի տեղը գնում քաղում, գողանում են:

65տ., իգական, Լոռի

Գյուղատնտեսական ռեսուրսները, մասնավորապես հողը սեփականացնել և սեփական բարեկեցության համար օգտագործելը բախվում է դեռևս իներտ, նախկին պատկերացումներին, ըստ որի՝ հողը ընդհանուր է, անտեր է: Մյուս կողմից՝ սեփական ձեռնարկատիրական տրամաբանությունը կոնֆլիկտածին է: Մարդիկ այլևս չեն գործում ընդհանուր, կոլեկտիվ տրամաբանությամբ: Մեկի գործունեությունը հակասում է մյուսի տնտեսվարմանը: Գյուղը նոր, բազմատարր և բազմաթիվ ուղղվածություններ ունեցող կոնֆլիկտների ականատեսն է:

Էս երկու տարի ա մենք փորձում ենք հասկացնենք, որ մենք հողից ենք եկամուտ ստանում, պետք չի կովերին արածացնելու համար մեր հողերի վրայով տանել բերել... ժողովրդի մեջ էդ շատ խորն ա նստած, թողնում են անասունին, գնում ա ուրիշի հողի վրայով անցնում ա, դրանից էլ վեճեր են սկսվում:

40 տ., արական, Լոռի

ՏԵՂԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԻԳՐԱՑԻԱՆ

Հիմնական բացահայտումները

Գյուղականության ճգնաժամն ախտորոշելու համատեքստում կենտրոնական են գյուղաբնակների տեղի ինքնությունն ու տեղի հետ ճանաչողական, հուզական և պրագմատիկ կապվածությունը բնորոշող ցուցիչները: Շատ տիպական են Գծապատկեր 27-ում ներկայացված տվյալները, համաձայն որոնց՝ առավել ուժեղ են գյուղաբնակների էմոցիոնալ և մասամբ կոգնիտիվ կապվածությունը գյուղին, իսկ պրագմատիկ կապվածությունը երկրորդական է: Մասնավորապես, գյուղաբնակների 81,8%-ը նշել է, որ հպարտ է լինել իր գյուղի բնակիչը, նրանց 66,5%-ը ճանաչում է իր համագյուղացիներին, և միայն 31,9%-ն է, որ հետաքրքրվում է գյուղացիների կյանքով: Գյուղաբնակների 32,4%-ը ցուցաբերում է որոշակի սոցիալական մեկուսացում և գյուղական կյանքով ու գյուղի անցուդարձով ընդհանրապես չի հետաքրքրվում:

Գծապատկեր 27.
Համաձա՞յն եք հետևյալ դատողությունների հետ



Գյուղին կապված լինելու տեսանկյունից կարևոր է այն ճանաչելը: Սեփական գյուղի պատմությունը լավ հայտնի է գյուղաբնակների ընդամենը 30,9%-ին: Այստեղ նույնպես խմբային ինքնության առաջնային հիմքը ընտանիքն է: Վերջինիս պատմությունը լավ հայտնի է գրեթե յուրաքանչյուր երկրորդ գյուղացու (51,1%) (տե՛ս Գծապատկեր 28):

Գծապատկեր 28.



Հարկ է նկատել, որ տեղի ինքնության և/կամ տեղի հետ կապվածության որոշ ցուցիչներ նշանակալի վիճակագրական կապի մեջ են հողագործական պրակտիկաներում ընդգրկված և/կամ տնամերձից զատ մշակվող հողատարածք ունեցող տնային տնտեսությունների ներկայացուցիչների պարագայում, քան անասնապահական գործունեության մեջ ներգրավվածների պարագայում (տե՛ս Աղյուսակ 8): Մասնավորապես հողագործական պրակտիկաներում ընդգրկված և/կամ տնամերձից զատ մշակվող հողատարածք ունեցող տնային տնտեսությունների ներկայացուցիչները ավելի հաճախ են հետաքրքրված գյուղական իրադարձություններով, հնարավորության դեպքում պատրաստ են նույնիսկ գումար ծախսել և իրենց կյանքն ու ապագան համարում են կապված գյուղի հետ, քան հողագործական պրակտիկաներում չընդգրկվածների դեպքում է:

Աղյուսակ 8.

Ման-Ուիտնի Յու վիճակագրական թեստի արդյունքները	**Տնամերձից զատ ունի հողատարածք**	
Ես հետաքրքրված եմ ամենով, ինչ տեղի է ունենում մեր գյուղում	U	17,691
	p	0.000
	N	370
Իմ կյանքը կապված է այս գյուղի հետ	U	16,555
	p	0.007
	N	369
Իմ ապագան կապված է այս գյուղի հետ	U	16,027
	p	0.009
	N	364

Հնարավորության դեպքում, պատրաստ եմ գումար ծախսել՝ գյուղը բարելավելու համար	U	16,116
	p	0.041
	N	368

Այսպիսով, ինչպես և կարելի էր ենթադրել, որոշակի, բավականին նեղ սահմաններում հայ գյուղաբնակին գյուղի հետ կապողը հենց հողն է, հողագործության ոլորտում հաջողությունները: Ավելին՝ տեղի հետ կապվածությունը վիճակագրորեն նշանակալի կապի մեջ է գյուղաբնակների սեռի և տարիքի հետ: Ընդհանուր առմամբ գյուղի հետ կապվածությունն ավելի ուժեղ է տղամարդկանց և ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ և պակաս է կանանց ու երիտասարդների պարագայում (տե՛ս Աղյուսակ 9).

- Եթե տարիքն առավել կորելացվում է գյուղին էմոցիոնալ և պրագմատիկ կապվածության և չի կորելացվում պրագմատիկ կապվածության հետ, ապա սեռը կապված է նաև պրագմատիկ կապվածության հետ: Տղամարդիկ ավելի, քան կանայք, պատրաստ են ժամանակ տրամադրելու և հնարավորության դեպքում գումար ծախսելու գյուղը բարելավելու համար:
- Մյուս կողմից, եթե գյուղի հետ իրենց կյանքը կապում են առավել տարիքով գյուղաբնակները, ապա կապվածությունը չի կորելացվում սեռի հետ:

Աղյուսակ 9.

		Սեռը	**Տարիքը**
Ես գիտեմ իմ ընտանիքի/ տոհմի պատմությունը	Սպիրման ρ	-0.192	0.257
	p	0.000	0.000
	N	369	369
Ես գիտեմ մեր գյուղի պատմությունը	Սպիրման ρ	-0.236	0.229
	p	0.000	0.000
	N	368	368

Ես ճանաչում եմ իմ համագյուղացիներին	Սպիրման ρ	-0.289	0.338
	p	0.000	0.000
	N	369	369
Ես հպարտ եմ, որ այս գյուղի բնակիչ եմ	Սպիրման ρ	-0.196	0.164
	p	0.001	0.014
	N	368	368
Ես հետաքրքրվում եմ իմ համագյուղացիների կյանքով	Սպիրման ρ	-0.341	0.352
	p	0.000	0.000
	N	369	369
Ես հետաքրքրված եմ ամենով, ինչ է տեղի ունենում մեր գյուղում	Սպիրման ρ	-0.355	
	p	0.000	
	N	369	
Իմ կյանքը կապված է այս գյուղի հետ	Սպիրման ρ		0.251
	p		0.000
	N		368
Իմ ապագան կապված է այս գյուղի հետ	Սպիրման ρ	-0.183	0.363
	p	0.005	0.000
	N	363	363

Պատրաստ եմ ժամանակ տրամադրել գյուղը բարելավելու համար	Սպիրմանի	-0.2370	
	p	0.000	
	N	367	
Հնարավորության դեպքում պատրաստ եմ գումար ծախսել գյուղը բարելավելու համար	Սպիրմանի	-0.229	
	p	0.000	
	N	367	

Գյուղականության ճգնաժամը բնութագրելու համար կարևոր է հասկանալ տեղին կապված լինելու և գյուղը լքելու գյուղաբնակների մտադրությունների փոխպայմանավորվածությունը: Թերևս գյուղից արտագաղթելը ամենաակնհայտ սոցիալական միտումներից է: Հայաստանի պարագայում գյուղից քաղաք (մասնավորապես՝ Երևան), գյուղից արտերկիր ժամանակավոր կամ մշտական բնույթի միգրացիան խաթարել և խաթարում է ներկայիս գյուղի առօրյականության կառուցվածք/ները, գենդերային և տարիքային հավասարակշռությունը և, որ ամենակարևորն է, արդյունավետ գյուղատնտեսական գործունեությունները:

Այնուամենայնիվ, հարցված գյուղաբնակների մեծամասնությունը՝ 61,5%-ը, նշել է, որ ոչ մի դեպքում մտադիր չէ հեռանալ իր բնակավայրից այլ տեղում մշտական բնակություն հաստատելու համար: Առաջիկա մեկ տարում գյուղից աշխատանքային ուղևորության մտադիր չեն մեկնել գյուղացիների 70,6%-ը (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 29 և 30):

Գծապատկեր 29.

Մտադի՞ր եք առաջիկա 1-2 տարում հեռանալ Ձեր բնակավայրից մշտական բնակության նպատակով (N=364)



Գծապատկեր 30.

Մտադի՞ր եք առաջիկա 1 տարվա ընթացքում մեկնել Ձեր բնակավայրից գումար վաստակելու/ աշխատելու նպատակով (ոչ մշտական բնակության) (N=360)



Գյուղաբնակների միգրացիոն մտադրությունները վիճակագրական նշանակալի կապի մեջ են սեռի, տարիքի, տեղի հետ կապվածության ցուցիչների հետ (տե՛ս Աղյուսակ 10): Մասնավորապես՝

- Այլ վայրում մշտական բնակության նպատակով գյուղից հեռանալու մտադրություն ունեն հիմնականում երիտասարդները:
- Այլ վայրում մշտական բնակության նպատակով գյուղից հեռանալու մտադրությունը միանշանակորեն կորելացվում է տեղի հետ կապվածության թե՛ կոգնիտիվ, թե՛ էմոցիոնալ և թե՛ պրագմատիկ ցուցիչների հետ. որքան ուժեղ է տեղի հետ կապվածության զգացողությունն, այնքան թույլ է գյուղը մշտապես լքելու տրամադրվածությունը:
- Ոչ մշտական, աշխատանքային նպատակով գյուղը լքելու մտադրություն ունեն հիմնականում տղամարդիկ և երիտասարդները:
- Ոչ մշտական, աշխատանքային նպատակով գյուղը լքելու մտադրությունը կորելացվում է միայն կյանքն ու ապագան գյուղի հետ կապելու հետ:

Գյուղաբնակը որքան իր կյանքն ու ապագան կապում է գյուղի հետ, այնքան թույլ է առաջիկայում աշխատանքի կամ գումար վաստակելու նպատակով գյուղն անգամ ժամանակավորապես լքելու տրամադրվածությունը:

Աղյուսակ 10.

		Մտադի՞ր եք առաջիկա 1-2 տարում հեռանալ Ձեր բնակավայրից այլ տեղում մշտական բնակություն հաստատելու նպատակով	Մտադի՞ր եք առաջիկա 1 տարվա ընթացքում մեկնել Ձեր բնակավայրից գումար վաստակելու/ աշխատելու նպատակով (ոչ մշտական բնակության)
Հարցվողի սեռը	Սպիրման ρ		0.166
	p		0.002
	N		359
Հարցվողի տարիքը	Սպիրման ρ	0.165	0.176
	p	0.002	0.001
	N	363	359
Ես ճանաչում եմ իմ համագյուղացիներին	Սպիրման ρ	0.128	
	p	0.015	
	N	363	
Ես հպարտ եմ, այսգյուղի բնակիչ եմ	Սպիրման ρ	0.210	
	p	0.000	
	N	362	

Իմ կյանքը կապված է այս գյուղի հետ	Սպիրման ρ	0.276	0.214
	p	0.000	0.000
	N	362	358
Իմ ապագան կապված է այս գյուղի հետ	Սպիրման ρ	0.380	0.253
	p	0.000	0.000
	N	357	354
Գյուղի երեխաների ապագան կապված է այս գյուղի հետ	Սպիրման ρ	0.216	
	p	0.000	
	N	343	
Պատրաստ եմ ժամանակ տրամադրել գյուղը բարելավելու համար	Սպիրման ρ	0.140	
	p	0.008	
	N	361	
Հնարավորության դեպքում պատրաստ եմ գումար ծախսել գյուղը բարելավելու համար	Սպիրման ρ	0.142	
	p	0.007	
	N	361	

Հավելենք, որ գյուղը մշտապես լքելու մտադրությունը պայմանավորված է տարիքով: Տարիքի մեծանալուն զուգահեռ նվազում է բնակավայրը մշտական լքելու մտադրությունը (N=363, Սպիրմանի ρ=0.248, p<0.001, CI=95%) (ըստ սեռի և տարիքի բաշխումը տե՛ս Գծապատկեր 31):

Գծապատկեր 31.

Մտադի՞ր եք առաջիկա 1-2 տարում հեռանալ Ձեր բնակավայրից մշտական բնակության նպատակով



Գծապատկեր 32.

Որո՞նք են ձեր բնակավայրից մշտապես հեռանալու ցանկության հիմնական պատճառները (N=106)



Ընդ որում՝ գյուղը մշտապես լքելու մտադրություն ունեցողների գրեթե կեսը (49,2%) ավանդաբար պատրաստվում է մեկնել Ռուսաստան, 16,9%-ը պլանավորում է տեղափոխվել մայրաքաղաք Երևան, իսկ 15,3%–ը՝ Հայաստանի այլ քաղաք (տե՛ս Գծապատկեր 33):

Գծապատկեր 33.

Ո՞ւր եք մտադիր մեկնելու մշտական բնակության համար (N=59)



Բավական հետաքրքիր են գյուղից չհեռանալու հիմնական պատճառները: Հարցվածների 39,0%-ը համարում է, որ գյուղն իր հայրենիքն է, և ինքն այդ ամենի մի մասն է: Հարցվածների 30,8%-ին հայրենիքում պահում են ընտանիքը, բարեկամներն ու ընկերները (տե՛ս Գծապատկեր 34): Միևնույն ժամանակ դրական, ցանկալի ապագայի նկատմամբ կողմնորոշումը տեղին է ընդամենը չնչին թվով գյուղացիների համար (3,3%):

Գծապատկեր 34.

Ինչո՞ւ չեք ցանկանում այստեղից հեռանալ (N=292)



Գյուղաբնակներն առավելապես արդարացնում են աշխատելու և/կամ ժամանակավոր բնակության մտադրությամբ միգրացիան: Այն, որը գյուղացիները հատկապես չեն արդարացնում միգրացիայի պարագայում, ամուսնությունն է այլ ազգիների հետ (տե՛ս Գծապատկեր 35): Գյուղացին իրեն ունակ է տեսնելու անդրազգային համատեքստում: Միգրացիան ընդունելի է, սեփական ընտանիքի, և, ինչու չէ, նաև համայնքի բարեկեցությունն ապահովող ողջունելի միջոց է, քանի դեռ հեռավորության վրա՝ պասիվ սոցիալական հարաբերություններում պահպանվում է ազգային ինքնությունը:

Գծապատկեր 35.

Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի, որ համագյուղացիները...
(ներկայացված է 1-5 բալանոց սանդղակով գնահատականի միջին արժեքը)



Քննարկում

Գյուղի հետ էմոցիոնալ ուժեղ կապվածությունը լավագույնս արտահայտվում է նաև գյուղացիների պատումներում: Նրանք «մենք»-ի կերպարը հիմնականում կառուցում են գյուղի շուրջ առասպելները, գյուղի պատմական և/կամ աշխարհագրական նշանակությունը և յուրահատկությունները երևան բերելով, որոնց միջոցով փոքր հայրենիքը օտարին երևում է շահեկան լույսի ներքո:

... մեր գյուղում պատմական հայոց արքաների դամբարանն է գտնվում, տուրիստները գալիս նայում են, *գիտեք ինչ, պետք ա հիշեն, որ մեր հայոց արքաները թաղված են ստեղ, և* ***մեր պատմությունը ստեղ ա, ստեղ ա թաղված:*** *Մենք ունենք հին պատմություն, գյուղի մասին թերթում էլ են գրել...*

70 տ., իգական, Արագածոտն

Մեր գյուղի պատմությունը սկսվում ա մոտ 500 տարի առաջ, *երբ որ Արցախից 7 եղբայրներով գալիս են, հիմիկվա գյուղամիջում մե՛ծ ծառ ա լինում էտ մեր գյուղի համար* ***ոնց որ Փարիզի համար Էյֆելյան աշտարակն ա, նույն ձև մեր գյուղի համար էտ ծառն ա եղել:***

40 տ., արական, Լոռի

Հնավուրց լինելը շարունակաբար գյուղի, այսօրվա գյուղացու ներկա գոյության գրավականն է: Երկարընթաց գոյության սիմվոլիզմներն ու մարմնացումները առավել հաստատուններն են: Ապացույցը անհերքելի եկեղեցին է:

*... **այս գյուղը շատ հին գյուղ ա եղել, 5-րդ դարի եկեղեցի եթե ունենք, ուրեմն այդ ժամանակվանից սկսած եղել ա**, բայց այս կողքերը փորփրել են, ժողովուրդը հա՛մ մուսուլմանների գերեզմաններ են գտել, հա՛մ քրիստոնյաների:*

65 տ., արական, Կոտայք

Համաձայն որակական տվյալների՝ գյուղաբնակների՝ տեղի ինքնության համատեքստում հստակ ընդգծվում են տեղը բնութագրող և/կամ բնութագրական մշակութային տարրերը՝ ավանդական սիմվոլները, արժեքները, սովորույթներն ու ավանդույթները: Հոգսի բացակայությունը, խաղն ու ուրախությունը կենտրոնական են: Վերարտադրվում է կնոջ ավանդական կերպարը: Օջախի լինելիության՝ երջանկության պատասխանատուն, ավագ կինն է՝ մայրը: Ավանդականությունը վերարտադրվում է սերդեսերունդ հենց կանաց միջոցով:

*Սովորույթը են ա, որ ստեղ միշտ եղել են քեֆեր, ուրախություններ, հյուրասիրություններ, **էտի շարունակում ա մաման,** մեր դուռը միշտ բաց ա բոլորին:*

30 տ., արական, Կոտայք

Ավագ կինը հանրութային իմաստության, համախբող սրբազանի հիմնական կրողն ու փոխանցողն է:

*... օրինակ՝ էս **իմ պահվածքը լրիվ էկել ա իմ մամայիցս**: Ասենք հարազատասեր, բարեկամասեր, շփվող, ես իրա տրադիցիաներն եմ շարունակում:*

50 տ., իգական, Արարատ

*... դե մեր, այսինքն՝ տատիկս տունը, ինքը պուճուր վանք ունի փետից՝ սուրբ, ու տենց **տատիկս սովորացնում էր հայր մերը** ու տենց իրա սովորացրած ավանդույթն ա պահպանվել:*

35 տ., արական, Արմավիր

*Ուտելիքները և ասենք մեր ավանդական ամե՞ն ինչը մենք շարունակում ենք պահել, մեր ավանդույթները, չգիտեմ: **Թե՛ հարսի պահումով, թե՛ հարազատների հարգանք-պատիվով ամեն ինչով:** Տե՛ս, մինչև հիմա ես լավաշ եմ թխում:*

65 տ., իգական, Կոտայք

Գյուղականության ճգնաժամի ըմբռնման համատեքստում հիմնական բացահայտումները արձանագրում են գյուղաբնակների՝ տեղի հետ կապվածության և միգրացիոն հակումների փոխկապակցվածությունը: Ինչպես ցույց են տալիս քանակական տվյալները, միգրացիոն տրամադրվածությունները հատկապես կապված են տարիքի հետ, ընդ որում՝ տարիքի մեծանալուն զուգահեռ մեծանում է գյուղաբնակի էմոցիոնալ կապը՝ ընդգծելով արժեքային կապերը, մյուս կողմից՝ ավելանում են լոգիստիկ և/կամ ֆունկցիոնալ սահմանափակումները:

• *Արժեքային մեկնաբանում*

*... **չգիտեմ հողն ու ջուրն ա պահում, քո տունն ա պահում, քո հայրենիքն ա պահում...** ստեղ եմ ծնվել, ստեղ էլ կմնամ*

75 տ., իգական, Արագածոտն

***Գյուղում լավ ա, որ ինձ միլիոն տան, ես քաղաք չեմ ուզենա, որ ապրեմ** ... հմի մենք ենք էս վիճակի ենք, բայց էնքան մարդ կա, որ քաղաքում էլ տենց հնարավորություն, տենց պայմաններ չունեն:*

70տ., արական, Արագածոտն

• *Ֆունկցիոնալ մեկնաբանում*

*Ես մտածում էի մի ժամանակ գնալու մասին, **բայց ծեր հեր ունեի, ու չէի կարա թողնեի գնայի,** իսկ հիմա արդեն տարիքս առել եմ, չեմ կարա գնամ:*

75 տ., արական, Գեղարքունիք

***Ես չեմ կարա, որովհետև արդեն տարիքս առել եմ, չեմ կարա,** ասենք տուն սարքես տենց, չես կարա, բայց իրանք ջահել են, կգնան, իսկ ես գոնե մնամ, որ իրանց մի քիչ գյուղի բաներից ուղարկեմ:*

65 տ., իգական, Լոռի

Ինչ վերաբերում է երիտասարդներին, գյուղացիները նրանց ապագան պատկերացնում են «գյուղից դուրս»՝ հիմնականում ՀՀ որևէ քաղաքում, հազվադեպ նաև արտասահմանում: Գյուղից տեղափոխվելու դրդապատճառները վերաբերում են գյուղում հեռանկարների և ինչքան էլ տարօրինակ չէ, երիտասարդների համար գյուղական կյանքում քաղաքային կյանքի նմանողությամբ ապագայի բացակայությանը:

Երեխան էլ մեղք չունի, գա ի՞նչ անի ստեղ: *Ասենք ֆիզկուլտ ինստիտուտը ավարտել ա, եկել ա մի փոքր գյուղ ա, աշակերտներն էլ օր օրի պակասում են, գա ստեղ ինչո՞վ զբաղվի:*

60 տ., իգական, Սյունիք

Գյուղից հեռանալու դրդապատճառների մեջ վերջին իրադարձություններից հետո մասնավորապես ընդգծվում է պատերազմի վերսկսվելու վտանգը: Դրա համատեքստում գյուղաբնակները պատրաստ են հեռանալու գյուղից կամ գոնե երեխաներին տեղափոխելու այլ բնակավայր:

Իմ երեխաները եթե ուզեն էթան, ես դեմ չեմ, ես հենց ուզում եմ փախցնեմ, ***թուրքի բերանից ուզում եմ փախցնեմ,*** *թե չէ ուրիշ համերաշխ ապրում ենք էլի աղջիկ ջան, դրա համար չեմ ուզում ես, որ էրեխես գնա, ընկնի:*

65 տ., իգական, Լոռի

Ես ստեղից ոչ մի դեպքում չեմ ուզի գնամ... երևի մենակ մի դեպք կա, որ ստիպված կթողնեմ կգնամ, էդ եթե պատերազմ լինի, ու ուզենք չուզենք պետք ա գնանք

40 տ., արական, Տավուշ

ԳՅՈՒՂԻ ՀԵՌԱՆԿԱՐ/ՆԵՐԸ

Հիմնական բացահայտումները

Ներկայիս ՀՀ գյուղական համայնքների զարգացման հեռանկարների մասին խոսելիս՝ պետք է հաշվի առնել ՀՀ վարչատարածքային բարեփոխումների հայեցակարգը, համաձայն որի 2021 թվականին պաշտոնապես ավարտվեց համայնքների միավորման և/կամ խոշորացման գործընթացը: Սույն գործընթացը փորձագիտական շրջանակներում ենթարկվել է բավականաչափ քննադատությունների: Կարևոր է նաև հասկանալ գյուղաբնակների մոտեցումները և/կամ դիրքորոշումները:

Այսպես, այս գործընթացի հանդեպ նկատելի է գյուղաբնակների անտարբերությունը և օտարվածությունը: Մասնավորապես գյուղաբնակների 34,5%-ը անտարբերություն է արտահայտել՝ խուսափելով գնահատել համայնքների խոշորացման գործընթացը: Զգալի անտարբերություն կա խոշորացված համայնքի անվան ընտրության հարցում (33,6%): Ընդհանուր առմամբ համայնքների խոշորացման գործընթացի ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ դիրքորոշումները գրեթե հավասար են բաշխվել. 33,8%-ը համարում է, որ ճիշտ էր/է խոշորացումը, 31,7%-ը՝ սխալ (տե՛ս Գծապատկեր 36 և 37):

Գծապատկեր 36.
Ճի՞շտ էր արդյոք համայնքների խոշորացումը (N=145)



Գծապատկեր 37.
Ճի՞շտ է արդյոք ընտրված խոշորացված համայնքի անվանումը (N=143)



Չնայած նման անտարբերությանը և պասիվ գնահատականներին՝ մեծամասնությունը հետագա փոփոխությունները դրական է գնահատում (51,4%): Որևէ փոփոխություն չի նկատում բնակչության 41,5%-ը (տե՛ս Գծապատկեր 38):

Գծապատկեր 38.
Խոշորացումից հետո Ձեր համայնքի վիճակը ընդհանուր առմամբ ինչպե՞ս է փոխվել (N=142)



խոշորացման գործընթացն ու այդ համատեքստում տեղի ունեցող փոփոխությունները գյուղաբնակները դիտարկում են որպես իրենցից անկախ վարչաքաղաքական գործընթացներ, որի մեջ գլխավոր դերակատարը գյուղացուց հեռու քաղաքական կարող իշխանությունն է: Նրանց 47,2%-ը համարում է, որ փոփոխություններ պայմանավորողները տեղական իշխանություններն են, 25,0%-ը՝ երկրի կառավարությունը: Սովորական գյուղացու սեփական դերը իրավիճակի բարելավման գործում տեսնում են միայն հարցվողների 16,7%-ը (տե՛ս Գծապատկեր 39): Հակառակը՝ 73,8% դեպքերում գյուղաբնակները նշել են, որ իրենք որևէ գործնական ներդրում չեն ունեցել այս գործընթաց/ներում (տե՛ս Գծապատկեր 40):

Գծապատկեր 39.

Հիմնականում ովքե՞ր են պայմանավորել այդ փոփոխությունները (N=72)



Գծապատկեր 40.

Անձամբ Դուք այդ գործում որևէ ներդրում ունեցե՞լ եք (Ձեր ժամանակով, գումարով, կազմակերպչական ջանքերով և այլն) (N=80)



Շարունակելով գյուղի հեռանկարների շուրջ քննարկումը՝ անդրադառնանք գյուղաբնակների՝ գյուղի և հատկապես գյուղում իրենց ապագայի մասին սուբյեկտիվ պատկերացումներին: Ընդհանուր առմամբ ընդգծում են լավատեսական միտումները:

Գյուղը հիմնականում դրական հեռանկարներ ունի տեղի բնակչության 79,4%-ի համար (տե՛ս Գծապատկեր 41):

Գծապատկեր 41.
Ձեր գյուղն ունի՞ զարգացման հեռանկար/ներ (N=291)



Ավելին՝ մեծամասնությունը (70,6%) համարում է, որ սեփական ընտանիքի տնտեսական բարեկեցությունը 5 տարի հետո կլավանա: Համարյա յուրաքանչյուր 7-րդը (15,8%) որևէ փոփոխություն չի ակնկալում: Ապագայի հանդեպ հատկապես հոռետեսորեն են տրամադրված գյուղացիների 13,6%-ը: Միևնույն ժամանակ հարցված գյուղաբնակների 29,7%-ը համարում է, որ իր ընտանիքի տնտեսական բարեկեցությունը 5 տարի առաջ ավելի լավ էր, քան հիմա, 38,4%-ը փոփոխություն չի նկատում, իսկ 31,9%-ի համար 5 տարի առաջ ավելի վատ էր, քան հիմա (տե՛ս Գծապատկեր 42):

Գծապատկեր 42.
Գնահատեք, խնդրեմ, Ձեր ընտանիքի տնտեսական բարեկեցությունը



Հետազոտությունը գյուղաբնակի՝ պետական կառավարման հանդեպ քաղաքական դիրքորոշման զավեշտալի հակասություն է երևան բերել: Ճնշող մեծամասնությունը

կողմ է ժողովրդավարական և ինքնուրույն տեղական ինքնա/կառավարմանը: Հարցվողների 95,3%-ը համարում է, որ գյուղերում պետք է ժողովրդավարական կառավարում, որ լսելի լինի յուրաքանչյուր գյուղացու ձայնը: Միևնույն ժամանակ ներկայիս գյուղացին վերարտադրում է հզոր պատերնալիզմի պահանջարկը սեփական պատասխանատվությունը վերաշնորհում է ավանդական ուժեղին: Գյուղացիների 87,9%-ի կարծիքով Հայաստանի գյուղերին այսօր պետք են ուժեղ գյուղապետեր: Կարող ենք ենթադրել, որ ժողովրդավարությունն արդի, ցավոք, ընդամենը սին, անհասկանալի նշան է և դեռևս ձեռք չի բերել ֆունկցիոնալ, արդյունավետ կիրառական ծանրաբեռնվածություն: Այսօրվա գյուղացին մինչ այժմ չգիտի ինչ անել հողի և այլ գյուղատնտեսական հնարավոր ակտիվների հետ: Պարտվելով պսևդոլիբերալ մրցակցությանը՝ պահանջում է գյուղատնտեսական ռեսուրսների ազգայնացում: Գյուղաբնակները մեծամասամբ կողմ են գյուղատնտեսության մեջ պետական սեփականության ավելացմանը (տե՛ս Գծապատկեր 43): Ակնհայտ է հզոր, անպայման պետական իշխանավորի, կարծես անցյալում մնացած հայր-պետության հասարակական պատվերը, որն առաջին հերթին կլուծի հենց սոցիալական արդարության խնդիրը:

Գծապատկեր 43.
Համաձա՞յն եք հետևյալ դատողություններին



Ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություններով ուժեղ գյուղապետեր ունենալու ու գյուղատնտեսության մեջ պետական սեփականության ավելացնելու մասին գյուղաբնակների պատկերացումները վիճակագրորեն նշանակալի կապված են հարցվածների տարիքի, կրթության և բարեկեցության հետ (տե՛ս Աղյուսակ 11):

Մասնավորապես՝

- Ինչպես և սպասելի էր, որքան աղքատ է գյուղացին, այնքան հակված է պահանջելու ուժեղ գյուղապետեր՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություններով:

• Որքան տարեց է գյուղացին, այնքան հակված է պահանջելու ուժեղ գյուղապետեր՝ ինքնուրուրույն որոշումներ կայացնելու հնարավորություններով:
• Որքան աղքատ է գյուղացին, այնքան հակված է պահանջելու, որ գյուղատնտեսության մեջ ավելացվի պետական սեփականությունը:
• Որքան քիչ է կրթված գյուղացին, այնքան հակված է պահանջելու, որ գյուղատնտեսության մեջ ավելացվի պետական սեփականությունը:

Աղյուսակ 11.

		Հայաստանի գյուղերին այսօր պետք են ուժեղ գյուղապետեր՝ ինքնուրուրույն որոշումներ կայացնելու հնարավորություններով	**Հայաստանում գյուղատնտեսության մեջ պետական սեփականությունը պետք է ավելանա**
Տարիքը	Սպիրման ρ	0.113	
	p	0.031	
	N	363	
Կրթական մակարդակը	Սպիրման ρ		-0.137
	p		0.010
	N		354
Բարեկեցության մակարդակը	Սպիրման ρ	-0.113	-0.134
	p	0.033	0.012
	N	358	350

Քննարկում

Չնայած գյուղի ապագայի վերաբերյալ ընդհանուր առմամբ լավատեսական քանակական տվյալներին՝ գյուղաբնակների հետ քննարկումները ցույց են տալիս, որ այստեղ միանշանակություն չկա: Քննարկումների ընթացքում ավելի շատ ընդգծվում են գյուղի ապագային վերաբերող բացասական գնահատականները: Գյուղի ապագայի հոռետեսական զարգացումները հիմնականում կապվում են՝

- *Գյուղի դատարկման, ապաբնակեցման հետ*

*Գյուղի խնդիրը էն ա, որ **մարդիկ քիչ են ապրում, ծերացող գյուղ ա**: Մարդիկ մեծացան, արդեն տարեց մարդիկ են, ի վիճակի չէին ֆիզիկապես գյուղը պահելու:*

40 տ., արական, Տավուշ

*Հիմնականում էսօրվա դրությամբ **ջահելները շատը դուրս են գալի:** Մի մասը գնում ա արտագնա աշխատանքի, գյուղում չեն մնում, գյուղում իրանց համար զբաղվելու բան չկա:*

70 տ., արական, Գեղարքունիք

Հեսա մարտ ամսին, որ տաքերը ընգնի, մարդ չի մնա ստեղ: Դե մեղադրելու չի, ինչո՞վ զբաղվեն: Ապագա չկա, չէի ուզի երեխա մնար ստեղ, կտանջվեն:

60 տ., իգական, Սյունիք

- *2020 թվականի պատերազմի ու նոր պատերազմի բռնկման վտանգի հետ*

*Բնակչությունը էս պահին տարհանում են, շատ տխուր վիճակ ա: **Սեպտեմբերի մեկի դրությամբ երևի մի տասնհինգ-քսան աշակերտ արդեն տարհանել են գյուղից**, որը շատ ցավալի ա, սենց որ գնա, գյուղում մարդ չի մնա:*

60 տ., իգական, Սյունիք

*Գյուղի բնակչության առումով քչացել են մարդիկ, **կեսը գնացին, զոհվեցին էրեխեքը, մնացին ծերերը:***

65 տ., իգական, Լոռի

• *Գյուղատնտեսական գործունեության գրավչության կորստի հետ*

*... **երիտասարդությունը հմի չի ձգտում, որ հողով զբաղվի, անասունով հազարից մեկն ա զբաղում, դրա** համար էլ տարբերությունն էտա, հեռանկար չունի գյուղում մնալը:*

40 տ., արական, Լոռի

***... նոր սերունդը գնում են ծրագրավորող են դառնում, իրանք ոչ կգան կով կպահեն, ոչ հող կմշակե...** գյուղն էլ ինչ կլինի, կավիրվի կէթա օրինակ ես կարամ անասուն պահեմ, իսկ ծրագրավորողը չի գա էստեղ անասուն պահի:*

75 տ., իգական, Արագածոտն

Գյուղական գործունեության, ընդհանրապես կենսակերպի գրավչություն ինքնին գոյություն չունի: Առաջանում են հրապուրող այլընտրանքային զբաղվածության, կեցության բազմազան, արդյունավետ, առավել հեռանկարային հնարավորություններ: Այդ շարքում առանձնացվում են՝ արտագնա աշխատանքը, մասնագիտական-արհեստավորական (ոչ գյուղատնտեսական) աշխատանքները, գյուղից դուրս այլ մասնագիտական աշխատանքը, առևտուրը և, վերջապես, եկամտաբեր, զարմանալիորեն ոչ գյուղատնտեսական ձեռներեցությունը/բիզնեսը:

Միգրացիան՝ արտագնա աշխատանքային գործունեությունը, օժտված է ինքնավերարտադրման մեծ ներուժով: Նման զգալի փորձ ունեցող գյուղական բնակավայրերում առաջանում է այսպես կոչված արտագաղթի մշակույթը, որը յուրօրինակ համատեքստ է ոչ միայն զուտ միգրացիոն և հարակից տնտեսական գործունեության համար: Անգամ սոցիալական մարդաբանությունում հայտնի անցման (մեծացման) ծեսն իրականացվում է արտագնա աշխատանքի առաջին փորձով, այլ ոչ թե գյուղատնտեսության մեջ ներառմամբ:

*Էս վերջին 30-40 տարին, էս անկախությունից էս կոմ էլի, **մեր գյուղը հայտնի ա իրա սենց մեծ քանակով խոպան գնացող մարդկանցով:** Մենք մեր տարածաշրջանում հայտնի ենք որպես խոպանչիների գյուղ, տենց:*

40 տ., արական, Տավուշ

Ավելին՝ աշխատանքի առկայությունը կամ բացակայությունը քիչ աղերս ունի գյուղատնտեսական աշխատանքի, հատկապես դրա առանձին ձևերի հետ: Այն որոշակիորեն աննախապայման մշակութային հրամայական է, պարտավորություն:

Պտի ինչ-որ ցեխեր դնեն, որ զարգանա, գյուղացիներդ աշխատեն, որ աշխատանքի տեղ ըլնի: Ինչի՞ց պտի զարգանա գյուղը թե չէ

50 տ., իգական, Արարատ

Գյուղի կանանցից էլ են, աղջկեքից էլ են աշխատում: Հավաքարար են, աման լվացող են: Վերջը, գործ կա էլի: Էլեկտրիկն ա, բանվորություն կա: Անող մարդ, աշխատող մարդիկ կան գյուղից:

70 տ., արական, Գեղարքունիք

Եթե մարդիկ Երևանում աշխատանք ունեն, աշխատում են էտ ուղղությամբ, ապրում են, ընտանիքներն են պաշտպանում, իսկ եթե չէ՝ անասնապահությամբ են զբաղվում, հողեր մշակում: Բայց էս վերջի արդեն 7-8 տարին իրենք էլ են թողել արդեն: Զգացին, որ դրանից եկամուտը չկա, շահույթը քիչ ա:

65 տ., իգական, Արմավիր

Գյուղի ապագա հեռանկարները ենթադրում են հենց գյուղի զարգացում, բարելավում քաղաքայնացման միջոցով: Քաղաքի և գյուղի տարբերության չեզոքացումը, նվազումը ենթադրում է գյուղի հեռանկարային առաջընթաց: Հողը և հատկապես անասունը, լինելով գյուղի բովանդակային բաղադրատարրեր, հակադրվում են վերջինիս ցանկալի գոյությանը:

Պետք ա ի վերջո անցնենք մի մակարդակի, որ գյուղը էդ միայն անասուն ու հողագործությունով զբաղվելու վայր չի: Գյուղը մի տարածաշրջան ա, որտեղ կարան մարդիկ նաև զբաղվեն բարձր տեխնոլոգիաներով, չգիտեմ, IT ոլորտով, տարբեր, տարբեր արվեստի ճյուղերով, նպաստեն ենթադրենք պետության զարգացմանը: Ես մտածում եմ, որ ինչ լավ կլնի, որ ենթադրենք մի պետության դեսպանատունը լինի մեր գյուղում:

40 տ., արական, Տավուշ

Ինչպես ընդգծեցինք «Հիմնական բացահայտումներ» բաժնում, գյուղաբնակները մեծամասամբ կողմ են գյուղատնտեսության մեջ պետական սեփականության ավելացմանը: Այս մոտեցումը ուրվագծվում է նաև որակական տվյալներում:

Մենք մտածում էինք ինչ-որ մի ձև պետությանը խնդրենք, էտ սովետական սիստեմը նորից վերականգնեն: Այսինքն՝ եթե ինքնահոս ջուրը 3 ամիս բավարարում ա գյուղացիներին, 2 ամիսը չի բավարարում, 2 ամիսներին ինչ-որ մի պոմպով նորից մատակարարեն:

40 տ., արական, Լոռի

Խոսելով գյուղատնտեսության մեջ պետության ներգրավվածության և դերի բարձրացման մասին, հաճախ կարևորելով խորհրդային մոդելը, գյուղաբնակները ընդհանուր առմամբ խոսում են պետական երաշխիքների և աջակցության, այլ ոչ թե պետության հանդեպ պարտավորվածության մասին՝ այդ ասպեկտից բացասական շեշտադրությամբ հիշելով խորհրդային փորձը:

Խի՞ գնամ ուրիշի ձեռի տակ աշխատեմ՝ կոպեկներով կոլխոզում, իսկ էս ամենը մնում ա ինձ: Ինձ թվում ա ոչ մեկը չի ուզի գնա ուրիշի ձեռի տակ աշխատի կոպեկներով, եթե կարա նույն բանը մշակի:

50տ., իգական, Արարատ

Էն ժամանակ՝ կոմունիստների, ոչ մեկ իրավունք չուներ գնար ուրիշ տեղ աշխատեր, գյուղացի ես, բնակիչ ես, պետք ա գնայիր խոտ քաղեիր, խնձոր հավաքեիր, պետք ա անեիր, նոր գնայիր քո գործերին, թե չէ չէիր կարա, իրավունք չունեիր:

70 տ., իգական, Արագածոտն

... Սովետի ժամանակ ուրիշ էր պայմանները, օրենքները: Ուրեմն, եթե գյուղի բնակիչը ցանկություն հայտներ, որ գնար դեպի քաղաք՝ եկամուտի բարձր... ունենար, սրանց ցույց չէին տա ու թույլ չէին տա, իսկ հիմա էս իմն ա, իմ սեփական իրավունքն ա, ես իմ անասունը կպահեմ կամ չեմ պահի, ոչ մեկ էլ ինձ ոչ մի բան չի ասի, թե ինչ պիտի անեմ , ինչ է:

65 տ., արական, Արմավիր

Այսօր ՀՀ գյուղական բնակավայրերի հեռանկարների քննության համատեքստում պետք է հաշվի առնել ՀՀ վարչատարածքային բարեփոխումները, դրանց շրջանակներում ընթացող համայնքների խոշորացման գործընթաց/ները: Խոշորացման գործընթացի վերաբերյալ գյուղաբնակների դիրքորոշումները միանշանակ չեն: Ընդհանրացնելով առավել տարածված պատկերացումները՝ ուրվագծենք համայնքների խոշորացման գործընթացի առավելություններն ու թերությունները, հնարավորություններն ու ռիսկերը՝ ըստ գյուղաբնակների:

- *Առավելություններ*

Գյուղաբնակները խոշորացման հիմնական դրական կողմ են համարում գյուղի ենթակառուցվածքների զարգացումը:

Աղբահանությունը սկսեց կազմակերպված արվել, բերեցին աղբամաններ դրեցին: *Առաջ մենք պարկերով դնում էինք կոնկրետ օրը դրսում, գալիս էր մեր գյուղապետարանի մեքենան իրա բանվորի հետ հավաքում տանում էր:* ***Հետո լուսավորությունը լավացավ, բերեցին լավ LED լուսարձակներ դրեցին գյուղում:***

65տ., արական, Կոտայք

• *Թերություններ*

Մեծամասամբ համայնքների խոշորացման հետ կապված դժգոհությունները կապված են վարչաքաղաքական բաժանումների սկզբունքների և ձևավորվող նոր միջբնակավայրային հարաբերությունների հետ:

Մասնավորապես՝

Ապա/սահմանազատումը որպես խնդիր.

Էն ժամանակ, որ մի համայնք էինք, ինքը [այլ բնակավայրի ներկայացուցիչը] իրավունք չուներ մեր տարածք մտներ ու օգտվեր: ***Ինքը իրա տարածքը, մենք էլ մեր տարածքը: Իսկ հիմա թուրքը մի յանից, հիմա էլ համայնքը մյուս յանից:***

60 տ., իգական, Սյունիք

Բացի դրանից՝ ընգծվում է նույն խոշորացված համայնքում հայտնված բարեկեցիկ և ոչ բարեկեցիկ բնակավայրերի միջև լարվածությունները:

Հիմա էս պահին [սահմանամերձ գյուղի անվանում] գյուղի բնակիչը իրա անասունը բերում ա մեր գյուղում պահում: ***Ասում եմ ինչի՞ ես բերում, առանց էն էլ թուրքը մոտիկ ա, մեզ տարածք չունենք: Ասում ա մի տարածք չե՞նք, մի գյուղ չե՞նք: Էդ [սահմանամերձ գյուղի անվանում] գյուղի բնակչությունը մեզ ահագին վնաս ա տալիս****: Էս համայնքը, որ փոխվել ա, քանի՞ տարի ա արդեն որ սենց ա, մի հինգ տարի մեր գյուղում ոչ մի ներդրում չեն արել, սաղ գնում ա [սահմանամերձ գյուղի անվանում] գյուղի համայնքը:*

60 տ., իգական, Սյունիք

Գյուղացիները դժգոհում են վարչական աշխատողների թվաքանակի կտրուկ նվազումից և ձգտելի, պատվաբեր աշխատատեղերի կորստից.

Լրիվ կրճատեցին գյուղապետարանում աշխատողների քանակը, մնաց 3 հաստիք, մեր համայնքի ղեկավարը պահում էր 15 հոգի էս մի պստիկ գյուղի համար: *Էտքան աշխատող ճիշտ ա պետք չէր գյուղին ընդհանրապես, աշխատավարձն ունեինք, բայց նենց նորմալ չէր էլ, չէր ստացվում էր նորմալ ստանանք, վախտ ա եղել 2-3 ամիսը մեկ էինք ստանում: Բայց դե մարդիկ աշխատում էին*

65տ., արական, Կոտայք

Ահագին աշխատող ա եղել *մի ժամանակ համայնքում, բայց* ***խոշորացումից հետո էսօր կրճատվել են, մնացել ա 3 հոգի:***

70տ., արական, Գեղարքունիք

- *Գյուղացիներին անհանգստացնում են նոր ռիսկերը, հնարավորությունների արդյունավետ տնօրինումը*

Խոշորացված համայնքներում բնակավայրերը հիմնականում մրցակցում են համայնքի կառավարման օղակներում ներկայացվածության համար: Ըստ գյուղաբնակների՝ ներկայացվածության մակարդակից է կախված, թե խոշորացման գործընթացը ինչ հնարավորություն կամ ռիսկ է տվյալ բնակավայրի համար:

Նենց պետք ա անենք, որ ***մեր ներկայացուցիչը լինի, նենց մարդ ընի, որ կարենա մեր գյուղի հոգսերը հոգա...*** *որ համայնքապետը, որ ընտրվում ա, ինքն իրա գյուղի օգտին բան կանի, էն մյուս համայնքները էդքան չեն բան անի: Պտի քո համայնքում նենց ընտրված մարդ ունենաս, որ կարենա քո համայնքը պահի:*

70 տ., իգական, Արագածոտն

Երբ անձամբ դու չես ընտրում վարչական ղեկավարին, պատասխանատվությունը կորում ա: *Երբ որ դու իրան ընտրել ես, ինքը պարտավորություններ ունի, դու էլ ես պարտավոր զգում, որ իրան ընտրել ես: Ենթադրենք սխալ բան ա արել կամ ճիշտ չի արել, դու քեզ մեղավոր ես զգում, կամ լավ բան ա անում, դու քեզ ասում ես՝ ես իրան ընտրել եմ, լավ ա, մալադեց իրան էլի: Էս մասով էդ կապը չկա,* ***ոնց որ ուրիշ մարդ լինի ընդեղ, դու բան չես, չես ընտրում:***

40 տ., արական, Տավուշ

ՄԱՍ 3.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԻԳՐԱՑԻԱՆ

Հիմնական բացահայտումները

Գյուղաբնակների 69,6%-ի դեպքում, բացի տնամերձ հողատարածքներից, տնային տնտեսության մաս են կազմում այլ տիպի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները (տե՛ս Գծապատկեր 45):

Գծապատկեր 45.
Տնամերձից զատ ունի գյուղատնտեսական նշանակության այլ հողատարածք (N=372)



Ընդ որում՝ այս խմբի միայն կեսից մի փոքր ավելին է (55,2%) այն օգտագործում հողագործական նպատակներով (տե՛ս Գծապատկեր 46): Վիճակագրական նշանակալի կապ է բացահայտվել այսօրինակ հողատարածքների նպատակային օգտագործման և տնային տնտեսության բարեկեցության միջև: Որքան ավելի բարեկեցիկ է գյուղացին, այնքան ավելի են հողատարածքներն օգտագործում հողագործական նպատակ/ներով (X^2=4,936, p<0.026, Cramer's V=0.116, CI=95):

Գծապատկեր 46.
Տնամերձից զատ այլ հողատարածք/ներն օգտագործում է հողագործական նպատակներով (N=259)



Գյուղացիների 89,6% դեպքերում տնային տնտեսություններն իրենց տնամերձ հողատարածքն օգտագործում են հողագործության/այգեգործության նպատակով: Բաց հողատարածքները նույն նպատակով օգտագործում են հարցվողների

69,5%-ը: Գյուղաբնակների 15,6%-ը բաց հողատարածքներն օգտագործում է անասնապահության նպատակով (տե՛ս Գծապատկեր 47):

Գծապատկեր 47.
Հողատարածքների օգտագործման հիմնական նպատակը



Գյուղացիների մեծամասնությունը (77.6%) նշել է, որ իրենց բաց հողատարածքները պիտանի են գյուղատնտեսական գործունեության համար: Գյուղատնտեսական հնարավոր այլ նպատակների ծառայող տարածքներում վիճակն ավելի բարվոք է: Ջերմոցները գյուղատնտեսության համար պիտանի են 86.8% դեպքերում, այգեգործական և տնամերձ հողատարածքները՝ համապատասխանաբար 85.2% և 83.2% (տե՛ս Գծապատկեր 48):

Գծապատկեր 48.
Ձեր ո՞ր հողատարածք/ներն են պիտանի գյուղատնտեսական գործունեության համար



Իրավիճակը բարվոք է գյուղատնտեսական նպատակներով հնարավոր ծախսերի հետ կապված: Գյուղաբնակների 76,8%-ը կարողանում է հոգալ այգիների, իսկ 68,1%-ը՝ տնամերձի հետ առնչվող անհրաժեշտ ծախսերը: Նրանք առավել դժվարանում են իրականացնել բաց հողատարածքների և ջերմոցների հետ կապված ծախսերը:

Այսպես՝ 38,9% դեպքերում նրանք չեն կարողանում հոգալ բաց հողատարածքներին առնչվող, իսկ 35,3% դեպքերում՝ ջերմոցներին առնչվող ծախսերը (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 49):

Գծապատկեր 49.

Կարողանո՞ւմ եք հոգալ Ձեր հողատարածք/ներին առնչվող ծախսերը



Ինչ վերաբերում է ոռոգման ջրի ծավալներից գոհունակությանը, պետք է նշել, որ իրավիճակն այստեղ առավել խնդրահարույց է: Ոռոգման ջրի ծավալներից առավել դժգոհ են բաց հողատարածքների սեփականատերերը: Բաց հողագործությամբ զբաղվող գյուղացիների գրեթե կեսին (48,4%) ջուրը չի բավարարում: Տնամերձերի հետ կապված իրավիճակը նույնպես բարվոք չէ: Այս գործով զբաղվածների 40.1%-ին ջուրը չի բավարարում: Խնդիրը չնչին չափով լավ է այգիների դեպքում ջուրն անբավարար է միայն 37,3% դեպքերում: Ոռոգման ջրի ծավալների խնդիր գրեթե չունեն ջերմոցային տնտեսությամբ զբաղվողները (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 50):

Գծապատկեր 50.

Բավարարո՞ւմ է ոռոգման ջրի ծավալը Ձեր հողատարածք/ները ջրելու համար



Լավ չէ պատկերը գյուղատնտեսական արտադրության ծավալների հետ կապված: Գյուղատնտեսների 46,5%-ի մոտ հողագործությունից ստացվող գյուղատնտեսական

արտադրանքի ծավալը վերջին 1-2 տարիների ընթացքում չի փոխվել: Յուրաքանչյուր 3-րդ տնտեսություն (31,3%) ծավալը պակասեցրել է (տե՛ս Գծապատկեր 51):

Գծապատկեր 51.

Ընդհանուր առմամբ ինչպե՞ս է փոփոխվել հողագործությունից ստացվող գյուղատնտեսական արտադրանքի ծավալը վերջին 1-2 տարիների ընթացքում (N=310)



Հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացված արտադրանքի իրացման հիմնական ուղիներն են՝ տեղում վաճառք միջնորդներին և/կամ վերավաճառողներին (24,6%), վաճառք մոտակա շուկայում (23,2%) և տեղում վաճառք արտադրողին (15,9%) (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 52):

Գծապատկեր 52.

Ինչպե՞ս եք հիմնականում իրացնում հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացված արտադրանքը



Գծապատկեր 53.

Բավարարվա՞ծ եք արդյոք հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացված արտադրանքի իրացման ծավալներից (N=149)



Հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացված արտադրանքի իրացման պայմանագիր ունեն հարցված գյուղաբնակների ընդամենը 12,1%-ը, որը այլ հավասար պայմաններում մեծացնում է համապատասխան տնտեսվարման անորոշությունն ու ռիսկայնությունը (տե՛ս Գծապատկեր 54): Գյուղացին գրեթե կայուն, իրավական երաշխիքներ չունի իր գործունեության համար: Ինչ վերաբերում է արտադրանքի պահեստավորման հնարավորություններին, ապա դրանից զուրկ է գյուղատնտեսների 64,9%-ը (տե՛ս Գծապատկեր 55): Նման իրավիճակը գյուղացիության մեծամասնության համար անկանխատեսելի կորուստների սպառնալիք է, երբ իրացման ուշացման, այլ խնդիրների դեպքում բերքը փտելու է և/կամ արժեզրկվելու:

Գծապատկեր 54.

Ունե՞ք հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացվող արտադրանքի իրացման պայմանագիր (N=149)



Գծապատկեր 55.

Ունե՞ք արդյոք հողագործությունից/ այգեգործությունից ստացված գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման հնարավորություն (N=322)



Ամփոփելով՝ կարելի է նկատել, որ գյուղաբնակներն ընդհանուր առմամբ բավարարված են հողագործական և/կամ այգեգործական գործունեությամբ (52,4%): Միևնույն ժամանակ բավարարված են հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացված արտադրանքի իրացման ծավալներից (55,0%) (տե՛ս Գծապատկերներ 56 և 57): Դրական պատկերով հանդերձ՝ չմոռանանք սակայն, որ նույն գործունեությունից դժգոհ է գյուղացիության գրեթե կեսը և ունի բազմաթիվ խնդիրներ: Դժգոհությունն ու անբավարարվածությունը հաստատվում է նյութական, ֆինանսական կորուստներով, բավարար, սպասելի ձեռքբերումների բացակայությամբ: Իրավիճակի երկարաձգումը, լուծման հեռանկարների բացակայությունը շատ խոր բացասական հետևանքներով է հղի, որոնցից են գյուղացու՝ գյուղից և գյուղականից օտարվելը: Ասվածը փաստում է հետևյալ օրինաչափությունը. որքան բարձր է գյուղաբնակների սուբյեկտիվ բարեկեցության մակարդակը, այնքան ավելի են բավարարված հողագործական և/կամ այգեգործական գործունեությամբ (N=309, Սպրիմանի ρ=0,256, p<0.001, CI=95):

Գծապատկեր 56.

Բավարարվա՞ծ եք արդյոք հողագործական և/կամ այգեգործական գործունեությամբ (N=309)



Գծապատկեր 57.

Բավարարվա՞ծ եք արդյոք հողագործությունից և/կամ այգեգործությունից ստացված արտադրանքի իրացման ծավալներից (N=149)



Անասնապահություն

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս նկարագրելու նաև գյուղաբնակների անասնապահությամբ զբաղվելու պրակտիկաները, դրա դրդապատճառներն ու հեռանկարները: Անասնապահությամբ զբաղվում են հարցված գյուղաբնակների ընդամենը 46,0%-ը (տե՛ս Գծապատկեր 58): Հատկանշական է, որ անասնապահությամբ ավելի հաճախ զբաղվում են 3 և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները (Ման-Ուիտնի Յու վիճակագրական թեստի արդյունքները՝ U=19,219, p<0.019, N=369, CI=95%): Անխոս, այս յուրօրինակ օրինաչափությունը մեկնաբանելու համար անհրաժեշտ են լրացուցիչ նպատակային ուսումնասիրություններ:

Գծապատկեր 58.

Զբաղվում է անասնապահությամբ (N=372)



Արտառոց չէ, որ հարցված գյուղաբնակների տնային տնտեսությունները 58,2% դեպքերում պահում են թռչուն/ներ: Գյուղացիների 37,0%-ը ունի խոշոր եղջերավոր անասուն, 21,1% ՝ խոզ և 7,3% -ը՝ մանր եղջերավոր անասուն (տե՛ս Գծապատկեր 59):

Գծապատկեր 59.
Պահո՞ւմ եք ... (N=360)



Գյուղաբնակները անասնապահությունից ստացած արտադրանքը գլխավորապես օգտագործում են սեփական կարիքների համար: Առավել մեծածավալ վաճառք/իրացում տեղի է ունենում մանր եղջերավոր անասնապահության դեպքում՝վաճառվում է արտադրանքի 54,5%-ը: Խոզաբուծությամբ զբաղվողների 73,2%-ը, խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվողների 74,2%-ն ու թռչնաբուծությամբ զբաղվողների 88,5%-ը արտադրանքը պահում են իրենց (տե՛ս Գծապատկեր 60):

Գծապատկեր 60.
Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտագործում արտադրանքը



Կենդանիների հիմնական կերակրման վայրում ջրի պաշարները գյուղատնտեսներին մեծամասամբ բավարարում են: Միևնույն ժամանակ ջուրն անբավարար է խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվողների 35,7%-ի համար: Մանր եղջերավոր անասնապահության դեպքում, որը, ինչպես տեսանք, առավելապես եկամտի աղբյուր է և ոչ առօրեական կենսակերպի միջոց, ջուր չունի ընդհանուր առմամբ 26%-ը (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 61):

Գծապատկեր 61.
Կենդանիների հիմնական կերակրման վայրում ջրի առկայությունը



Խոշոր եղջերավոր անասպահությամբ զբաղվողների 65,1%-ը և մանր եղջերավոր անասնապահությամբ զբաղվողների 82,6%-ը համարում են, որ արոտավայրերը արդյունավետ են անասնապահության համար (տե՛ս Գծապատկեր 62):

Գծապատկեր 62.
Արոտավայրերի պիտանելիությունն արդյունավետ անասնապահության համար



Անասնապահությունից ստացված արտադրանքը 59,3% դեպքերում չի իրացվում: Մնացած 40,7% դեպքերում իրացման հիմնական ուղիներն են՝ տեղում վաճառքը անմիջական գնորդներին և/կամ վերավաճառողներին (67,3%) և վաճառքը մոտակա շուկայում (11,8%) (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 63 և Գծապատկեր 64):

Գծապատկեր 63.

Իրացվո՞ւմ է անասնապահությունից ստացվող արտադրանքը



Գծապատկեր 64.

Ինչպե՞ս եք հիմնականում իրացնում անասնապահությունից ստացված արտադրանքը



Իրավիճակը սկզբունքորեն կրկնում է հողագործական արտադրության հետ կապված խնդիրները: Այստեղ ստացված արտադրանքի իրացման պայմանագիր ունեն հարցված գյուղաբնակների միայն 10,5%-ը, որը, ինչպես և նախկինում, առաջացնում է մեծ վտանգներ, անորոշություն (տե՛ս Գծապատկեր 50): Իրավիճակը հատկապես խնդրահարույց է այսօրինակ շուտ փչացող արտադրատեսակի արդյունավետ պահեստավորման պարագայում, որից զուրկ է այս խմբի 83,7%-ը (տե՛ս Գծապատկեր 65 և Գծապատկեր 66):

Գծապատկեր 65.

Առկա՞ է արդյոք անասնապահությունից ստացվող արտադրանքի իրացման պայմանագիր (N=76)



Գծապատկեր 66.

Ունե՞ք արդյոք անասնապահությունից ստացված արտադրանքի պահեստավորման հնարավորություն (N=239)



Այսպիսով՝ գյուղաբնակների մեծ մասը (61,8%) բավարարված է անասնապահությունից ստացված արտադրանքի իրացման ծավալներից: Միևնույն ժամանակ անասնապահական արտադրանքի իրացման հետ այս կամ այն խնդիրն ունեն անասնապահների համարյա 40%-ը, որը անցանկալի հեռանկարում բերելու է խորացող կորուստների, դրդելու վերջիններիս թողնելու գոնե այս ոլորտը (տե՛ս Գծապատկեր 67):

Գծապատկեր 67.

Բավարարվա՞ծ եք արդյոք անասնապահությունից ստացված արտադրանքի իրացման ծավալներից (N=76)



Անասնապահությամբ զբաղվող հարցվածների կեսից ավելին (55%) կենդանիների մորթ է իրականացնում (տե՛ս Գծապատկեր 68), ընդ որում՝ նրանց ճնշող մեծամասնությունը (90,7%) կենդանիների մորթը հիմնականում իրականացնում է սեփական տարածքում՝ առանց լրացուցիչ ծախսատար հատուկ սանիտարահիգիենիկ պայմանների (տե՛ս Գծապատկեր 69):

Գծապատկեր 68.
Իրականացնո՞ւմ եք արդյոք կենդանիների մորթ (N=238)



Գծապատկեր 69.
Որտե՞ղ եք հիմնականում իրականացնում կենդանիների մորթը (N=129)



Չնայած մորթի պայմանների ռիսկայնությանն ու հնարավոր բացասական հետևանքների վտանգին՝ հարցվողների մեծամասնությունը (80,0%) բավարարված է կենդանիների մորթի հարմարություններով (տե՛ս Գծապատկեր 70):

Գծապատկեր 70.

Բավարարվա՞ծ եք կենդանիների մորթի հարմարություններով (N=125)



Ընդհանուր առմամբ անասնապահությամբ զբաղվող գյուղաբնակների մեծամասնությունը (60,7%) բավարարված է անասնապահական գործունեությամբ: Միևնույն ժամանակ՝ անասնապահությունը խնդրահարույց է համարյա 40%-ի համար: Անասնապահների համարյա կեսը դժգոհ է իր հիմնական զբաղմունքից (տե՛ս Գծապատկեր 71):

Գծապատկեր 71.

Բավարարվա՞ծ եք արդյոք անասնապահական գործունեությամբ (N=239)



Ընդ որում՝ թե՛ անասնապահությունից ստացված արտադրանքի իրացման ծավալներից, թե՛ անասնապահական գործունեությունից առավել քիչ են բավարարված իգական սեռի ներկայացուցիչները՝ ի տարբերություն արական սեռի ներկայացուցիչների (տե՛ս Գծապատկեր 72):

Գծապատկեր 72.
Բավարարվա՞ծ եք ...



Անասնապահների ընդամենը 21,0%-ը դեմ է անասնապահության ծավալները ընդլայնելուն: Հաշվի առնելով անասնապահության բարդություններն ու խնդիրները՝ պատահական է, որ անասնապահների կեսից ավելին (51,5%) ծավալի փոփոխություն չի ենթադրում: Ցավոք յուրաքանչյուր 5-րդ անասնապահը (20,2%) մտադիր է դադարեցնելու անասնապահական գործունեությունը (տե՛ս Գծապատկեր 73): Որքան բարձր է հարցված անասնապահների կրթական մակարդակը, այնքան նրանք առավել հակված են անասնապահական գործունեության դադարեցմանը և/կամ անասնապահական ծավալների նվազեցմանը (Սպիրման ρ=.148, p<0.024, CI=95%, N=232):

Գծապատկեր 73.
Գյուղաբնակների՝ անասնապահությամբ զբաղվելու մտադրությունները (N=233)



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ինչպես նկատեցինք, սեռից, տարիքից կամ կրթական մակարդակից կախված փոխվում են գյուղաբնակների գյուղատնտեսական պրակտիկաներում ներգրավվածությունը: Հետաքրքիր է, որ գյուղաբնակները մեծամասամբ կամ ակտիվորեն ներգրավված են և՛ հողագործության մեջ, և՛ անասնապահության, կամ բացառում են գյուղատնտեսության երկու ձևերն էլ (տե՛ս Գծապատկեր 74):

Գծապատկեր 74.
Հողագործական և անասնապահական ակտիվության փոխպայմանավորվածությունը (N=372)



Բավական հետաքրքիր պատկեր է բացահայտվում սեփական գյուղատնտեսական ռեսուրսների հնարավոր կոլեկտիվացման շուրջ: Այսպես՝ այն պնդմանը, թե հողերը պետք է լինեն ընդհանուր օգտագործման, և գյուղացին այդտեղից կունենա իր բաժին եկամուտը, համաձայն է հարցվողների կեսից ավելին (53,1%): Միևնույն ժամանակ անասունի հետ կապված նույնատիպ պնդմանը կողմ է գյուղացիների ընդամենը 42.9%-ը:

Կարող ենք ենթադրել, որ ասվածի հիմքում ընկած է մասնավորապես հողերի կոլեկտիվացման նախկին փորձը և դրա մասին հիշողությունները, ընդհանուր հողերի առկայության դեպքում ծախքերի համահարթեցումը, կորուստների, կոնֆլիկտների և լարվածության պակասը (տե՛ս Գծապատկեր 75):

Գծապատկեր 75.

Ի՞նչ չափով եք համաձայն գյուղատնտեսության վերաբերյալ ստորև ներկայացված դատողություններից յուրաքանչյուրի հետ



Դիրքորոշումները կախված են տնային տնտեսության եկամտից: Եկամտի աճին զուգահեռ նվազում է գյուղի հողատարածքների (X^2=16.890, p<0.031, Cramer's V=0.219, CI=95%) և անասնապահական ենթակառուցվածքների (X^2=20.083, p<0.010, Cramer's V=0.241) ընդհանուր օգտագործման լինելու հակվածությունը (տե՛ս Գծապատկեր 76 և Գծապատկեր 77): Աղքատ գյուղացին կողմ է կոլեկտիվացմանը: Զարմանալիորեն անասունների կոլեկտիվացմանը կողմ են անասնապահությամբ չզբաղվող գյուղացիները (X^2=15. 086, p<0.005, Cramer's V=0.205):

Գծապատկեր 76.

Հողերը պետք է լինեն ընդհանուր օգտագործման, և յուրաքանչյուր գյուղացի ունենա իր բաժին եկամուտը



Գծապատկեր 77.

Անասնապահական ենթակառուցվածքները պետք է լինեն ընդհանուր օգտագործման, և յուրաքանչյուր գյուղացի ունենա իր բաժին եկամուտը



Գյուղացիների 68,3%-ը համաձայն է գյուղատնտեսական տեխնիկայի կոլեկտիվացմանը (տե՛ս Գծապատկեր 78): Կարելի է ենթադրել, որ գյուղատնտեսական անարդյունավետությունը և համապատասխանաբար գյուղաբնակի բարեկեցությունը, հասարակական դիրքը և այլն պայմանավորված է գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությամբ, որն անարդար սեփականաշնորհված է և անկախությունից ի վեր ընդամենը որոշ անձանց ձեռքում է: Բացի սրանից՝ վերարտադրվում են կոլտնտեսական հիշողությունները, երբ տեխնիկան հաստատ մեկինը չէր:

Գծապատկեր 78.

Գյուղտեխնիկան պետք է լինի ընդհանուր օգտագործման, և յուրաքանչյուր գյուղացի ունենա իր բաժին եկամուտը



Ինչպես արձանագրեցինք, տնային տնտեսության բարեկեցությունից կախված փոխվում են գյուղաբնակների գյուղատնտեսական պրակտիկաները: Իր հերթին գյուղատնտեսության մեջ հաջողությունը հաճախ առնչվում է տնային տնտեսության այլընտրանքային եկամուտների հետ, բայց մյուս կողմից՝ այլընտրանքային

եկամուտները գյուղատնտեսական գործունեության դադարեցման ռիսկ են ենթադրում:

... հողագործությամբ, գյուղատնտեսությամբ մենակ չես կարա, եթե ուրիշ եկամուտներ չունես:
50 տ., իգական, Արարատ

Բարեկեցության այլընտրանքային աղբյուր է շարունակաբար միգրացիոն գործունեությունը, արտագնա աշխատանքը:

Ես գնացել եմ Մոսկվա տաս տարի, ինչ-որ տեսնում եք, ես իմ ծնողին կարացել եմ օգնեմ, սարքել ենք էս ջերմոցը, հողեր ենք առել, տենց մենք էսօր կարում ենք հանապազօրյա հացը վաստակենք:
35 տ., արական, Կոտայք

Նրանց տղեն գնաց Ռուսաստան սկզբում, էնտեղից իրենց օգնում էր, որ ստեղ ապրեն, գյուղատնտեսությամբ էլ զբաղվում էին: Բայց ժամանակի ընթացքում, հիմա արդեն Ռուսաստան տեղ մարդիկ ունեն ապրող, որ լավ գործի են, օգնում են, ստեղ դադարացրեցին, արդեն ասում են զզվել ենք էդ գործից՝ կեղտոտ գործ ա, կգնանք արդեն արտերկիր ուրիշ գործ կանենք:
65տ., իգական, Լոռի

Գյուղատնտեսության հետ կապված խնդիրներում ԽՍՀՄ-ը հայաստանցի գյուղացու համար գոյության ոսկե դարն է, իսկ խնդիրները գլխավորապես տրամաբանորեն ծագեցին ԽՍՀՄ փլուզման հետ, երբ սկսվեց սեփականաշնորհման անարդյունավետ գործընթացը: Գյուղաբնակները ակնարկում են, որ շատերը սեփականաշնորհել են հողերը, բայց տարբեր պատճառներով դրանք չեն մշակում: Մյուս կողմից՝ մյուսներն էլ չեն կարող գյուղատնտեսությամբ զբաղվել, քանի որ սեփական հող չունեն:

Առաջ ո՞նց էր կոլխոզի, սովխոզի ժամանակ: Պատկերացնում ե՞ք՝ էտքան հողերը մշակեն, անմշակ չմնա, ինչքան կլինի: Այ սեփականաշնորհումները ինչի՞ ա մնացել, որ մեկս չենք մշակում հողերը: Ես մեծ հաճույքով կհանձնեմ, եթե ընդհանուր հավաքվենք ու բերք ստանանք մեր երեխեքի ապագայի համար: Ավելի լավ կլինի:
65 տ., իգական, Կոտայք

Գյուղացիները հիշատակում են նաև տեխնիկայի «անարդար» վերաբաշխումը, որի արդյունքներից է գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի հետ համագործակցության բարդությունները: Սեփականաշնորհման/մասնավորեցման արդյունքները դառնում են մի շարք գաղափարական նորարարությունների, ընթացիկ կոնֆլիկտների պատճառ: Ըստ գյուղաբնակների՝ առաջանում են սեփականաշնորհման

ընթացքում «հաղթածներ» և «պարտվածներ», «հաջողվածներ» և «ձախողվածներ»: Գյուղերում դեռևս պահպանվում է տեխնիկայի այսպես կոչված մենաշնորհը, իսկ գները որոշվում են անհատների կողմից:

Սովետից հետո չգիտեմ՝ էտ ոնց ա եղել էտ բաշխումը, ինչ-որ մեկը դիմել ա, գումար ա վճարել, տենց բաշխվել ա գյուղացիների մեջ:

45 տ., արական, Լոռի

Այսօրվա դիրքերից գնահատելով գյուղատնտեսական ենթակառուցվածքներն ու գյուղատնտեսությամբ զբաղվելու դժվարությունները՝ կարելի է առանձնացնել առավել տարածված խնդիրները.

- *Ենթակառուցվածքների, արտադրական միջոցների, գյուղատնտեսական ռեսուրսների բացակայությունը, անբավարարությունը կամ վատ վիճակը, որոնց թվում առանձնակի կարևորություն ունեն՝*
  - *ոռոգման անկատար համակարգը,*
  - *խոտի, պարարտանյութերի, տեխնիկայի սակավությունը և/կամ թանկությունը:*

- *Գյուղատնտեսությունից օգուտի և ներդրված ջանքերի անհամապատասխանությունը:*

Այն հաճախ հիասթափություն է առաջացնում՝ հանգեցնելով գյուղատնտեսական գործունեության դադարեցմանը

Բույսը փչանում ա, չգիտեմ թե էդ պարարտանյութերից ա, թե ինչից ա: Սրսկումները համարյա օգուտ չեն տալիս ու փչանում ա: Էլ ինչի՞ համար մշակեմ բույս:

70 տ., իգական, Արագածոտն

Շատ ա, չարչարանքը ավելի շատ ա, գյուղացին պիտի տանջվի, քրքրվի, որ էդ բույսը աճացնի:

50տ., իգական, Արարատ

- *Գյուղատնտեսական ապրանքների իրացման խնդիրները՝ շուկաների վերացումը, ապրանքի ցածր գինը, վերավաճառողների միջնորդությունը:*

Այսօր գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում իրացվում է վերավաճառողի միջոցով, որը, գյուղացու կարծիքով, վերջնական գնորդի հետ ուղղակի հարաբերությունների հետ համեմատած ապրանքը վերցնում է անհամեմատ էժան գնով:

Վերավաճառողները գալիս են մեզնից 70-90 դրամով են կաթը առնում: Իսկ որ նայում ես քաղաքում կաթի լիտրը 350-400 դրամ ա, ջուրը ավելի թանկ ա, քան կաթը: Խի պիտի տենց լինի, չեն թողնում գյուղացին իրա ապրանքը ծախի:

50 տ., իգական, Արարատ

Երևի 98 թվից արդեն շուկան վերջացավ, էլ չգնացինք շուկա: Մենք չենք կարա էթանք դռներ, նստենք շենքերի առաջ բան ծախենք: Նախ ինձ չեն թողնի իմ տղեքը, ասում են ամոթ չի՞ մենք կանք, դու էթաս շենքերի առաջ ապրանք ծախես, թո թափվի, որը լցնում ենք բոչկեն արաղ ենք քաշում, չէ, ասում են ամոթ չի՞ դու էդ տարիքի, դե ես արդեն 70 անց եմ …

70 տ., իգական, Արագածոտն

- *Գյուղատնտեսական ոլորտին առնչվող կարգավորումների և համակարգման խնդիրները:*

Ակնկալվում է, որ գյուղատնտեսական հարաբերությունների ընդարձակ խնդիրների կառավարողը, պատասխանատուն սպասելիորեն պետությունն է, այլ ոչ թե ազատ շուկան: Այս տրամաբանությամբ գյուղացու խնդիրներում «մեղավորը» նույնպես անկատար պետությունն է, որը փաստորեն մենակ է թողել վերջինիս նախապես պարտվողական մրցակցային պայմաններում, հատկապես, երբ պայմանական հակառակորդը ծավալուն բիզնեսն է, օլիգարխատը, արդյունավետ ագրոձեռնարկությունը:

Պարարտանյութերը թանկ են, ու չգիտես, թե ինչ ես սրսկում, ինֆորմացիա չկա, համակարգված մոտեցում չկա, որ պետությունը կազմակերպի:

35 տ., արական, Արմավիր

- *Ոլորտին առնչվող գիտելիքների և մոտեցումների պակասը:*

Այստեղ նույնպես գյուղացին հիշում է իր ոսկե դարը՝ ԽՍՀՄ-ը: Նրա պնդմամբ այդ շրջանում գյուղատնտեսություն վարելը գյուղաբնակի համար ավելի շատ եղել է մեխանիկական աշխատանք, որի դիմաց նա փոխհատուցում է ստացել աշխօրի, աշխատավարձի տեսքով: Գյուղատնտեսն այդ ժամանակ կիրառում էր պատրաստի մոտեցումներ, այլ ոչ թե դրանք ստիպված ստեղծում զրոյից: Խորհրդային կարգերի փլուզումից հետո գյուղաբնակը մնացել է մենակ, գյուղատնտեսության հետ դեմ հանդիման՝ առանց համապատասխան գիտելիքների ու հմտությունների: Որպես

արդյունք՝ գյուղատնտեսները մեթոդները փոխառում են միմյանցից՝ առանց ուսումնասիրելու դրանց համապատասխանությունը, արդյունավետությունը, վտանգները և այլն: Սա շատ ժամանակ բերում է ձախողման:

Էն ժամանակ մարդիկ չգիտեին, թե իրանց հողը ոնց վարեն, տեսնում էին հարևանը կարտոֆիլ ա ցանել, իրանք էլ էին ցանում, տեսնում էին հակակարկտային ա դրել, իրանք էլ էին դնում: Հիմա գիտելիքը կամաց-կամաց շատանում ա, բայց շատերը չգիտեն, թե ինչ արժի ցանել, ինչ պահել, որ լավ արդյունք ստանան՝ կախված իրանց գյուղի դիրքից:

35 տ , արական, Արմավիր

- *Տեղի հետ կապվածության և շարժունակության անհնարինությունը*

Գյուղատնտեսությունը բնորոշվում է որպես «հարատև չարչարանք» և «ժամանակի կորուստ», որը հնարավորություն չի տալիս տեղաշարժվել՝ առանց գյուղատնտեսության մեջ կորուստներ ունենալու: Սա ներկայացվում է որպես խոչընդոտ, երբեմն էլ գյուղատնտեսության դադարեցման դրդապատճառ: Նման խնդիրները մասնավորապես ընդգծված են անասնապահության համատեքստում:

Անասունը նենց բան ա, որ շաբաթ կիրակի չունես: Մի ժամ էլ կերը ուշացնում ես, գոռգոռում ա: Կտրված ենք լավ բանից: Որ մի տեղից հարսանիքից հրավիրում են, մտածում ենք ո՞վ պիտի գնա: Ու՞մ ասենք, ու՞մ խնդրենք: Կամ ամուսինս պիտի գնա, ես չգնամ, կամ ես գնամ, ինքը չգնա:

60 տ., իգական, Սյունիք

Եթե դու գոնե մեկ անասուն ունեցար, դու ամեն օր առնվազն 3 ժամ պետք ա տրամադրես էտ անասունին առավոտ, կեսօր, իրիկուն: Կարա լինի էնպես, որ դու ունենաս 6 հեկտար տարածք, բայց դու ամեն օր ժամանակ չտրամադրես:

40 տ., արական, Լոռի

- *Աշխատուժի պակասը*

Հետազոտությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ ընտանիքի ամբողջական ներգրավվածությունը խթանում է ավելի մեծ հաջողությամբ վարելու գյուղատնտեսությունը, դրա համար փոքր ընտանիքներում կամ այնտեղ, որտեղ հիմնականում ընտանիքի մեծերն են զբաղվում գյուղատնտեսությամբ, դրա շարունակականության հավանականությունը փոքր է:

Գյուղատնտեսությամբ զբաղվելու խոչընդոտների կողքին կարևոր է նաև արձանագրել

գյուղատնտեսական գործունեության դադարեցման հիմնական նախադրյալները, որոնց մեջ կարևոր են հետևյալ 4 գործոնները՝

1. Գյուղում մշակութային սեգրեգացիան

Գյուղերում կան ընտանիքներ, որոնք ավանդականորեն (խորհրդային տարիներից) զբաղվել են գյուղատնտեսությամբ, միևնույն ժամանակ, այսպես ասած, գյուղի «ինտելիգենցիան»: Կախված ընտանիքի այսօրինակ մշակութային կարգավիճակից՝ տատանվում է գյուղաբնակների մասնակցությունը գյուղատնտեսական գործունեությանը:

Մենք չենք կարա էթանք դռներ, նստենք շենքերի առաջ բան ծախենք: Իմ ընտանիքում բոլորը մանկավարժ են եղել, ես էլ եմ մանկավարժ եղել, ինձ չեն թողնի իմ տղեքը, ասում են ամոթ չի՞, մենք կանք, դու էթաս շենքերի առաջ ապրանք ծախես, թող թափվի բերքը:

70 տ., իգական, Արագածոտն

2. Այլընտրանքային զբաղվածությունը/մասնագիտացումը

Այն ընտանիքներում, որտեղ ավանդականորեն առկա է եղել ոչ գյուղատնտեսական մասնագիտացում, ժամանակի ընթացքում կարևորվում են ոչ միայն գյուղատնտեսությամբ զբաղվելը, այլ որպես արժեք հանդես է գալիս կրթությունը, գիտելիքը, հմտությունները: Այս միտումը ներկայումս օրինաչափ է գյուղաբնակների գրեթե բոլոր խմբերի համար:

Կիսուրս միշտ ասում էր ընտանիքը մի պարկ ցորենի մեջ մի բուռ գալգալոս ցորեն ա եղել: Մերոնք իրանց կրթվածությամբ, մակարդակով հետո օգնել են: Հետո կրթվածության մակարդակից կախված մենք սկսեցինք ավելի լավ ապրել, ու էլ չշարունակեցինք գյուղատնտեսությամբ զբաղվելը, մենակ մի քանի ծառ պահում էինք մեր համար:

70 տ., արական, Արագածոտն

Չէ, դե լրիվ փոխվեց մեր դրությունը, կրթվածության մակարդակից կախված մենք սկսեցինք ավելի լավ ապրել ժամանակի ընթացքում ու դադարացրեցինք գյուղատնտեսությունը, որովհետև այլ աղբյուրներից կարողանում էինք եկամուտներ ունենալ:

65 տ., արական, Կոտայք

3. Արժեքների, ավանդույթների վերափոխումը և/կամ ավանդականության խախտումը տնային տնտեսությունում

Երբ հաջորդ սերունդը չի շարունակում այն գործունեությունը, որը փոխանցվել է նախորդ սերնդից:

Մենք ունեցել ենք ինչ հանարավոր ա, տան մեջ պահել անասունները՝ ընտանի կենդանիներ, կով, ոչխար, խոզ, ձի՝ ինչ հնարավոր էր: Ըստ տատիկի, եթե ինչ-որ մի բան չէիր պահում, ուրեմն շատ վատ բան կլներ քեզ հետ: Ինքը ուզում էր, որ ամեքից ունենանք, կապ չուներ ինքը օգուտ էր տալիս, թե մեզ խանգարում էր: Բայց տատիկից հետո հիմա համարյա ոչինչ չունենք՝ բացի մի քանի հավից, մի որոշ ժամանակ մայրիկի հետ անում էինք, հետո դադարեցրեցինք:

40 տ., արական, Տավուշ

4. Հիասթափությունը

Արձանագրվում է գյուղատնտեսական գործունեության արդյունավետության, աշխատանքի արտադրողականության պակասը: Գյուղատնտեսությամբ զբաղվելը դիտարկվում է որպես ոչ հեռանկարային՝ նպաստելով, որ երիտասարդ սերունդը բացառվի այս ոլորտից:

... որովետև իրանք գիտեն արդեն, թե ինչ պիտի լինի, էդ կեղտոտ գործը ա, կթողնեն, իրանք հանգիստ իրանց համար թեթև գործ գտնեն, գնան աշխատեն էդ ավելի ձեռնտու ա իրանց, քանց թե կեղտի ու թրիքի մեջ ջահելը, բոլորն էլ ձգտում են, որ քաղաք գնան, քաղաք գործ գտնեն:

65 տ., իգական, Լոռի

Ընդ որում՝ գյուղատնտեսական գործունեությունը դադարեցրած տնային տնտեսությունների պարագայում արձանագրվել է տնային տնտեսության վիճակի բարելավում: Գյուղատնտեսությանը փոխարինող աշխատանքներ են դիտարկվում ***արհեստավորությունը, սպասարկման ոլորտում աշխատանքը, արտագնա աշխատանքը:***

Գյուղատնտեսությամբ զբաղվելու դրդապատճառները որոշ դեպքերում իռացիոնալ են և չեն առնչվում գյուղատնտեսության արդյունավետությանը: Դրանք վերբերում են գյուղատնտեսության ավանդական ժառանգությանը և նվիրվածությանը գյուղատնտեսական աշխատանքին, ինչպես նաև տեղի հետ կապվածությանը:

Ես երազում եմ, որ մեր վարելահողերը մշակվեն:

Արական, ջերմոցային գյուղատնտեսություն, 40 տ., Ակներ

Դե սարի կյանքը ուրիշ ա: Հավեսս էլ, ոչինչ, վատ չի, եթե չմնար, չէի շարունակի զբաղվել:

75 տ., իգական, Արագածոտն

... Ես չեմ կարա ուրիշի ձեռին նայեմ, ես իմը պետք ա ունենամ, ստեղծեմ:

70 տ., իգական, Արագածոտն

... Ես ափսոս եմ գալի հողին, կարամ հրաժարվեմ, բայց ափսոս եմ գալի: Ասենք, ասում եմ՝ հող ա խի՞մնա անտեր-անտիրական, ծառ ա էլի, դնենք, ինչ էլ պոկես ծառի վրից, ծախես էլի եկամուտ ա էլի:

50 տ., իգական, Արարատ

Բացի սրանից՝ գյուղացիները նաև ստիպված են զբաղվելու գյուղատնտեսությամբ:

Սովետից հետո էլ աշխատանք չեղավ: Մարդիկ պարապ մնացին, ի՞նչ անեին: Մի բանով ստիպված պիտի զբաղվեին, ստիպված հողով տենց, թե չէ ինչ:

65 տ., արական, Կոտայք

Գյուղատնտեսությունը միջոց ա ճիշտ գումար վաստակելու, այսինքն՝ դու գողություն չես կարա գյուղատնտեսությունում անես:

35 տ., արական, Արմավիր

Անասուն չպահես, էլ չիլնում, արդեն պիտի գյուղից թողնես գնաս: Ուրիշ աշխատանք չկա, ինչո՞վ զբաղվենք:

60 տ., իգական, Սյունիք

Հատկանշական է, որ գյուղատնտեսության հաջողված փորձ է ներկայացվում վերջինիս փոխակերպումը գյուղատնտեսական ձեռներեցության (ֆերմերային գյուղատնտեսություն, ջերմոցային գյուղատնտեսություն, այգեգործություն): Ուսումնասիրելով հաջողված գյուղատնտեսների, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ ներգրավվածների և գյուղատնտեսական գործունեությունը դադարեցրածների փորձը՝ առանձնացվել են այն հիմնական պայմանները, որոնք, ըստ գյուղաբնակների, անհրաժեշտ են գյուղատնտեսական գործունեության մեջ հաջողության հասնելու համար:

• *Հետևողական աշխատանքը*

Եկամտաբեր էն ժամանակ ա լինում [գյուղատնտեսությունը], երբ ամեն ինչը տեղը տեղին դու անում ես գյուղատնտեսությամբ զբաղվողը ամբողջովին պտի զբաղվի գյուղատնտեսությամբ՝ բուժում, ոռոգում: ***Ովքեր տեր են կանգնում՝ հաջողում են:***

50 տ., Իգական, Արարատի մարզ

• *Տնային տնտեսության ամբողջական ներդրումը*

Նախ գյուղատնտեսությամբ զբաղվողը ամբողջովին պտի զբաղվի գյուղատնտեսությամբ, նորմալ պտի զբաղվես, նենց չպիտի լինի, որ ձեռդ ամեն տեղ գցես ու ոչ մի տեղից օգուտ չստանաս:

70 տ., Իգական, Արագածոտն

• *Գյուղատնտեսության համապատասխանեցումը աշխարհագրական դիրքին*

Սկսել ենք կարտոֆիլ չցանել, որովհետև հասկացանք, որ կարտոֆիլը մեր տարածաշրջանում լավ չի լինում, աշխարհագրական դիրքի պատճառով: Ավելի ճիշտ կլինի ենթադրենք անասնապահությամբ զբաղվել թող կարտոֆիլ էն տարածաշրջանում անեն, որտեղ ավելի լավ ա աճում

40 տ., արական, Տավուշ

• *Սպառման շուկային համապատասխանությունը*

Կան մշակաբույսեր, որ ամեն տարի լճացած ա լինում, վաճառքի հետ կապված խնդիր ա լինում, կամ դու ինքնարժեքով չես կարում մրցակցես էն խոշոր ընկերությունների կամ խոշոր անհատների հետ, ու քեզ ընդհանրապես ձեռնտու չի լինում էտ մշակությամբ զբաղվել: Դա շուկան չուսումնասիրելու արդյունք ա:

40 տ., արական, Լոռի

Ես որոշել եմ, որ էսօր ավելի ձեռնտու ա մանր եղջերավոր պահելը, քան խոշորը: Խոշորը եկամտաբեր չի: Մանրը գիտես, որ դու պահում ես, մի գառը գալիս են քեզանից ցածր գնով՝ 40 հազարով, եզդիները տանում են: Էս մանրը հիմի ավելի ձեռնտու ա, քան թե խոշորը:

70 տ., արական, Գեղարքունիք

• *Արդյունավետ գյուղատնտեսավարման համար անհրաժեշտ գիտելիքներ/մոտեցումներ*

Հատուկ մոտեցումներ կան ամեն ինչ անելու, ընդեղ խելացի համակարգեր տեղադրես կաթիլային, որ ինքը իրան ոռոգվի, շաբաթը մեկ գոնե մոտենաս, տեսնես՝ բերքը ինչ հասունացման փուլում ա, ըստ դրա ոռոգման ու պարարտացման մոտեցումներ փոխես:

40 տ., արական, Լոռի

Էդ գիտելիքը ես սաղ ունեմ, կարողանում եմ անգամ խոզերի ծննդաբերումը ինքս կազմակերպեմ, պատահում ա ես իմ անասուններին սրսկում եմ, ըսկի կարիքն ըլնի, անասնաբուժներին չեմ էլ կանչում:

60 տ., իգական, Սյունիք

• *Եկամտի այլընտրանքային աղբյուրները*

Ես աշխատում էի ու աշխատավարձ էի ստանում, ամուսինս էս հակակարկտային ջոկում էր աշխատում: Դրա հետ միասին աննասուն էինք պահում, գյուղատնտեսությամբ էինք զբաղվում, ծառեր էինք աճացնում, պահում գյուղատնտեսությունը:

70 տ., իգական, Արագածոտն

Ես գնացել եմ Մասկվա տաս տարի, ինչ-որ տեսնում եք, ես իմ ծնողին կարացել եմ օգնեմ, սարքել ենք էս ջերմոցը, հողեր ենք առե, տենց կարում ենք մեր հանապազօրյա հացը վաստակենք:

30 տ., արական, Արմավիր

• *Սեփական փորձն ու փորձի փոխանակումը գյուղատնտեսների միջև*

... Ընկերս ինձ կանչեց [երկրի անունը]: Ինքը ընդե ելակի այգիներ ունի: Մի ամսով գնացի: Ու հարցրեցի՝ ինչ ա պետք էդ ամեն ինչն անելու համար: Ինքը մի քանի տարվա պրակտիկ փորձ ուներ, իրանից շատ բան իմացա ու սովորեցի:

40 տ., արական, Լոռի

Մենք թազա հարևան ունեինք, ինքը տեսավ՝ ես հավ եմ պահում, շահագրգռվեց, ուրախացավ, ամեն օր ինձ հարցեր էր տալիս՝ էսի ո՞նց պահեմ, ո՞նց անեմ, որ լավ լինի բերեց ինքն էլ սկսեց պահել, մեծ սիրով անում ա ու լավ էլ ստացվում ա:

65 տ., իգական, Կոտայք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ սույն հետազոտության նպատակը Հայաստանում գյուղականության, մասնավորապես գյուղացու և գյուղի, ինչպես նաև գյուղատնտեսության ճգնաժամի բացահայտումն էր և առանձին դրսևորումների ախտորոշումը: Բացահայտված են արտադրատնտեսական կառուցվածքների, գործընթացների, հարաբերությունների խորքային խեղումները, արդյունավետ իրացման անհնարինությունը, գյուղացիության հասարակական կառուցվածքի հեռանկարում խիստ խնդրահարույց վերարտադրման օրինաչափությունները, ծավալուն սոցիալական բևեռացումն ու սեփական ուժերով նյութական, մոնետար աղքատության հաղթահարման անհնարինությունը: Միևնույն ժամանակ գնահատելով գյուղականության տնտեսական, էկոլոգիական, սոցիալ-իրավական և վարչաքաղաքական համատեքստերը՝ բացահայտվել են գյուղատնտեսության ճգնաժամի հիմնախնդիրները՝ վերհանելով գյուղատնտեսության դերի կարևորման անհրաժեշտությունը:

- *Գյուղացու և գյուղի ճգնաժամը*

Արդի գյուղացուն, գյուղական հանրույթին, ըստ էության, ներհատուկ է ճգնաժամային հակասականությունը, իր լինելիության նորմատիվային ճգնաժամը: Գյուղացին միաժամանակ կրողը, վերարտադրողն ու սպառողն է սոցիալական գոյության հաճախ հակադիր, բևեռային աշխարհայացքային, գաղափարաբանական, նորմատիվային հենքերի, արժեքային, վարքային, իմացական իրարամերժ ատրիբուտների: Դասական սոցիոլոգիային վաղուց հարազատ նման ճգնաժամային անոմիայում այսօրվա գյուղացին չի հրաժարվում խոչընդոտից, չի յուրացնում և օգտագործում անհրաժեշտ հնարավորությունները:

Գյուղացու արժեքային դիրքորոշումները երկակի են, հաճախ՝ հակասական, իսկ բախման հիմքում ընկած են ավանդականությունն ու արդիականությունը, պահպանողականությունն ու ազատականությունը, կոլեկտիվիզմն ու անհատապաշտությունը, համայնքավարությունն ու ժողովրդավարությունը, պատերնալիզմն ու ազատամտությունը:

Ճգնաժամային է նաև արդի գյուղացու բազմաչափ ինքնությունը՝ գյուղականություն հասկացության անկյունաքարային բաղադրիչը: Այստեղ տարամիտում են նորմատիվային հենքը, ընկալումների էմոցիոնալությունը, դրվածքները, գործողությունների նպատակները, սոցիալական կազմակերպումների գործառույթներն ու իմաստները:

Գյուղացին հեռացված ու օտարված է վերջինիս լինելիության կարևորագույն հենքից՝ հողից, միաժամանակ չունենալով դրանից արդյունավետ հրաժարվելու կամ այն արդյունավետացնելու որևէ հնարավորություն: Բնականաբար, ասվածը համասեռ չէ: Ակնհայտ է նկարագրված իրողության դասակարգային կառուցվածքը: Կարելի է ասել, որ մենք ականատես ենք մի քանի տիպի գյուղացու, ամենայն հավանականությամբ մի քանի գյուղականության, որոնք որոշակիորեն ճգնաժամային կեցության գրավականն են ու դա խորացնող իրողություն:

Անդրադառնանք հայ գյուղացու կեցության, գյուղականության ճգնաժամի հետազոտության արդյունքում բացահայտված մի շարք հենքերի ու դրսևորումների: Առաջնահերթ է գյուղատնտեսության՝ որպես կարևորագույն արտադրասպառողական հարաբերությունների կրողի անվտանգային ինստիտուտի ճգնաժամը: Գյուղատնտեսությունը լայնորեն գրավիչ չէ, գյուղացին աղքատ է: Վերջին տասնամյակների ընթացքում կապիտալի նախնական կուտակման շրջանին հատուկ պայմաններում գյուղացին ընդհանուր առմամբ շարունակաբար նախկինում չտեսնված մրցակցային հարաբերությունների մասն է: Նա միայնակ է (նեո)լիբերալ շուկայի տարաբնույթ մարտահրավերների առջև, որի դեպքում բարեկեցիկ գոյատևմանը միտված զուտ սեփական մարտավարությունների և ռազմավարությունների, գործունեության պարտության հավանականությունը խիստ բարձր է: Հողը՝ որպես արդյունավետ կապիտալ, ընդհանրապես գյուղատնտեսությունը և այս հիմքով հետագա բարեկեցությունը մշտապես պակաս արդյունավետ են, հեռանկարային չեն: Այս պայմաններում է, որ համաձայն հետազոտական արդյունքների գյուղացին հաճախ հիշատակում է մասնավորաբար պետական այս կամ այն աջակցության անհրաժեշտությունը, այլ կերպ ասած՝ միտված է իրեն ազատագրելու շուկայից, «շուկայականությունից»:

Վերոհիշյալ իրողությանը նպաստում է հայաստանյան գյուղատնտեսության, տնտեսական հարաբերությունների արդիականացման, ճկունացման երկարամյա բացակայությունը, դրա անհնարինությունը: Գյուղացին գյուղատնտեսությամբ է զբաղվում ջանքերի նվազագույն սպառման սկզբունքով և երազում է ոչ թե արդյունավետ գյուղատնտեսություն, այլ դասական արդյունաբերություն, որի դեպքում ինքը աշխատավարձի, իհարկե ցանկալի աշխատավարձի դիմաց բանվոր է:

Հետազոտությունը բացահայտում է, որ հայ գյուղացին ոչ միայն արդիականացված չէ, այլ նաև ապաարդիականացված ու ապաարդյունաբերականացված է: Ի միջի այլոց, նա մշտապես աչքի առաջ ունի սովետական արդյունաբերացված, մեխանիզացված, ծավալուն գյուղատնտեսության նվաճումների տրավմատիկ հիշողությունը: Այս

հիմքի վրա կառուցվող բարեկեցության առասպելաբանությունը համալրում է գյուղ - քաղաք համեմատություններով, քաղաքայինի իդեալականացմամբ, գյուղից ելքի անհնարինության դեպքում՝ քաղաքի մշտական ձգտմամբ:

Ներկայիս կործանված համայնքայնությունը համեմատվում է նախկին՝ նույն խորհրդայինի հետ, որի կենսունակությունը ուղղակի կապվում է կոլեկտիվ գյուղատնտեսավարման հաջողությունների հետ: Միևնույն ժամանակ գյուղացին հակադիր է քաղաքացուն, գյուղը հակադիր է քաղաքին. գյուղը «մաքուր» է, «մաքուր» է նաև գյուղացին: Գյուղացին զարմանալիորեն առաջադրում է իր խտրական ինքնությունը հակառակից, երբ քաղաքացին սնափառ վերաբերմունք է ցուցաբերում իր հանդեպ: Միևնույն ժամանակ քաղաքացին՝ որպես հնարավոր բարեկեցության ռեսուրս, սոցիալապես (գյուղացու ռեֆերենտ պատկերացումներում) մոտ է անգամ աղքատ գյուղացուն:

Գյուղատնտեսության շարունակական անարդյունավետությունը, զուգահեռվելով արդիականացման անիրագործելիության հետ, օտարում է գյուղացուն գյուղականի հիմք հանդիսացող ռեսուրսից՝ հողից, համայնքայինից, նման կեցության նորմատիվային հենքերից, ավանդականից: Գյուղացին իր մարգինալ, անորոշ ինքնությամբ մնացել է իր գոյության ավանդական նախադրյալների և նոր, օրինակ՝ շուկայական անհաջողությունների մարտահրավերների ծայրահեղ դիսֆունկցիոնալ համադրությունում:

Ներկայացված պայմաններում գյուղացին ցուցաբերում է ձեռքբերովի անօգնականություն՝ իռացիոնալ ապավինելով որևէ հայրիշխանության (պատերնալիզմի): Նա անվստահ է, ցուցաբերում է սոցիալական մերժողականություն (social nihilism), ծայրահեղ այսօրեականություն: Այստեղ, ցավոք, անհնար է խոսել հետագա արդիականացման և իրավիճակի բազմակողմանի բարելավման մասին:

Գյուղացու մարգինալությունը բազմաչափ է: Ազատվելով նախկին համայնաքվարությունից՝ գյուղացին անհատապաշտություն է դավանում: Նա պարտվում է լիբերալիզմում՝ հիշում է կոլեկտիվիզմը, պատասխանատու է միայն նեղ ընտանիքի համար, պահանջում է կոոպերատիվ հարաբերություններ:

Ճգնաժամային ու հակասական են արդի գյուղացու քաղաքական դիրքորոշումները, լայն առումով՝ քաղաքական ինքնությունը: Իմիտացիոն ժողովրդավարությունը՝ որպես անհասկանալի, վերջերս սերտված նորմ, տեղին է հզոր ինքնիշխանի հրամայականի հետ:

Ընդհանուր գյուղացիության անհամասեռության կարևորագույն ջրբաժանը, ինչքան էլ 21-րդ դարի համար զարմանալի չէ, այնուամենայնիվ դասակարգն է: Ակնառու է հաջողակ գյուղացու՝ արդեն իսկ ֆերմերի զատումը մնացածից: Այստեղ անորոշությունը քիչ է: Նա մարգինալ չէ: Կենսական ռազմավարությունները հստակ են և առավել ֆունկցիոնալ:

• Հաջողակ գյուղատնտեսը՝ ֆերմերը, հիմնականում հողագործը, հստակ է կողմնորոշված շուկայում: Նա միտված է մրցակցության, հաղթանակի, նվաճումների, որը թույլ հակադիրների և սահմանների պարագայում անպայման հղի է մի ամբողջ շարք բացասական հետևանքներով: Սա այլևս անպայման շահին միտված ձեռնարկատեր է՝ կապիտալի նախնական կուտակման պատմական փուլին հարիր մրցակցականությամբ ու ներուժով: Ձեռնարկության հեռանկարային արդյունավետությունը տրամաբանորեն պահանջում է արտաքին խոչընդոտների բացակայություն: Այս նոր ֆերմերը այլ հավասար պայմաններում համաքայլ է բնապահպանությանը, համագործակից՝ տնտեսվարմանը, ընդարձակ սոցիալական պատասխանատվությանը, պետության ձախ միջամտություններին և այլն, քանի դրանք չեն կանգնեցնում իր անհրաժեշտ առաջխաղացումը, նվաճումները:

• Սեփական գյուղատնտեսական գործունեությունը հիմնված է նախապես կուտակված այլաղբյուր կապիտալի արդյունավետ տնօրինման, ներդրման վրա: Նա ընդհանրապես հակված է լրացուցիչ երկարաժամկետ ներդրումների և զերծ է առավել աղքատ դասին հարիր աննպատակ, դիսֆունկցիոնալ կուտակումներից:

• Ֆերմերը նորարար է: Ընթացիկ հաջողությունները հեռանկարում սեփական գյուղատնտեսության և հարակից ոլորտների արդիականացման հնարավորություն են:

• Սոցիալական արդարությունը տեսնում է անկողմնակալ մրցակցության երաշխիքներում:

• Ֆերմերը երիտասարդ է, նա ազատական է և դեմ է գյուղում որևէ տեսակի մենիշխանական կառավարմանը: Պահանջում է, որ մասնակից լինի գյուղում իշխանության վերաբաշխման գործին:

• Սեփական արդյունավետությունը ապահովում է այլ գյուղացիների և տնտեսվարների հետ փոխանակման հարաբերությունների վրա հիմնված կոոպերացիայի միջոցով:

• Դեմ է գյուղատնտեսական ռեսուրսների և գործընթացների կոլեկտիվիզացիային՝ համարելով, որ հնարավոր համահավասարեցումը բերելու է իր նվաճումների, ապա նաև կուտակածի կորստի:

Ինչ խոսք, հետազոտությունը ցույց է տալիս, որ գյուղականության ճգնաժամի վերարտադրության համատեքստում իրավական և տնտեսական խնդիրներին զուգահեռ կենտրոնական է ինքնության հիմնահարցը: Սա այն բաղադրիչն է, որը հատկապես պետք է հաշվի առնել գյուղը թիրախավորող քաղաքականությունների մշակման համատեքստում՝ այն ըմբռնելով որպես բազմաչափ և բազմաբարդ ֆենոմեն, որի դեպքում գյուղատնտեսությունից զատ գյուղը նաև համայնք է, իսկ հողը՝ սոցիալ-մշակութային կապիտալը:

Այս խնդիրը չհաշվարկելու սոցիալական ռիսկերը լավագույնս դիտարկելի են համայնքների խոշորացման գործընթացում, որը պետականորեն դիտարկվել է որպես վարչատարածքային բարեփոխում՝ մեծամասամբ բաց թողնելով բնակավայրերի խոշորացման համատեքստում դրսևորելի և հավանական ինքնության, համակեցության և սոցիալական ներառման խնդիրներն ու ռիսկերը՝ որպես գյուղականության ճգնաժամի խորացման հիմքեր: Համաձայն հետազոտության արդյունքների՝ համայնքների խոշորացման հետ կապված դժգոհությունները կապված են վարչաքաղաքական բաժանումների սկզբունքների և ձևավորվող նոր միջբնակավայրային հարաբերությունների հետ մասնավորապես՝ ապա/սահմանազատումը, նույն խոշորացված համայնքում հայտնված բարեկեցիկ և ոչ բարեկեցիկ բնակավայրերի միջև լարվածությունները, վարչական աշխատողների թվաքանակի կտրուկ նվազումից և ձգտելի, պատվաբեր, իշխանավոր աշխատատեղերի կորստից, նոր ռիսկերից ու հնարավորությունների արդյունավետ տնօրինումից անհանգստությունները: Խոշորացված համայնքներում բնակավայրերը հիմնականում մրցակցում են համայնքի կառավարման օղակներում ներկայացվածության համար: Ըստ գյուղաբնակների՝ ներկայացվածության մակարդակից է կախված, թե որքանով է խոշորացման գործընթացը հնարավորություն կամ ռիսկ տվյալ բնակավայրի համար:

- *Գյուղատնտեսության ճգնաժամը*

Արցախյան 44-օրյա պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցությամբ պայմանավորված սրվել են գյուղական տնտեսությունների, գյուղատնտեսական արժեշղթաների, շուկայի ու գների վիճակը: Կրճատվել են հատկապես հացահատիկի և հատիկաընդեղենի ներմուծման ծավալները, սրվել է անասնակերի ապահովման խնդիրը: Միաժամանակ պարենային անվտանգության առումով ռազմավարական նշանակություն ունեցող ցորենի տեղական արտադրության ցուցանիշը Հայաստանում ավելի քան երեք անգամ ցածր է, քան ներմուծված ցորենի ծավալը: Չնայած դրան՝ ցորենի ռազմավարական պաշարների արտադրությունը երկրի ներսում խթանելու օրենսդրական շրջանակն ու գործնական քայլերը Հայաստանում որոշումներ

կայացնողների համար առաջնահերթություններ չեն: Մինչդեռ երկրի պարենային անվտանգության համատեքստում գյուղի ու գյուղատնտեսության դերի կարևորումն անհրաժեշտություն է:

Գյուղատնտեսությունն առանցքային դերակատարություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում և արտաքին առևտրի հաշվեկշռում: Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքում կարևոր տեղ են զբաղեցնում մսի և կաթի, ինչպես նաև հացահատիկի ու հատիկաընդեղենի, մրգի, հատապտղի ու խաղողի արտադրությունը: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և մեքենայացման շնորհիվ Հայաստանում անասնաբուծության ճյուղերից լավ զարգացած է թռչնաբուծությունը: Դրան հակառակ ոռոգման ջրի և շուկայի հասանելիության խնդրով պայմանավորված վերջին տարիներին նվազել են բանջարանոցային մշակաբույսերի և կարտոֆիլի թե՛ ցանքատարածությունները և թե՛ համախառն բերքը:

Հայաստանում վարելահողերի շուրջ կեսը չի օգտագործվում: Հողերի անմշակ կամ անարդյունավետ լինելու պատճառներից մեկը համարվում է դրանց մասնատված լինելը: Պատճառներից է նաև գյուղական բնակավայրերից միգրացիան և հետևաբար հողի սեփականատերերի բացակայությունը: Հողատարածքների մասնատվածությունը, ոռոգման համակարգի և ենթակառուցվածքների հնացած լինելը կամ բացակայությունը, մոնոկուլտուրաները և ցանքատարածքների ու արոտավայրերի անարդյունավետ կառավարումը, հողերի դեգրադացիան և մի շարք այլ խնդիրներ հանգեցնում են գյուղական վայրերում բնակվող մարդկանց կենսապայմանների վատթարացման և պատճառ դառնում գյուղից ու գյուղատնտեսությունից նրանց հեռանալու համար:

Գյուղատնտեսական արտադրողականության անկման պատճառներից են գյուղատնտեսությամբ զբաղվողի համապատասխան գիտելիքի և հմտությունների բացակայությունը, գիտություն, քաղաքականություն և գյուղատնտեսական պրակտիկ գործունեություն կապի խզումը, ինչպես նաև ագրարային խորհրդատվական համակարգի բացակայությունը: Թույլ են զարգացած գյուղատնտեսությամբ զբաղվողների և գյուղական տնտեսությունների միջև համագործակցության ու փորձի փոխանակման մեխանիզմները:

Գյուղատնտեսության ոլորտին հատկացրած պետական ներդրումները բանկերի ու մասնավոր ընկերությունների միջոցով ուղղվում են հատկապես մի քանի տասնյակ միջին և խոշոր հողատերերի ձևավորմանը և դրանց արդի գյուղատնտեսական

տեխնոլոգիաներով (վերա)զինմանը: Արդյունքում սակավ կարողություններ և ռեսուրսներ ունեցող գյուղատնտեսությամբ զբաղվողները և նրանց ընտանիքները հիմնականում դուրս են մնում պետական աջակցության ծրագրերից: Չնայած գյուղական վայրերում պետական և միջազգային ծրագրերի միջոցով տարեկան մի քանի հարյուր միլիարդ դրամի հասնող ներդրումներ են իրականացվում, սակայն դրանք չեն նպաստում աղքատության ցուցանիշների նվազմանը և պարենային անվտանգության խնդիրների լուծմանը:

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով, իրավական ակտերով և ոլորտի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված միջազգային կոնվենցիաներով ու համաձայնագրերով: Այդուհանդերձ, տարբեր օրենքներում և իրավական ակտերում գյուղատնտեսությամբ զբաղվողին կամ գյուղական տնտեսությանը տրվում են միմյանցից տարբերվող մի շարք բնորոշումներ (օրինակ՝ ագարակատեր, ֆերմեր, գյուղացի, առաջնային արտադրող, գյուղացիական տնտեսություն և այլն)՝ այդպիսով չհստակեցնելով նրանց իրավական (և սոցիալական) կարգավիճակը: Ներկա օրենսդրությունում չեն սահմանվում գյուղատնտեսությամբ զբաղվողի սոցիալական պաշտպանվածության երաշխիքները: Ընդ որում՝ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման հնարավորությունների շուրջ քննարկումները կարևոր է մեկնել ներկայիս գյուղի սոցիալական կառուցվածքը ըմբռնելով:

Գյուղատնտեսությամբ զբաղվողները և գյուղական տնտեսությունները տեղեկատվության, գիտելիքի ու ռեսուրսների բացակայության պատճառով շուկայում թույլ բանակցային դիրք ունեն: Հատկապես նպաստավոր օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով գյուղմթերք արտադրողներն առավելապես գործում են ոչ ֆորմալ դաշտում:

Գյուղական բնակավայրերում թույլ զարգացած են ենթակառուցվածքները (շուկաների անհասանելիություն ճանապարհների ոչ բարվոք լինելու պատճառով, գյուղմթերքի պահեստների և սառնարանային տնտեսությունների բացակայություն): Գյուղատնտեսական արտադրանքի մեծ կորուստներ է գրանցվում արժեշղթայի լոգիստիկ/փոխադրման սեգմենտում՝ ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների բացակայության պատճառով: Բացի դրանից՝ առկա են սննդի վերամշակման արդյունաբերության և արտահանման շուկայի զարգացման տարաբնույթ խոչընդոտներ:

Գյուղատնտեսությունում ներգրավված են գրեթե նույն թվով կանայք և տղամարդիկ, սակայն կանայք առավելապես ներգրավված են ոչ ֆորմալ գյուղատնտեսական գործունեության մեջ: Բացի սեռով պայմանավորված անհավասար վարձատրության հանգամանքից՝ Հայաստանում մի շարք դժվարություններ կան կանանց՝ գյուղատնտեսության վերաբերյալ տեխնիկական գիտելիքների ու տեղեկությունների հասու լինելու, ինչպես նաև օժանդակ ծառայություններից ու վերապատրաստման դասընթացներից օգտվելու համար: Կանայք հազվադեպ են ղեկավարում գյուղական տնտեսությունը կամ գյուղատնտեսական արտադրությանն առնչվող առանցքային որոշումներ կայացնում: Գյուղական տնտեսությունում ոչ պաշտոնապես աշխատող գյուղաբնակ կանայք Աշխատանքային օրենսգրքով սահմանված որևէ փոխհատուցում չեն ստանում, օրինակ՝ հիվանդության պատճառով արձակուրդ և երեխայի խնամքի նպաստ: Միաժամանակ Հայաստանում ցածր է մինչև հինգ տարեկան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում:

Ընդհանուր առմամբ Հայաստանի գյուղատնտեսությունը բնորոշվում է հողային և ջրային ռեսուրսների սակավությամբ և անարդյունավետ օգտագործմամբ: Գյուղատնտեսությունն ավելի խոցելի է դառնում հատկապես կլիմայի փոփոխության պայմաններում: էկոլոգիական հիմնախնդիրները պայմանավորված են հատկապես բուսաբուծության և անասնաբուծության ոլորտում կիրառվող ոչ կայուն գործելակերպի հետ:

Հայաստանի տարածքի շուրջ կեսը գտնվում է անապատացման գործընթացում, իսկ մոտ մեկ քառորդը՝ անապատացման վտանգի տակ: Հողի էրոզիայի են հանգեցնում անթրոպոգեն մի շարք գործոններ (խոտհարքների ու արոտավայրերի սխալ կառավարումը, գյուղատնտեսական տեխնիկայի պատճառով առանձին դաշտերի գերբեռնվածությունը, վարի և ցանքսի գործընթացների խախտումը, ոռոգման համակարգի անբավարար վիճակը, ցանքաշրջանառության բացակայությունը, միակողմանի պարարտացումը, ծառահատումները և այլն): Արդյունքում՝ ներկայում գյուղատնտեսական նշանակության հողերի հազարավոր հեկտարներ ենթակա են բարելավման:

Ենթակառուցվածքների մաշվածության և ոռոգման ջրի անարդյունավետ կառավարման պատճառով ոռոգման ջրի կեսից ավելին կորչում է ոռոգման համակարգում և չի հասնում դաշտ, իսկ մյուս կեսը գյուղական տնտեսությունների կողմից անարդյունավետ է օգտագործվում: Ջրի անարդյունավետ օգտագործման վրա հատկապես ազդում է ձկնաբուծությունը, որը մեծ քանակությամբ ստորերկրյա քաղցրահամ ջրային ռեսուրսներ է պահանջում: Արարատյան դաշտավայրում,

որտեղ կենտրոնացած են ձկնաբուծարանների զգալի մասը, ջուրը չի վերամշակվում և օգտագործվում է միայն մեկ անգամ՝ սպառելով ստորգետնյա թարմ ջրի մեծ պաշարներ:

* * *

Այսպիսով՝ գյուղական՝ շարունակաբար սպասելի կեցության ու արդի մրցակցային կառուցվածքների դիտարկելի հակասություններն ու գյուղական արդյունավետ կեցության համար անհրաժեշտ մի շարք բնութագրերի արձանագրված կորուստը լավագույնս ախտորոշում են հայաստանյան ներկայիս գյուղի, գյուղական ինքնության և գյուղատնտեսության, կամ որ նույն է՝ գյուղականության ճգնաժամը: Թերևս ճգնաժամի խրոնիկ բնույթը բարդացնում է այն հաղթահարման լուծումների մշակումը, բայց և այնպես մի շարք ուղղություններով աշխատանքը գյուղի և/կամ գյուղականության նորովի իմաստավորման հնարավորություններ կարող է ստեղծել, որտեղ կենտրոնական են ինչպես քաղաքականություն մշակողների և կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության և կրթական հաստատությունների նպատակային գործունեությունը:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

• Ձևավորել գյուղական բնակավայրում իր կեցությունը, ինչպես նաև ագրարային ռեսուրսների ուղղակի և անուղղղակի կիրառմամբ տնտեսվարումը կազմակերպող սոցիալական սուբյեկտները միարժեք փոխբացառող գործառնական տիպաբանություն, առանց որի վերադրվում և հոմանիշանում են ոլորտում արդյունավետ քաղաքականության, դրա հանրային կառավարման օրենսդրական հենքի մշակման համար հույժ կարևոր այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են գյուղաբնակը, գյուղացին, գյուղատնտեսը, ֆերմերը և այլն:

• Հանրային քաղաքականության կիզակետում ունենալով ներկայիս հայաստանյան գյուղի, գյուղացիության հեռանկարային, արդյունավետ առաջընթացն ու բազմակողմանի զարգացումը՝ առաջարկել գյուղացու խոցելիության բազմաչափ համադրական ինդեքս, որի հիմնական բաղադրիչներից են բարեկեցությունը, բնակավայրը, գյուղատնտեսության կազմակերպման հնարավորությունը, գյուղատնտեսական զբաղվածության ոլորտը, արտադրատնտեսական շրջանառությանը ծավալը, իրացման շուկայի հասանելիությունը, գյուղատնտեսության արդիականացումը, ընտանիքների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը և այլն:

• Համադրական ինդեքսի օգնությամբ քարտեզագրել Հայաստանյան գյուղացիության բազմաչափ խոցելիությունը, վերջինիս առանձին բաղադրիչները, դրանց նպատակամետ համադրությունները՝ դուրս քաշելով հեռանկարում հատկապես խոցելի խմբերն ու իրավիճակները:

• Հաշվի առնելով գյուղացու ուրույն խոցելիությունը և իր արդյունավետ գործունեության օրհասական կարևորությունը Հայաստանի շարունակական անվտանգության, բարեկեցության և անկորուստ զարգացման համար՝ ձևավորել վերջինիս սեփական իրավական սուբյեկտություն՝ տալով նրան առանձին կարգավիճակ:

• Ապահովել գյուղացու իրավական սուբյեկտության՝ կարգավիճակի գործառնականություն հատկապես արտադրատնտեսական, ֆինասատնտեսական, առևտրային հարաբերություններում:

• Ստեղծել գյուղական բնակավայրերի, տեղական ենթակառուցվածքների, սոցիալական սպասարկման կառույցների, գյուղատնտեսական ռեսուրսների և մեխանիզմների վերաբերյալ տվյալների, տեղացիների կարիքների հավաքագրման, մշտադիտարկման և/կամ վիճակագրական հաշվառման ներքևից վերև տրամաբանությամբ գործող համակարգ՝ հարթակ, որի կարևորագույն կազմակերպչական հանգույցն է տեղական ինքնակառավարման մարմինը:

• Ստեղծել տեղական ինքնակառավարման մարմինների, պատասխանատու ներկայացուցիչների հետ խնդրահեն, գործուն հաղորդակցական համակարգ:

• Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ոլորտում գործող համապատասխան կառույցների և կազմակերպությունների ֆունկցիոնալ համադրմամբ ստեղծել գյուղատնտեսական տեղեկատվության, խորհրդատվության, իրավիճակային միջամտության հասանելի, արդյունավետ ցանցային համակարգ:

• Կայուն, անկորուստ գյուղատնտեսության նպատակներից ելնելով՝ ստեղծել գյուղացիների՝ գյուղատնտեսների մասնագիտական վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված ցկյանս կրթության գործուն համակարգ:

• Ի միջի այլոց, վերը բերված կրթական հնարավորությունների և համակարգի միջոցով հնարավորություն ստեղծել գյուղացի կնոջ սուբյեկտության բարձրացման և առավել ընդարձակ, արդյունավետ և հատկապես նրա անցնցում ներառման համար:

• Ստեղծել գյուղատնտեսության արդյունավետ գործառման, հեռանկարային զարգացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական և հարակից ռեսուրսների հընթացս վիճակագրական հաշվառման, մշտադիտարկման համակարգ, համապատասխան ու բազմաչափ տվյալադարաններ:

• Գյուղացու, գյուղական կյանքի սիմվոլիկ կարգավիճակը ցանկալիին հասցնելու, ինչպես նաև տեղին կապվածության ներուժը բարձրացնելու նպատակով գյուղերում ստեղծել ենթակառուցվածքներ, ինչպես օրինակ՝ մշակութային տուն, սպորտային տարածություններ, և կազմակերպել մշակութային միջոցառումներ:

Ներկայացված առաջարկների փորձնական իրագործման համար անհրաժեշտ է մի շարք կարճաժամկետ պիլոտային ծրագրեր ու միջոցառումներ ձեռնարկել:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

• Armenia: Remarks by Commissioner Oliver Varhelyi at the press point with Acting Deputy Prime Minister Mher Grigoryan. (2021, July 9). Ec.Europa.Eu. https://ec.europa.eu/commission/commissioners/2019-2024/varhelyi/announcements/armenia-remarks-commissioner-oliver-varhelyi-press-point-acting-deputy-prime-minister-mher-grigoryan_en
• Carstairs, V., & Morris, R. (1990). Deprivation and health in Scotland. Health Bulletin, 48(4), 162–175.
• Chigbu, U. E. (2013). Rurality as a choice: Towards ruralising rural areas in sub-Saharan African countries. Development Southern Africa, 30(6), 812–825.
• Core Diagnostic of the Social Protection System in Armenia. (2020). UNICEF and the World Bank. https://www.unicef.org/armenia/media/9286/file/Core%20Diagnostic%20of%20the%20Social%20Protection%20System%20in%20Armenia.pdf
• Cox, J. (1995). Rural general practice in the United Kingdom. Occasional Paper (Royal College of General Practitioners), 71, v.
• Delanty, G., & Isin, E. F. (2003). Handbook of historical sociology. Sage.
• Fourth National Climate Assessment. (2017). https://nca2018.globalchange.gov/
• Hague, C., & Jenkins, P. (2005). Place identity, participation and planning (Vol. 7). Psychology Press.
• Haynes, R. M., & Bentham, C. G. (1982). The effects of accessibility on general practitioner consultations, out-patient attendances and in-patient admissions in Norfolk, England. Social Science & Medicine, 16(5), 561–569.
• Household's Integrated Living Conditions Survey anonymised microdata database (by households). (2005). Statistical Committee of RA. https://www.armstat.am/en/?nid=205
• Huntington, S. P. (1993). The Clash of Civilizations? Foreign Affairs, 72(3), 22. https://doi.org/10.2307/20045621
• Kay, R., Shubin, S., & Thelen, T. (2012). Rural realities in the post-socialist space. Journal of Rural Studies, 28(2), 55.
• Phillimore, P., & Reading, R. (1992). A rural advantage? Urban—Rural health differences in Northern England. Journal of Public Health, 14(3), 290–299.
• Ritchie, J., Bone, M. R., & Jacoby, A. (1981). Access to primary health care: An enquiry carried out on behalf of the United Kingdom Health Departments. HM Stationery Office.
• The European Union Green Agriculture Initiative in Armenia project officially launched. (2020, March 4). https://www.undp.org/armenia/press-releases/european-union-green-agriculture-initiative-armenia-project-officially-launched
• Tönnies, F., & Harris, J. (2001). Community and civil society. Cambridge Univ Pr.

• Williams, F. L. R., & Lloyd, O. L. (1990). Mortality at early ages in Scottish communities, 1959–83: Geographical distributions and associations with selected socioeconomic indices. Public Health, 104(4), 227–237.
• Вермишян, А. Р. (2013). Измененные формы взаимоотношений в современном армянском селе. Социология и Право, 1 (18), 22–27.
• Ագրարային քաղաքականություն. (2014). ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. http://old.minagro.am/գյուղատնտեսությունը-Հայաստանում/ագրարային-քաղաքականություն/
• Մկրտիչյան Ա.Ե., Շահնազարյան Գ.Ն., Սահակյան Ա.Կ., Վարտիկյան Ա.Ռ., & Հ.Ռ. (2014). Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում. ԵՊՀ հրատ.
• Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020 թթ. (2021). ՀՀ վիճակագրական կոմիտե. https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf
• ԱնանունԴ. (1915). Հայության հավաքական զորությունը. Մշակ, 3–4.
• Առողջապահական համակարգ, հիվանդացություն և բուժսպասարկում (ՀՀ Սոցիալական վիճակը 2020թ). (2020). ՀՀ վիճակագրական կոմիտե. առողջապահական համակարգ, հիվանդացություն և բուժսպասարկում
• Ավետիսյան Ս. և ուրիշներ. (2017). Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում. «Տնտեսագետ» հրատ. https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S._Avetisyan_34.pdf
• Գաբրիելյան Մ. (2001). Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն). ՀՀ ԳԱԱ «Գիտություն».
• Գաբրիելյան Մ. (2012). Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման սոցիալական և մշակութային բաղադրիչները. Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը, հողերի խոշորացման և կոոպերացիայի հիմնախնդիրները. Բաց հասարակության հիմնադրամ. shorturl.at/flsRS
• Գենդերը, գյուղատնտեսությունը և գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում (Երկիրը Գենդերային գնահատում սերիա). (2017). Միավորված Ազգերի Կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն. https://www.fao.org/publications/card/en/c/6dc0c9d4-06ea-46df-9c93-277021bfef0e/
• Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր. Տարեկան հաշվետվություն. (2020). ՀՀ էկոնոմիկայի նախարարություն. https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf
• Գյուղատնտեսություն. (2021). In Հայաստանի վիճակագրական տարեգիրք. ՀՀ վիճակագրական կոմիտե. https://www.armstat.am/file/doc/99526883.pdf

• Գյուղացիների 10 տոկոսը պետք է զբաղվի գյուղատնտեսությամբ. Նախարարը կարևորեց ոչ գյուղատնտեսական աշխատանքների ստեղծումը գյուղում. (2021). Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի Նախարարություն | Home.
https://mineconomy.am/page/1751
• Հաճախ տրվող հարցեր. Հայաստանի համայնքներում վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ. (2022). ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. http://www.mtad.am/files/docs/1828.pdf
• Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ. (2011). ՀՀ կառավարություն.
https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/qax44-18_1.pdf
• Հայաստանը թվերով. Հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներ. (2021). ՀՀ վիճակագրական կոմիտե. https://armstat.am/file/article/armenia_2021_2-svod.pdf
• «Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտության արդյունքների ամփոփում. (2015). shorturl.at/qwzBZ
• Հայաստանի կանայք և տղամարդիկ. (2019). ՀՀ վիճակագրական կոմիտե.
https://armstat.am/file/article/gender-2019.pdf
• Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի փետրվարի 8-Ի N65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 2020 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին. (2021). ՀՀ կառավարություն. https://www.gov.am/files/docs/4520.pdf
• Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր. (2015). ՀՀ կառավարություն.
http://env.am/storage/files/2015-gac_1.pdf
• Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում իրավական եվ ինստիտուցիոնալ դաշտ. (2020). Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի կողմից. http://nature-ic.am/Content/announcements/12692/NAP_Agriculture assessment report_arm_FINAL.pdf
• Հաստատել Հայաստանի Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին. (2021). Իրավական Ակտերի Նախագծերի Հրապարակման Միասնական Կայք. https://www.e-draft.am/projects/3000/justification
• ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության զարգացման 2020-2030թթ. Ռազմավարության նախագիծ. (2019). ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն.
https://www.e-draft.am/files/project_doc/1/15700894623743.docx

• ՀՀ կառավարության ծրագիր. (2019). ՀՀ կառավարություն.
http://parliament.am/draft_docs7/K-010.pdf
• ՀՀ կառավարություն որոշում «Ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ներառված ներմուծվող ավտոմոբիլային բենզինի, դիզելային վառելիքի, պարենային ցորենի, շաքարավազի, բուսական յուղի և դրանց արտադրության համար անհրաժեշտ ներմուծվող հումքի չնվազող պաշարների հաշվառման և ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների պահպանում իրականացնող կազմակերպությունների կողմից՝ իրենց կուտակված ռազմավարական պաշարներ հանդիսացող ապրանքների մնացորդի և շարժի վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևն ու լրացման կարգը, կուտակման ժամանակացույցը և նվազագույն ծավալները սահմանելու մասին, ՀՀ կառավարություն ____ (2020). https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146251
• ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. (2022). http://mtad.am/hy/
• ՀՀ օրենքը գյուղատնտեսական կոոպերատիվների մասին, ՀՀ Ազգային ժողով ____ (2015). https://www.arlis.am/documentview.aspx?docID=102882
• ՀՀ օրենքը նյութական պահուստի մասին, ՀՀ Ազգային Ժողով ____ (2020). https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=140391
• ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին, ՀՀ Ազգային ժողով ____ (2002). https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113
• Հողային հաշվեկշիռ. (2021). ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն. http://www.mnp.am/shrjaka-mijavayr/hoghayin-hashvekshir
• Մկրտչյան Ա. (2016). Գյուղացիական ինքնության հիմնախնդիրը միգրացիայի համատեքստում. «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2(20), 28–35.
• Նախադպրոցական հաստատությունների գործունեություն (ՀՀ Սոցիալական Վիճակը 2020թ). (2020). ՀՀ վիճակագրական կոմիտե. https://www.armstat.am/file/article/soc_vich_2020_1.pdf
• Նպաստառուների թվաքանակ և նպաստների միջին չափեր (ՀՀ Սոցիալական Վիճակը 2020թ). (2020). ՀՀ վիճակագրական կոմիտե. https://www.armstat.am/file/article/soc_vich_2020_13.pdf
• Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին. (2021). ՀՀ վիճակագրական կոմիտե. https://armstat.am/am/?nid=82&id=2420
• Պարենային ապահովություն և աղքատություն. (2021). ՀՀ վիճակագրական կոմիտե. https://www.armstat.am/am/?nid=82&id=2437
• Ջրօգտագործում և ջրհեռացում. (2021). In Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին (Vol. 9). ՀՀ վիճակագրական կոմիտե

• Վերմիշյան Հ.Ռ. (2012). Գյուղը և ազգային ինքնությունը սոցիալական փոփոխությունների հեռանկարում. «Բանբեր Երևանի Համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 3(2), 3–9.
• Սահմանների որոշման գործընթացը չի կարող խաթարել սահմանային բնակավայրերի բնակիչների բնականոն կյանքը, նրանց ավանդական ապրելակերպը, չի կարող խախտել նրանց իրավունքները. Մարդու իրավունքների պաշտպան. (2021, February 28). https://www.ombuds.am/am/site/ViewNews/1551
• Վարչատարածքային բարեփոխումներ. Խոշորացված համայնքներ. (2022, July 2). ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն. http://mtad.am/hy/18hamynqner/
• Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (Գիրք 11). (2018). ՀՖՄ.

ՀԱՎԵԼՎԱԾ



Հավելյալ նյութերի հնարավոր է ծանոթանալ PDF կամ ZIP ձևաչափով՝ QR (երկչափ շտրիխ) կոդերի միջոցով:

Բովանդակությունը՝

- *Ստանդարտացված հարցազրույցի հարցաթերթ*
- *Որակական հարցազրույցի հարցաշար*
- *Փորձագիտական հարցազրույցի հարցաշար*
- *Տեղեկատվական թերթիկ*

Առցանց ընթերցելու (PDF)

https://southcaucasus.fes.de/fileadmin/Publications/2022/Rural_Crisis_in_Armenia_Appendices.pdf

Ներբեռնելու համար (ZIP)

https://southcaucasus.fes.de/fileadmin/Publications/2022/Rural_Crisis_in_Armenia_2022.zip

ORGANIZATION (1933-1936)

XX դարի մեծագույն գեղանկարիչ Արշիլ Գորկու 1930-ականների կեսերի գեղանկարչության վրա նկատելի ազդեցություն են ունեցել ինչպես Պիկասոյի սինթետիկ կուբիզմը, այնպես էլ Ժոան Միրոյի օրգանական պատկերները:

Organization *կտավը Գորկու գործունեության այդ շրջանի վառ պատկերումն է: Կտավը բացահայտում է այս նկարիչների կողմից առաջ քաշված բազմաթիվ հասկացություններ՝ հարթություն, ձևի կրճատում, գույների դասավորություն, անգիտակցականից բխող պատկերներ: Չնայած այս ամենին՝ Գորկին, իր կտավները ստեղծելիս, ուղղակիորեն ներշնչվում էր նաև բնությունից և իրականությունից:*